



ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ



ՆԱԽԱԲԱՆ

Ավագ դպրոցի սիրելի՛ պատանիներ և աղջիկներ,

10-րդ և 11-րդ դասարաններում Դուք կշարունակեք ուսումնասիրել «Նախնական գինվորական պատրաստության» հիմունքները:

Այդ առարկան ուսումնասիրելուց և յուրացնելուց հետո Դուք լիովին պատրաստ կլինեք ծառայելու մեր ազգային բանակում: Իսկ նրանք, ովքեր կորոշեն իրենց նվիրել գինվորական ծառայությանը՝ դառնալ սպաներ, պետք է իմանան, որ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատությունները պատրաստում են հետևյալ գինվորական մասնագիտություններով սպաների.



Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ

1. ՀՀ պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ՝ մոտոհրաձիգներ, հրետանավորներ:

Ուսման տևողությունը՝ 4 տարի:

2. Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետ՝ բուժական գործ ցամաքային զորքերում:

3. Մարշալ Ա.Խանփերյանցի անվան ռազմավիագիտ ինստիտուտ՝ օդաչուներ և ինժեներներ:

Ուսման տևողությունը՝ 4 տարի:

4. Մեկ տասնյակից ավելի արտասահմանյան ռազմաուսումնական հաստատություններ՝ ամենաբազմազան մասնագիտություններով:

Ուսման տևողությունը՝ 5 տարի:

Ովքեր ցանկություն ունեն սովորել ռազմաուսումնական հաստատություններում, դպրոցն ավարտելուց հետո կարող են տարածքային զինկոմիսարիատների միջոցով դիմել այդ հաստատություններ:

Ռազմական ուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիները համարվում են պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներ:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն պարտադիր զինվորական ծառայության ժամկետը ռազմաուսումնական հաստատություններ ավարտած սպաների համար սահմանվում է 20 տարի՝ ներառյալ ուսման տարիները:



Մարշալ Ա. Խանփերյանի անվան ռազմավիագիտական ինստիտուտ

Այո, կա այդպիսի մասնագիտություն՝ Հայրենիքի պաշտպան: Այն հարկ եղած դեպքում պահանջում է սեփական կյանքի նվիրում Հայրենիքին: Միշտ պետք է հիշել՝ «Ոչ իմացյալ մահը մահ է, իմացյալ մահը՝ անմահություն», ահա ինչու Հայոց եկեղեցին Հայրենիքի համար ընկածներին դասում է սրբերի շարքը:

Յուրաքանչյուր մասնագիտության պետք է տիրապետել գերազանց: Բացառություն չի կազմում և ռազմական գործը:

Ուրեմն, շարունակե՛նք «Նախնական զինվորական պատրաստություն» դասընթացի հետագա ուսումնասիրումը:

ԷՋԵՐ ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Ֆիդայական շարժում

Ֆիդայական շարժումը սկզբնավորվել է XIX դարի վերջերին, Արևմտյան Հայաստանում, սուլթանական Թուրքիայի հայահալած բռնապետության դեմ մղվող պայքարում: «Ֆիդայի» արաբերեն նշանակում է զոհ, նահատակ: Սկզբնական շրջանում շարժումը կրում էր առանձին հարստահարողների դեմ ընդվզման, բողոքի արտահայտության բնույթ, որն աստիճանաբար վերածվեց ազատագրական շարժման: Ֆիդայիները խիզախ, անձնագոհ մարդիկ էին, օժտված բարոյական բարձր հատկանիշներով և պատրաստ՝ իրենց կյանքը նվիրելու հանուն ազգի, հանուն հայրենիքի: Ֆիդայիները գործել են որոշակի սկզբունքներով, սկզբունքներ, որոնք հետագայում ամփոփվել են գորավար Անդրանիկ Օզանյանի «Մարտական հրահանգներ» աշխատության մեջ: Ֆիդայական խմբերին անդամագրվելու պատրաստակամություն հայտնող յուրաքանչյուր անձ պետք է **երդում տար՝**

- կյանքը զոհել հայրենիքի և ազգի համար,
- լինել գաղտնապահ, ճշտախոս, բարոյապես բարձր,
- մաքուր պահել զենքը, կրակել անվրեպ,
- ոգելից խմիչքներ չօգտագործել, չհայհոյել, չվիրավորել միմյանց,
- բավարարվել համեստ սննդով,
- հարգանքով վերաբերվել աշխատավոր ժողովրդին՝ անկախ ազգությունից,
- հաղթել թվական գերակշռություն ունեցող թշնամուն:

Ֆիդայիների բարոյական այս սկզբունքներով են գործել նաև Գարեգին Նժդեհը՝ թուրք-բաթարների դեմ մղված պայքարում և Արցախյան ազատամարտի նվիրյալները՝ ինքնապաշտպանության և ազգային-ազատագրության համար թուրք-ազերիների դեմ մահու և կենաց կռիվների ժամանակ:

Ֆիդայական շարժման կարկառուն դեմքերից էին Արաբոն, Հրայր Դժոխքը, Աղբյուր Սերոբը, Գևորգ Չավուշը, Մուրադ Մեբաստացին, Սևքարեցի Մաքոն, Անդրանիկ Օզանյանը և շատ ուրիշներ,

որոնք իրենց խմբերով անսպասելիորեն հայտնվում էին այնտեղ, որտեղ ժողովրդի վիճակը օրհասական էր դառնում: Տղամարդկանց օգնում էին նաև կանայք: Ֆիդայիների շարքում հայտնի են Աննա մայրիկի (Մասունի Ահրոնք գյուղից) և Մոսե մայրիկի (Աղբյուր Սերոբի կինը) անունները:

Սկսած 19-րդ դարի 80-ական-



Աղբյուր Սերոբ



Գևորգ Չավուշ

ներից ֆիդայական զինված խմբերի կարելի էր տեսնել Մուշում և Մասունում, Խնուսում և Կարինում, Երզնկայում, Մեբաստիայում և այլուր: Սակայն պայքարն անհավասար էր, ֆիդայական փոքր խմբերը, թեկուզ զինված ու անձնագոհ, այ-



Արամ



Մուրադ Մեքաստացի

նուամենայնիվ, անգոր էին թուրքական կանոնավոր զորքերի ու քրդական խուժանի դեմ: Ուստի, պայքարին զուգընթաց, նրանք երբեմն դիմում էին հուսահատ քայլերի, աշխատելով եվրոպական երկրների ուշադրությունը գրավել արևմտահայության տառապանքների և հայկական հարցի վրա: Այդպիսի մի դեպք էր 1896թ. օգոստոսի 14-ի «Բանկ Օտոմանի» օպերացիան: 31 հայ

նվիրյալներ Բաբկեն Սյունու և Արմեն Գարոյի գլխավորությամբ գրավեցին Օսմանյան Թուրքիայի ամենահզոր բանկը: Նրանց նպատակը կողոպուտը չէր. նրանք պահանջում էին իրականացնել հայկական մահաճգնեղում ծրագրված բարենորոգումները, հակառակ դեպքում կայաթեցնեն բանկը: Դեպքին միջամտած եվրոպական երկրների դեսպանների անունից ռուսական դեսպանությունը խոստացավ դիմել օսմանյան կառավարությանը՝ արագացնելու բարենորոգումների գործընթացը, ինչպես նաև ապահովել բանկից նրանց անվնաս հեռանալը: Թուրքական ոստիկանների հետ 13 ժամ տևած զինված ընդհարումից հետո հայ քաջորդիները թողեցին բանկը և ֆրանսիական նավով հեռացան արտասահման:

Ֆիդայիներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Սասունի 1894, 1904 և 1915 թվականների ինքնապաշտպանական մարտերին՝ գլխավորելով ժողովրդի պայքարը: Այդ մարտերի ժամանակ իրենց կազմակերպչական ունակություններով և անձնական քաջությամբ աչքի ընկան Հրայր Դժոխքը, Գևորգ Չավուշը, Անդրանիկը, Աննա մայրիկը իր տղաներով, Սոսե մայրիկը և շատ ուրիշներ:

Ֆիդայական պայքարի փայլուն էջերից են Առաքելոց վանքի կռիվները: 1901թ. նոյեմբերին Անդրանիկի և Գևորգ Չավուշի գլխավորությամբ 37 ֆիդայի ամրանում են Առաքելոց վանքում: Նրանց օգնելու համար Մշո դաշտից վանք են գալիս օգնական ուժեր: 800 մարդուց բաղկացած թուրքական ջոկատը և թալանի ակնկալիքով տարված քրդական խուժանը շուրջ մեկ ամիս գրոհում են վանքը, բայց անօգուտ: Թուրքերը պահանջում են հանձնվել և օգտվել ներման հնարավորությունից: Անդրանիկը մերժում է, առաջարկելով ազատ արձակել քաղբանտարկյալներին: Հայտարարվում է զինադադար, որի ընթացքում ֆիդայիները գաղտնի հեռանում են վանքից:

Ֆիդայական շարժումը թեև չվերածվեց համահայկական պայքարի և մի կենտրոնի կողմից կազմակերպված ազգային-ազատագրական շարժման, սակայն իր մնայուն հետքը թողեց հետագա պայքարի վրա: Շատ ֆիդայիներ հետագայում ընդգրկվեցին ազգային կամավորական խմբերում ու լեգեոններում՝ պայքարելով հայ ժողովրդի անկախության ու ազատության համար:



Հիշի՛ր

1. Ֆիդայիներին նվիրված երգերը, հավաքի՛ր դրանք, ՆԶՊ, պատմության ու գրականության դասատուների ղեկավարությամբ և օգնությամբ կազմակերպե՛ք դրանց ուսուցումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է սկզբնավորվել ֆիդայական շարժումը, ի՞նչ նպատակով:
2. ԹՎի՛ր նշանավոր ֆիդայիների անունները, ուսումնական ծրագրից դուրս ի՞նչ գիտես նրանց մասին:
3. Անգիր սովորի՛ր ֆիդայական խմբերին անդամագրվելու կանոնները:
4. Ի՞նչ նպատակ էր հետապնդում «Բանկ Օտոմանի» օպերացիան: Ինչպե՞ս ավարտվեց այն:
5. Ի՞նչ տեղի ունեցավ Առաքելոց վանքում, ինչո՞վ ավարտվեց այն:

Կամավորական շարժում

1914 թվականի օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Կովկասում ռազմական գործողությունները սկիզբ առան հոկտեմբերի 30-ին: Կովկասյան ռազմաճակատն ուներ 720 կմ երկարություն և ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճ: Թուրքերը այս ճակատում կենտրոնացրել էին 300 հազար, իսկ ռուսները՝ 200 հազար զորք: Թուրքական բանակի գլխավոր հրամանատարն էր Հայոց մեծ եղեռնի կազմակերպիչներից մեկը՝ Էնվեր փաշան, որի պլանների մեջ մտնում էր իրականացնել պանթուրքիստական հիմնական ծրագիրը՝ ստեղծել Մեծ Թուրանի պետություն, որը պետք է ձգվեր Բալկանյան թերակղզուց մինչև Չինաստան և Արևելյան Սիբիր: Ցարական կառավարությունը, հաշվի առնելով հայերի կողմից տեղանքի լավ իմացությունը և Ռուսաստանի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը, 1914 թվականի հուլիսի 23-ին որոշում կայացրեց ռուսական բանակը համալրել հայկական կամավորական ջոկատներով: Սկզբնական շրջանում կազմավորվեց 4 հայկական զորաջոկատ.

1-ինը **Անդրանիկ Օզանյանի** գլխավորությամբ՝ 1200 կամավորով,

2-րդը **Դրաստամատ Կանայանի /Դրո/** գլխավորությամբ՝ 400 կամավորով,

3-րդը **Համազասպ Սրվանձտյանի** գլխավորությամբ՝ 400 կամավորով,

4-րդը՝ **Քեռու /Արշակ Գաֆավյան/** գլխավորությամբ՝ 400 կամավորով:

Հետագայում ստեղծվեցին 5-րդ ջոկատը՝ **Արշակ Ջանփոլադյանի**, 6-րդը՝ **Գրի-**

գոր Ավշարյանի գլխավորու-

թյամբ, ապա նրան

փոխարինեց **Հայկ Բժշկյանը**

/Գայը/, 7-րդը՝ **Հովսեփ Արդու-**

թյանի գլխավորությամբ: 1915

թվականին հայկական զորա-

ջոկատներում կամավորական-

ների ընդհանուր թվաքանակը

հասավ 10000-ի: 1915 թվակա-

նին կամավորական մի քանի

ջոկատ միավորվեցին մեկ խըմ-

բավորման մեջ՝ Վարդան Մեհ-

րաբյանի /Խանասորի

Վարդան/ հրամանատարու-




Անդրանիկն իր զինակիցներով

թյամբ: Հայկական գնդերի հիմնական խնդիրների մեջ մտնում էին հետախուզական գործողությունները թշնամու թիկունքում և ինքնապաշտպանության կազմակերպումը հայկական բնակավայրերում:

Կամավորական ջոկատները ակտիվորեն մասնակցել են Կովկասյան ճակատի բոլոր խոշոր ճակատամարտերին: Այսպես 1-ին կամավորական ջոկատը մասնակցել է Դիլմանի ճակատամարտին, որտեղ ջախջախվեց Խալիլ բեյի 12000-անոց բանակը, 2-րդ ջոկատը մասնակցել է Բաշկալայի ճակատամարտին, որից հետո Դրաստամատ Կանայանը անձամբ ցար Նիկոլայ II ձեռքից ստացավ Սուրբ Գեորգիի շքանշանը: 3-րդ ջոկատը մասնակցել է Սարիղամիշի ճակատամարտին, որտեղ Էնվեր փաշայի 120000-անոց բանակը տվեց 70000 զոհ, 4-րդ ջոկատը մասնակցել է Բաղեշի ճակատամարտին: Առանձնապես պետք է նշել Դատվանի ճակատամարտը, որտեղ հայկական գնդերը միայնակ ջախջախել են թուրքական զորաբանակը: Հետագայում կամավորական ջոկատների ընդհանուր թվաքանակը հասավ 25000 զինվորի: Կամավորական գնդերի շնորհիվ էր, որ կոտորածից փրկված հայությունը տեղափոխվում էր ապահով տարածքներ:



Քեռի, Համազասպ (կանգնած), Վարդան



Հայտնի է, որ կոտորածից փրկված հայությունը տեղափոխվում էր ապահով տարածքներ:

Հայտնի է, որ ցարական Ռուսաստանի ծրագրերի մեջ չէր մտնում Արևմտյան Հայաստանին ինքնորոշման իրավունք տալը: Այդ պատճառով էլ հայկական կամավորական ջոկատները ռուսական բանակի չհիմնավորված նահանջի հրամաններին չէին ենթարկվում, քանի որ չէին կարող անպաշտպան թողնել հայ ազգաբնակչությանը:

Հետևանքը եղավ այն, որ 1915 թվականին ցարական կառավարության որոշմամբ կամավորական ջոկատները կազմալուծվեցին և որպես առանձին գումարտակներ մտցվեցին ռուսական կանոնավոր բանակի կազմի մեջ:

Առաջին համաշխարհային պատերազմին հայերը մասնակցություն ունեցան ոչ միայն կովկասյան ռազմաբեմում ռուսական բանակի կազմում, այլ նաև այլ ճակատներում, նաև դաշնակից բանակների կազմում: Առավել հայտնի է Հայկական լեգեոնի կամ Արևելյան լեգեոնի մարտական ուղին:

Համաձայն հայոց ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի և Ֆրանսիայի կառավարության միջև 1916թ. հոկտեմբերի 27-ին կնքված համաձայնագրի, Ֆրանսիական բանակի կազմում ստեղծվում է Հայկական լեգեոն՝ բաղկացած չորս գումարտակից՝ 5000 կամավորականներով: Հայկական լե-



Հայկական (Արևելյան) լեգեոնի զինվորներ

գեոնը պետք է մասնակցեր սիրիա-պաղեստինյան ճակատի մարտական գործողություններին: Այդ մասնակցության փոխարեն Ֆրանսիական կառավարությունը խոստանում էր պատերազմից հետո ինքնավարություն տալ Կիլիկյան Հայաստանին: Հայկական լեգեոնը 1918թ. սեպտեմբերի 19-ին մասնակցելով հռչակավոր Արարայի ճակատամարտին, ճեղքեց թուրքական ճակատի գիծը, գրավեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Ռաֆաթ-Արարա բարձունքը և անցավ թշնամու թիկունք: Հայերի մասին իր շնորհակալության խոսքն է ասել Պաղեստինի ճակատի հրամանատար մարշալ Ալենքին. «Հպարտ եմ հրամանատարությանս տակ Հայկական լեգեոն ունենալ, նրանք կռվեցին քաջորեն և մեծ բաժին ունեն այս ճակատամարտին»:



Ամերիկահայ կամավորներ

Հայկական լեգեոնը հետագայում մասնակցեց Լիբանանի, Սիրիայի և ապա՝ Կիլիկիայի ազատագրմանը: Սակայն պատերազմի ավարտից հետո Ֆրանսիան սկսեց մերձենալ Քեմալական Թուրքիային և 1920 թվականի օգոստոսին լուծարեց

Հայկական լեգեոնը՝ Կիլիկիայի հայերին գրկելով հիմնական ինքնապաշտպանությամբ հնարավորությունից:

Հայ կամավորական ջոկատները թեև այս շրջանում չհասան իրենց բաղձալի նպատակին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրությանը, սակայն կարողացան մոտ 500 հազար հայրենակիցների փրկել թուրքական յաթաղանից: Հետագայում այս կամավորական ուժերը դարձան նորանկախ Հայաստանի ազատության երաշխավորը:

Հարցեր և առաջադրանքներ


1. Ի՞նչ նպատակ էր հետապնդում ցարական կառավարությունը, ստեղծելով հայկական կամավորական ջոկատներ:
2. Թվի՞ր կամավորական ջոկատները, դրանց թվաքանակը:
3. Տարածքներ ազատագրելուց հետո ի՞նչ մարտավարություն էր կիրառում ռուսական բանակը, դրան ինչպե՞ս էին արձագանքում հայկական ջոկատները:
4. Ի՞նչ գիտեք Արևելյան լեգեոնի մասին:

1918 - 1920թթ. Հայաստանի առաջին բանակը, նրա կառուցվածքը և նշանակությունը

Բանակի կառուցվածքը

1917 թվականի նոյեմբերին ձևավորվեց հայկական կորպուսը: Սկզբնական շրջանում ձևավորվեցին 8 հայկական հետևակային գնդեր, 2 հեծելազորային գունդ, 1 հրետանային գունդ և այլ առանձին ստորաբաժանումներ: Կարճ ժամանակ անց հայկական կորպուսի կազմի մեջ ձևավորվեցին 2 հայկական դիվիզիա. 1-ին դիվիզիայի հրամանատար՝ գեներալ-մայոր Մ.Արեշյան, 2-րդի հրամանատար՝ գեներալ-մայոր Մ.Սիլիկյան: Հեծելազորային բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Ն.Դորդանյանը, իսկ հրետանային բրիգադի հրամանատար՝ գնդապետ Կ.Դամազյանը: 1918 թվականին կորպուսի կազմի մեջ մտավ նաև գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ գործող հատուկ դիվիզիան: Կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը, կորպուսի շտաբի պետ՝ գեներալ-մայոր Ե.Վիշինսկին, կորպուսի կոմիսար՝ Դրաստամատ Կանայանը: Կորպուսի կազմի մեջ կային կապի, սանիտարական, պարենավորման, տրանսպորտային և այլ ստորաբաժանումներ, ավիաջոկատ, 36 թնդանոթ, 170 գնդացիր, 15 հեծելավաշտ: Սպաների թիվը հասնում էր 600-ի: Կորպուսի կանոնավոր ստորաբաժանումների կազմը հասնում էր մոտ 17000-ի: Ահա այս ուժերով հայկական կորպուսը կանգնեց հայրենիք ներխուժած թուրքական զերազանցող ուժերի դեմ: Հայկական բանակը ոչ միայն կանգնեցրեց իրեն զերազանցող հակառակորդին, այլ նաև Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Դարաքիլիսայի ճակատամարտերում ձեռք բերված հաջողություններով հիմք դրեց հայոց նոր պետականության սկզբնավորմանը: 1918 թվականի հոկտեմբերին վերջնական տեսք ստացավ զինվորական նախարարության կառույցը: Եվս մեկ անգամ հիշենք Առաջին Հանրապետության զինվորական նախարարներին՝

Հովհաննես Հախվերդյան /1918 հունիս - 1919 մարտ/, Քրիստափոր Արարատյան /1919 մարտ - 1920 ապրիլ/, Ռուբեն Տեր-Մինասյան /1920 ապրիլ - նոյեմբեր/, Դրաստամատ Կանայան /1920 նոյեմբեր - դեկտեմբեր/: 1918 թվականի Բաթումի պայմանագրով պայմանավորված՝ Հայկական կորպուսը ենթարկվում է վերակազմավորման: Կորպուսը վերաձևվում է Առանձին դիվիզիայի: Հայկական Առանձին դիվիզիայի հրամանատար է նշանակվում գեներալ-մայոր Մ.Սիլիկյանը: 1918 թվա-




Բանակի կառուցվածքը 1919թ.

կանին Թուրքիայի՝ Ի համաշխարհային պատերազմում կրած պարտության պատճառով և 1918թ. հայ-վրացական պատերազմի արդյունքում ձեռքբերած ռազմաավարի շնորհիվ հնարավորություն ընձեռվեց մեծացնել հայկական բանակի թվաքանակը: 1919 թվականին մեկ դիվիզիայի փոխարեն ստեղծվեցին 3 հետևակային, 1 հեծելազորային և 1 հրետանային բրիգադ, հետագայում ստեղծվեց ևս 1 բրիգադ՝ կազմավորված հիմնականում կամավորներից, որոնց խնդիրների մեջ մտնում էր պետության ներքին կարգ ու կանոնի պահպանումը, ապստամբ մահմեդական բնակչության խռովության ճնշումը: Բրիգադի հրամանատարն էր Սեպուհը: 1-ին բրիգադի հրամանատար է նշանակվում գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանը, 2-րդինը՝ գեներալ Ա. Հովսեփյանը, 3-րդինը՝ գեներալ Բ. Բաղդասարյանը: 1-ին բրիգադի շտաբը տեղակայված էր Երևանում, 2-րդինը՝ Վաղարշապատում, 3-րդինը՝ Ղարաբիխայում:

Մարտական գործողությունները

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո թուրքական զորքերը նահանջեցին, և վրացական կազմավորումները օգտվելով այն առիթից, որ հայկական ստորաբաժանումները զբաղված էին ճակատի այլ գծերի պահպանմամբ, զբաղեցրին բուն հայկական տարածքներ համարվող Ջավախքը, Բորչալուն, Լոռին: Հայկական կառավարությունը պահանջեց ազատել դրանք:

Վրացիների հրաժարվելուց հետո Հայաստանի կառավարությունը վերջնագիր ներկայացրեց և հիշյալ տարածքները ազատելու նպատակով կազմավորեց էքսպեդիցիոն զորաբանակ՝ 4000 մարդ կազմով, հրամանատար Դրաստամատ Կանայանի գլխավորությամբ: Վերջինս համարվում էր սրընթաց մարտերի և կայծակնային հարվածների մասնագետ: 1918 թվականի դեկտեմբերի 23-ին հայկական զորքերը վերադասավորվելուց հետո հարձակման անցան և շրջապատեցին վրացական բանակի շտաբ - կայանը՝ Սադախուն: Դեկտեմբերի 31-ին հայկական զորքերը համառ մարտերից հետո ջախջախեցին վրացական զորքերի մնացորդները և գրավեցին ռազմավարական նշանակության կայարանը: Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի ճանապարհը բաց էր հայկական զորքերի առջև: Վրացական 8000-անոց զորքերը գլխովին ջախջախվել էին, առգրավվել էր մոտ 20



թնդանոթ, 40 գնդացի, 2 զրահագնացք, 100 վագոն և շոգեքարշ և սպառազինություն, ինչպես նաև վրացական զորաբանակի հրամանատար զորավար Ծուլուկիձեի սպուն-վագոնը (վերջինս մազապուրծ փախավ ճակատային գծից): Դրաստամատ Կանայանի գլխավորած զորաբանակը կարող էր հեշտությամբ առաջ շարժվել, սակայն բրիտանական և ֆրանսիական պետությունների

ներկայացուցիչների միջամտությամբ պատերազմը դադարեցվեց:

1920 թվականին հայկական բանակն արդեն ուներ զգալի սպառազինություն, որի մասին մենք մանրամասն տեղեկություններ ենք ստացել 9-րդ դասարանի դասընթացից:

1920թ. դրությամբ հայկական բանակն արդեն համարվում էր տարածաշրջանում ամենամարտունակ բանակը, քանի որ նրա միջուկը կազմում էին պատերազմի բովով անցած և բավականաչափ փորձ կուտակած կամավորական զոմարտակները, այնուհետև՝ հայկական կորպուսը: Բանակի մարտունակության վրա դրական մեծ ազդեցություն ունեին ոչ միայն լավ սպառազինվածությունը, այլ նաև տաղանդավոր հրամանատարական կազմը: Ահա այն հիմնական գրավակները, որ 2 տարվա պատերազմի ընթացքում հայոց նորանկախ պետությունը կարողացավ ոչ միայն դիմագրավել տարբեր կողմերից իր վրա ագրեսիայի դուրս եկած թշնամական բանակներին, այլ նաև ընդարձակել պետության սահմանները, այն 10000 քառակուսի կիլոմետրից հասցնելով 71000-ի:

Լեռնահայաստանի հերոսամարտը, «Գալախմբերի» մարտավարությունը

1918 - 1921 թվականներին Ձանգեգուրում մղված գոյամարտը, որը կոչվում է նաև Լեռնահայաստանի հերոսամարտ, հայոց պատմության փառապանծ էջերից մեկն է: Հերոսամարտի հիմքում դրված էր սկզբունքային մի հարց՝ արդյոք այդ հայկական տարածաշրջանը մնալու՞ էր հայրենի սահմանների ներսում, որտեղ վեր են խոյանում հազարամյա հայկական պատմամշակութային հուշարձանները, ազատագրական պայքարի արյունոտ ներկված հայոց նախնիների գերեզմանները, թե՞ դա պետք է զավթեին թուրք-թաթարական հրոսակները: Եթե ուշադիր զննենք հիշյալ տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը, կտեսնենք, որ այս պարանոցն իրենից ներկայացնում էր պանթուրքիստական ծրագրի իրականացման հիմնական խոչընդոտող գործոններից մեկը: Ուստի թուրքերը և նրանց կամակատար թուրք-թաթարներն ամեն գնով ձգտում էին տիրանալ այդ տարածաշրջանին, ճանապարհ բացել պանթուրքիստական գաղափարի իրականացման համար: Իսկ այդ ծրագրի իրականացումը մահաբեր հետևանքներ կունենար մեր ազգի և հայրենիքի մնացած մասի համար:


Մինչև 1918 թվականը Սյունիքում ինքնապաշտպանական մարտերը կազմակերպվում էին հիմնականում տեղի աշխարհագորի կողմից: 1918 թվականի հուլիսին Սյունիք եկավ Ջորավար Անդրանիկն իր զորաջոկատով, որի կազմում կային 3000 հետևակային, 700 հեծյալ: Նրանք սպառազինված էին 10 թնդանոթով, գնդացիներով և թեթև զենքով: Անդրանիկի Սյունիք գալը որոշ ժամանակ մեղմացրեց թաթարական արշավանքների հաճախականությունը: Սակայն Անդրանիկը դեպի Շուշի անհաջող արշավանքից հետո թողեց Սյունիքը, եկավ Երևան, իսկ կարճ ժամանակ անց մեկնեց արտասահման:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տեղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար Սյունիք գործուղվեց գնդապետ Արսեն Շահմազյանը, որը, լինելով հմուտ և բանիմաց զինվորական, կարճ ժամանակում հայտարարեց 20 - 22 տարեկան երիտասարդների զորահավաք, տեղերում կազմավորեց կայուն զորաջոկատներ: Ստեղծվեց նաև զինվորական խորհուրդ, շրջաններում նշանակվեցին հրամանատարներ. Սիսիանում՝ Պ. Տեր-Դավթյանի, Տաթևում՝ Խ.Մալինցյանի, Դափանում՝ Հ.Տեր-Պետրոսյանի, Մեղրիում՝ Գ.Շահմազարյանի գլխավորությամբ: Ստեղծվեցին տեղական կառավարման մարմիններ հասարակական կարգը պահպանելու համար՝ միլիցիա: Սյունիքի հայկական զինված ուժերի թվակազմը այդ ժամանակ հասնում էր մոտ 5000-ի:

1919 թվականի մայիսին ազերական զինված խմբերը՝ մոտ 6000 հետևակային և 3000 հեծյալ, 12 թնդանոթով միաժամանակ Նախիջևանի, Շուշիի և Կովսականի ուղղություններով հարձակվեցին Սյունիքի վրա: 1919թ. հոկտեմբերին անհրաժեշտությունից ելնելով, Սյունիքի զինված ուժերի ընդհանուր հրամանատար Արսեն Շահմազյանին փոխարինեց ականավոր զորահրամանատար Գարեգին Նժդեհը /Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյան/, որը, լինելով բազմակողմանի կրթված անձնավորություն, կարողանում էր հմտորեն օգտագործել տեղանքի բնական բոլոր պայմանները և միջոցները՝ լավագույն արդյունքի հասնելու համար: Միաժա-

մանակ ունենալով ամուր կազմակերպչական ջիղ, մա կարողանում էր իր շուրջը համախմբել հայրենիքի պաշտպանության գաղափարներով զինված մարդկանց: Հիմնականում ահա այն ամենը, ինչի մեջ պետք է փնտրել Նժդեհի հաջողությունների բանալին:

Նույն թվականի նոյեմբերի 4-ին Ջաբուղ ավանի մոտ հայկական զինված ստորաբաժանումները, օգտագործելով հանկարծակի հարձակման մարտավարությունը և, միաժամանակ, ճիշտ գնահատելով լեռնային տեղանքի ռազմավարական պայմանները, խաչաձև կրակի տակ զցեցին հակառակորդի հանկարծակիի եկած և կարճ ժամանակում խուճապի մեջ ընկած զինված ստորաբաժանումներին,



Ջանգելուրի հերոսամարտը 1920 - 1921թթ.

ոչնչացրեցին հեծյալ գնդերից մեկը՝ շուրջ 1500 հեծյալ, մոտ 600 հետևակային, առգրավեցին 2 թնդանոթ, 20 գնդացիր և բավականաչափ զինամթերք:

Քաջ գիտակցելով, որ զորքի մարտունակության գործում մեծ նշանակություն ունեն ամուր կարգապահությունը, գաղափարական, բարոյափոխական ու ֆիզիկական դաստիարակությունը, հրամանատարի կեցվածքը, Գ.Նժդեհը հասարա-

կական և քաղաքական գործիչ Շերամի հետ մշակեց ու ստեղծեց տվյալ շրջանի համար համագորային կանոնադրությունների նմանատիպ հանդիսացող «Ձորաշարքային կանոնադրությունը»: Այս կանոնադրությունը 20-րդ դարի հայ ռազմարվեստի պատմության օրենսդրական կարևորագույն փաստաթուղթ է և լավագույն վկայությունը այն բանի, որ Սյունիքում գործել է կանոնավոր բանակ՝ իր բոլոր ծառայություններով, իր ռազմավարական խնդիրներով:



Գարեգին Նժդեհ

Հաշվի առնելով հայկական զինված ուժերի անհամեմատ սահմանափակ լինելը և սպառազինվածությունը, ինչպես նաև տեղանքի նպաստավոր պայմանները, Գարեգին Նժդեհը մարտավարական գործողության այնպիսի ձև, որն իրականացնող հիմնական զինված ստորաբաժանումը համարվում էր վաշտը: Համաձայն այդ մարտավարության, վաշտերը բաժանվելով զինված դիվերսիոն խմբերի, հանկարծակի հարձակմամբ (մասնավորապես գիշերային ժամերին) խուճապ էին գցում թշնամու բանակում, որից հետո հայկական հիմնական զինված ստորաբաժանումները հասցնում էին գլխավոր հարվածը: Այս դիվերսիոն խմբերը կոչվում էին «Գայլախմբեր», իսկ վաշտերը, որոնք գլխավորապես գործում էին Դավիթ-Բեկի զինվորական կարգապահության մեթոդներով, կոչվեցին Դավիթբեկյան վաշտեր: «Գայլախմբերը» հիմնականում զինված էին պայթուցիկ ռումբերով, «Մաուզեր» ատրճանակներով և թեթև այլ զինատեսակներով: Մարտավարական այս գործելաձևը արդարացնում էր իրեն, քանի որ դրան նպաստում էր լեռնային տեղանքը, որը քողարկվող գործողությունների համար լավագույն հնարավորություն էր ստեղծում:

Ի տարբերություն թշնամու գործելաձևի, հայկական գործերում իշխում էին մարտի վարման ասպետական սկզբունքները: Դա պարզորոշ երևում է Նժդեհի հրամաններում: Ահա դրանցից մեկը. «Եղե՛ք անխնա ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղե՛ք կանանց, երեխաների և ծերերի նկատմամբ»: Այստեղ բացի հայ զինվորի մարտական կեցվածքից առկա են նաև նրա մարդասիրական մոտեցումները, որոնք հետագայում դեռ պիտի միջազգային օրենքներով ամրագրվեն: «Գայլախմբերը» մարտական գործողություններին մասնակցելու հետ միաժամանակ զբաղվում էին նաև զենք ու զինամթերք ձեռք բերելով, այսպիսով իրենց դրսևորելով և՛ որպես մարտական գործողությունների անմիջական մասնակիցներ, և՛ որպես սպառազինության մատակարարներ:

Սյունիքում մարտունակ բանակի առկայության և կառավարման համակարգի կայացման մասին է խոսում այն փաստը, որ Պարսից շահը ճանաչում էր Գ.Նժդեհի իշխանությունը և պատրաստ էր նրա հետ պետական մակարդակի հարաբերությունների մեջ մտնել: Գ.Նժդեհի ռազմավարական խնդիրների մեջ էր մտնում նաև Արցախի ազատագրումը: Այդ էր պատճառը, որ 1919 թվականի գարնան վերջին զանգեզուրյան զինված ստորաբաժանումները, նախ միավորվելով Դրաստամատ Կանայանի արշավախմբի հետ, վերացրին թշնամու զինված սեպը Գորիսի Շուռնուխ բնակավայրի մոտակայքում, ապա միասնական ուժերով արշավեցին

Արցախ: Արցախում Դրաստամատ Կանայանը կազմավորեց տեղի օրենսդիր և գործադիր մարմինները և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակվեց Ջանգեզուր-Արցախի ընդհանուր հրամանատար: 1919 թվականի սեպտեմբերի 20-ին Կադնուտ, Ուժանիս, Ագարակ բնակավայրերի մոտ Գ.Նժդեհի ղեկավարած հայկական ստորաբաժանումները հանկարծակի հարձակումներով ջախջախեցին ազերիական եռակի գերազանցող զինված ուժերին, առգրավեցին 2 թնդանոթ, 10 զնդացիր և այլ հարուստ ռազմաավար՝ թշնամուն հետ շարտելով Սյունիքի տարածքից: 1920թ. ապրիլին հայկական զինված ուժերը, մոտ 5000 զինվոր, Արցախի տարածքում ջախջախեցին ազերիական մոտ 10000-անոց զինված ուժերին, վերջնականապես նրանց հետ շարտելով Արցախի տարածքից: Սակայն նույն թվականի ապրիլի 28-ին ազերիական պետության խորհրդայնացումը փոխեց ամբողջ իրավիճակը տարածաշրջանում:

Բոլշևիկյան Ռուսաստանի 11-րդ բանակի 28-րդ դիվիզիայի օգնությամբ ազերիական ուժերը առանց որևէ դժվարության գրավեցին Արցախը, այնուհետև վերջնագիրներ կայացնելով՝ գրավեցին Սիսիանը, Կապանը, Գորիսը: Հայկական ուժերը, ամրանալով անառիկ լեռնային մասերում, անցան ինքնապաշտպանության:

Հայերն իրենց հիմնական ուժերը կենտրոնացրել էին Կապանի տարածքում գտնվող Խուստուփ լեռան վրա, որը հանդիսանում էր նաև յուրահատուկ զինվորական կայանատեղի: Այստեղ Նժդեհը ստեղծեց Դավիթբեկյան ուխտերը «Հանուն հայրենիքի՝ դավիթբեկաբար» նշանաբանով: Այս ուխտերի նպատակը ոչ միայն զորքի, այլ նաև բնակչության գաղափարական և բարոյահոգեբանական վիճակի բարելավումն էր: Մոտ երեք ամիս տևող գաղափարական աշխատանքից հետո 1920 թվականի սեպտեմբերի 1-ին Գ. Նժդեհի գլխավորությամբ հայկական զինված ուժերը Ջևայի ճակատամարտում ջախջախեցին ազերի-բոլշևիկյան զինված ուժերին, գլխովին ոչնչացնելով ռուսական 84-րդ բրիգադը: Արդեն հոկտեմբեր ամսին ազատագրվեց Կապան քաղաքը, որտեղ բնակչությունը ջերմորեն դիմավորեց հայկական զինյալներին: Նույն հոկտեմբերի 14-ին Պ.Տեր-Դավթյանի զինյալ ստորաբաժանումներն առանց լուրջ մարտերի ազատագրեցին Սիսիանը: 1920 թվականի հոկտեմբերի 24 - 28-ը ընկած շրջանում հայկական զինված ստորաբաժանումները բնակչության աջակցությամբ ազատագրեցին Գորիս քաղաքը: Փաստորեն ողջ Սյունիքը ազատագրված էր: Այս մարտերի ընթացքում թշնամին կորցրեց մոտ 5000 սպանված, 1600 զերի, 4 թնդանոթ, 67 զնդացիր:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո 1921 թվականի ապրիլի 2-ին Տաթևի վանքում Ջանգեզուրը հռչակվեց անկախ հանրապետություն՝ «Լեռնահայաստանի Հանրապետություն» անվամբ. վարչապետ նշանակվեց Սի-



Լեռնահայաստանի զինանշանը

մոն Վրացյանը, սպարապետ՝ **Գարեգին Նժդեհը**: Լեռնահայաստանի Հանրապետությունը գոյատևեց մինչև 1921 թվականի հուլիսի 7-ը:

Լեռնահայաստանի Հանրապետության գոյությունը և հերոսամարտը հայոց ազատագրական շարժման պատմության անմոռաց էջերից մեկն է, քանի որ Սյունյաց աշխարհի դիրքը իր ռազմավարական նշանակությամբ կենարար դեր էր խաղում ներկա և ապագա Հայաստանի, հայ ժողովրդի գոյապահպանության գործում: Այս հերոսական պայքարում իրենց ռազմական գիտելիքների իմացության, ազգային գործչի կերպարով և հայրենասիրության մարմնացումով անմահացան այնպիսի ազգանվեր գործիչներ, ինչպիսին էին Դրաստամատ Կանայանը, Գարեգին Նժդեհը, Արսեն Շահնազյանը, Պողոս Տեր-Գավթյանը, նշանավոր հայ մտավորական Ակսել Բակունցը և ուրիշներ:



Հիշի՛ր

1. Հայաստանի Առաջին Հանրապետության զինվորական նախարարներին՝ **Հովհաննես Հախվերդյան** (1918 հունիս - 1919 մարտ), **Քրիստափոր Արարատյան** (1919 մարտ - 1920 ապրիլ), **Ռուբեն Տեր-Սիմայան** (1920 ապրիլ - նոյեմբեր), **Դրաստամատ Կանայան** (1920 նոյեմբեր-դեկտեմբեր):
2. Տաթևի վանքում **1921թ. ապրիլի 2-ին** Լեռնային Հայաստանի Հանրապետության հռչակումը, նրա վարչապետ **Ս.Վրացյանին**, սպարապետ **Գարեգին Նժդեհին**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ ձևավորվեց հայկական կորպուսը, սկզբնական շրջանում նրա կազմը:
2. Ի՞նչ գիտեք Լեռնային Հայաստանի Հանրապետության մասին:
3. Ձորավար Անդրանիկի ջոկատը Սյունիքում ինչպե՞ս էր սպառնալից:
4. Գարեգին Նժդեհը ե՞րբ դարձավ Սյունիքի զինված ուժերի գլխավոր հրամանատար:
5. Ո՞րն էր Նժդեհի մարտավարության էությունը:

Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի կառավարման, աստիճանաբաշխման և կադրերի պատրաստման համակարգը

Հայաստանի Առաջին Հանրապետության բանակը կազմավորված էր ռուսական բանակի համակարգով և կառավարվում էր ռուսական զինվորական կանոններով ու օրենքներով: Հրամանատարական կազմը բաղկացած էր ռուսական զինվորական գլխավորներ, ուսումնարաններ և ակադեմիաներ ավարտած և ռուսական բանակի կազմում իր ծառայությունը անցկացրած սպաներից: Բանակի կազմը համալրել էին նաև նախկին կամավորական զույգերի հրամանատարական կազմի զինվորականներ: Ըստ նախկին զինվորական նախարար Ռուբեն Տեր-Սիմայանի, «ռուսական բանակից եկածներն ունեին իրենց արժանիքները գիտական տեսակետից, բայց նաև իրենց թերությունները ոգու և

ազգային տեսակետից»։ Իսկ կամավորական գումարտակների նախկին հրամանատարները եկել էին լրացնելու «ոգու և ազգային տեսակետից» եղած թերին։

Չինվորական 1-ին նախարար Հովհաննես Հախվերդյանը ավարտել է մի քանի ռուսական ռազմական ուսումնական հաստատություն և պարգևատրվել ցարական մոտ 10 շքանշաններով ու մեդալներով։ Թովմաս Նազարբեկյանն ավարտել է մի շարք ռազմական ուսումնական հաստատություններ, ռուսական բանակում զբաղեցրել է դիվիզիայի հրամանատարի պաշտոն։ Քրիստոփոր Արարատյանը մասնակցել է մի շարք պատերազմական գործողությունների, ցարական պարգևների հետ պարգևատրվել է նաև ռումինական ամենաբարձր՝ Ռումինական թագի շքանշանով՝ կոմանդորի աստիճանով։ ՀՀ ՁՈԻ գլխավոր շտաբի պետ Արսեն Դոլուխանյանը ռուսական բանակում զբաղեցրել է բրիգադի շտաբի պետի պաշտոն, պարգևատրվել է Գեորգիևյան ոսկե զենքով։ Դիվիզիայի հրամանատար Մովսես Սիլիկյանը ռուսական բանակում եղել է դիվիզիայի, գորախմբի հրամանատար, գեներալ-մայորի կոչումը ստացել է 1915 թվականին։ Բոլոր սպաները անխտիր, հատկապես բարձր սպայական կազմը, չէին պատկանում որևէ քաղաքական հոսանքի, սակայն լինելով հայրենասեր և ազգային շահերով տոգորված զինվորականներ, սրբությամբ էին կատարում իրենց զինվորական պարտքը հայրենիքի հանդեպ։

1918 թվականի հոկտեմբերին արդեն ձևավորվել էր զինվորական նախարարությունը՝ իր վարչական ապարատով։ Գլխավոր շտաբի կազմի մեջ մտնում էին գորահավաքային, հրահանգչական, հրետանային, ռազմատեխնիկական, համբարակային, զիննախարարության գեներալ-վերահսկիչի, զորքերի բնակա-

րանավորման, ռազմասանիտարական, ռազմամասնաբուժական բաժինները, ինչպես նաև զինվորական դատարանը և ռազմադատախազական հսկողության հիմնարկները։ 1919 թվականի սկզբին զինվորական նախարարության առընթեր ստեղծվեց նաև ռազմական խորհուրդ, նախագահ նշանակվեց գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը, որին մեկ ամիս հետո հանձնարարվեց զորքերի գլխավոր հրամանատարի /սպարապետի/ պարտականությունները։

ՀՀ բանակի սպաներին և զինվորներին իրավունք էր վերապահված կրելու նախկին ծառայության ընթացքում ստացած շքանշաններն ու մեդալները։

Չնայած իր կարճատև գոյությանը, կառավարության ուշադրության կենտրոնում է եղել նաև կադրերի պատրաստման գործընթացը։ ՀՀ մի շարք տարածքներում բացվեցին ռազմական մի շարք կրթօջախներ, որոնք հանդիսանում էին սպաների պատրաստման




Հայկական բանակի շարքային և սպայական կազմի համազգեստը

հիմնական աղբյուրը։ 1920 թվականին Երևանում սկսեցին գործել գլխավոր շտաբի սպայական դասընթացները։ Նույն թվականին Ալեքսանդրապոլում և Կարսում համապատասխան աշխատանքներ տարվեցին բարձրագույն զինվորական ուսումնական հաստատությունների հիմնադրման համար։ Մինչ այդ Ալեքսանդրապոլում գործում էր զինվորական գիմնազիա, որտեղ ուսանում էին 10-12

տարեկանից մինչև 17 - 18 տարեկան յունկերներ, իսկ Կարսում՝ Ալեքսանդրապոլի գիմնազիան հաջողությամբ ավարտած 17-28 տարեկան ուսանողները: Ելնելով Հայաստանի բնակլիմայական և աշխարհագրական պայմաններից՝ այդ գիմնազիաները պատրաստում էին համապատասխան մասնագետներ: Երևանի և Ալեքսանդրապոլի հոսպիտալներին կից բացվեցին բուժական դպրոցներ, որոնք պատրաստում էին բուժքույրեր և բուժեղբայրներ: Ռադիոհեռագրային դիվիզիոնին կից բացվեց կապի դպրոց:

Բանակի գաղափարական, կրթական, քարոզչական աշխատանքներն ավելի ակտիվացնելու համար նախարարության կողմից մշակվեց և սկսեց տպագրվել «Ռազմիկ» շաբաթաթերթը, որոշ ժամանակ անց շաբաթաթերթի խմբագրությունն սկսեց մշակել և լույս ընծայել «Հայ սպայի համար» գրքույկը, որի առաջին էջում գրված էր. «Հայ բանակի սպա, քեզանից է կախված քո հարազատ ժողովրդի և հայրենիքի բախտը: Քեզանից է կախված քո զինվորների վարքը և բարքը: Ուրեմն գործի անցի՛ր և դաստիարակի՛ր քո զինվորներին, դաստիարակի՛ր ինքդ քեզ»: Պետք է նշել, որ բանակում յուրաքանչյուր գունդ ուներ քահանա, որի հիմնական գործառնությունների մեջ մտնում էր կրթադաստիարակչական գործունեությունը, նրանք պարտավոր էին ամենուր լինել իրենց գործի հետ: Զինված ուժերը օգտվում էին հիմնականում ռուսական բանակի կանոնադրություններից, որոնք համարվում էին տվյալ ժամանակ աշխարհի լավագույն զինվորական կանոնադրություններից մեկը:

Ինչպես հանրապետության մյուս հիմնարկներում, ազգային բանակում նույնպես սկսվեց բանակի ազգայնացման գործընթացը: 1920 թվականին նախարար Ռուբեն Տեր-Սիմասյանի հրամանով ամբողջ գրագրությունը բանակում սկսեց տարվել հայերեն լեզվով: 1920 թվականի հունիսի 26-ի թիվ 1073



Սպայական կազմի զինվորական կոչումների տարբերանշաններ

հրամանով բանակի բոլոր ստորաբաժանումներում մտցվում էր հայերեն գործավարություն, միաժամանակ արգելվում էր նախարարության համակարգում ծառայության վերցնել այն անձանց, ովքեր չէին տիրապետում հայերենին:

Համաձայն ՀՀ կառավարության 1919 թվականի հունիսի 1-ի «Զինապարտների հաշվառման ու զորակոչի մասին» ՀՀ օրենքի, ծառայության ընդհանուր ժամկետ սահմանվում էր 18 տարի, որից 3 տարին իսկական զինվորական, իսկ 15 տարին՝ պահեստագործի: Զինվորական ծառայության զորակոչվում էին 18 տարին լրանալուն պես: Հաշվառումը կատարվում էր 16-43 տարեկանների համար: Արտոնություն տրվում էր անաշխատունակ ծնողներ ունեցող միակ կերակրող երիտասարդին, երկաթգծի, միլիցիայի, դատական մարմինների աշխատակիցներին, գավառային և թաղային կոմիսարներին:

Բանակում կարգապահությունը ամրապնդելու համար 1919 թվականի հուլիսի 24-ին ուժի մեջ մտավ «Մահապատժի մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքով պատժի

առավելագույն չափը տարածվում էր ոչ միայն զինծառայողների, այլ նաև պետական պաշտոնյաների վրա: Որպես օրենք պետական բոլոր պաշտոնյաների երեխաները պարտավոր էին ծառայել ՀՀ ազգային բանակում: Ընդունվեց նաև «Ձորքերում դասալքության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որով պատասխանատվության էին ենթարկվում այն բոլոր մարդիկ, ովքեր թաքցնում էին դասալիք զինծառայողներին:

Հայոց բանակում պահպանվում էին սպայական այն բոլոր աստիճանները, որոնք առկա էին ռուսական բանակում՝ պրապորշչիկ, պոդպորուչիկ, պորուչիկ, շտաբս-կապիտան, կապիտան, փոխգնդապետ, գնդապետ, գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, ինֆանտերիայի գեներալ: 1918-1920թթ. հայկական բանակում ծառայել են 27 գեներալ, մոտ 60 գնդապետ և մոտ 2500 այլ աստիճանի սպաներ:

Շնորհիվ ստեղծված ճկուն կադրային քաղաքականության և կառավարման համակարգի, հայկական բանակը կարողացավ դիմակայել ներքին և արտաքին մի շարք մարտահրավերների, դառնալ տարածաշրջանի մարտունակ և կարգապահ զինված ուժերից լավագույնը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ սկզբունքով էր կազմավորված Հայաստանի Առաջին Հանրապետության բանակը:
2. Ի՞նչ տարբերություն կար ռուսական զինվորական գիմնագիաներ ավարտած հրամանատարների և կամավորական գումարտակների նախկին հրամանատարների միջև:
3. Թվարկի՞ր 1918թ. հոկտեմբերին ձևավորված զինվորական նախարարության բաժինները:
4. Ինչպիսի՞ն էր կադրերի պատրաստման գործընթացը:
5. Ի՞նչ միջոցներ ձեռնարկվեցին դասալքության դեմ պայքարի համար:

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ինժեներական արգելափակոցներ: Հակատանկային ականներ

Ինժեներական արգելափակոցներ: Ժամանակակից մարտում ինժեներական արգելափակոցները կարևոր դեր են խաղում ստորաբաժանումների մարտական գործողությունները ապահովելու համար: Դրանք տեղադրվում են ստորաբաժանումների զբաղեցրած առջևի եզրի առաջ, քներում և միջտարածքներում՝ հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու, տեղաշարժը դժվարացնելու, զենքի բոլոր տեսակներից հակառակորդին հարվածներ հասցնելուն առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: Ինժեներական արգելափակոցները կիրառվում են մարտի բոլոր տեսակներում: Ըստ գործողության բնույթի ինժեներական արգելափակոցները լինում են՝ **ականապայթուցիկ, ոչ պայթուցիկ և համակցված:**

Հիմնական ձևը **ականապայթուցիկն** է (հակատանկային, հակատրանսպորտային, հակահետևակային, հակաուղղաթիռային), որը ինժեներական արգելափակոցների հիմքն է և տեղադրվում է ականադաշտերի, ականախմբերի և առանձին ականների տեսքով: Ականապայթուցիկ արգելափակոցների արդյունավետությունը կախված է նոր տեսակի ականապայթուցիկ միջոցների և դրանց մարտական կիրառման նոր եղանակների ներդրումից:





Հակատանկային ոչ պայթուցիկ արգելափակոցներ

Ոչ պայթուցիկ արգելափակոցները լինում են **հակատանկային** և **հակահետևակային:**

Հակատանկային ոչ պայթուցիկ արգելափակոցներ են հակատանկային խրամատները (փոսերը), էսկարպները, հակաէսկարպները, ցցապատնեշները, անտառային կուտակումները, բետոնից, քարերից, աղյուսից պատրաստված արգելքները և այլն:

Հակահետևակային ոչ պայթուցիկ արգելափակոցներից են՝ սակավ նկատելի լարային ցանցերը, փշալարերից և հարթ լարերից արգելափակոցային ծաղկաշղթաները, «ոգնիները», մետաղյա արգելքները և այլն: **Մշտական արգելափակոցներ** են՝ բարձր և ցածր ցցերի վրա լարային ցանցերը, լարային

ցանկապատերը, դեռ ու դեռ ցրված լարերը: Ոչ պայթուցիկ արգելափակոցներ կառուցելիս թողնում են անցումներ՝ իրենց գորքերի անցնելու համար, որն արագ փակելու նպատակով տեղադրում են անհրաժեշտ քանակի ականներ կամ *փոխադրովի* արգելափակոցներ: Արգելափակոցները հաղթահարելու համար ստեղծում են անցումներ: Կախված իրադրությունից և արգելափակոցների տեսա-




Հակահետևանքային լարային արգելափակոցներ

կից, անցումներ կարող են ստեղծվել տանկերի և հրետանու միջոցով՝ ավերելով արգելափակոցները: Գիշերային պայմաններում, անձրևի և ձյան ժամանակ կամ արգելափակոցների թույլ պաշտպանության դեպքում հետևակը լարերը կտրատելով բացում է անցումներ:

Էլեկտրականացված լարային արգելափակոցներում անցումներ պատրաստելու համար լարային հատվածները ավերվում են այնպես, որ մնացած լարերը իրար միացած չլինեն, կամ հողակցվում են:

Հակատանկային ականներ: Հակատանկային ականները կիրառվում են հակառակորդի տանկերի, հետևակի մարտական մեքենաների, զրահապատ փոխադրիչների և այլ մարտական ու տրանսպորտային տեխնիկայի դեմ պայքարելու համար:



Հակաթրթուրային ական

Ըստ տանկերի (մարտական տեխնիկայի) վրա ունեցած ազդեցության (խոցման բնույթի) հակատանկային ականները լինում են՝ **հակաթրթուրային**, **հակահատակային**, **հակակողային** և **համակցված**: Ըստ պայթուցիչ սարքի կառուցվածքի ականները լինում են **հպումային** և **ոչ հպումային**: Հպումայինը պայթում է անմիջապես ականի պայթուցիչի տվիչի վրա ազդեցություն գործելիս, իսկ ոչ հպումայինը՝ ֆիզիկական դաշտի ազդեցությամբ (մագնիսական, սեյսմիկ,

ակուստիկ, ինֆրակարմիր):

Ըստ կառավարման աստիճանի ականները լինում են **կառավարելի** և **ոչ կառավարելի**: Կառավարումն իրագործվում է օպերատորի կողմից՝ ռադիոյով կամ հաղորդալարերի միջոցով: Այդպիսի կառավարման էությունն այն է, որ ականադաշտում իր տանկերի տեղաշարժման դեպքում նրանք ինքնուրույն չեն

պայթում, իսկ հակառակորդի տանկերն անցնելիս պայթեցվում են:

Հակատանկային ականները տեղադրվում են ձեռքով, մեքենայացված միջոցներով և հեռահար միջոցներով՝ ինքնաթիռներից, ուղղաթիռներից, հրետանուց:

Հակատանկային ականը կազմված է պատյանից (մետաղյա, փայտյա, պլաստմասսայե, ապակե), պայթուցիկ լիցքից, պայթուցիչից, միջանկյալ ճայթիչից (դետոնատոր): Որոշ հակատանկային ականներ հատակին և կողային մակերեսներին կարող են ունենալ պայթուցիչի բռնկիչի պարուրակավոր բներ: Այդ ականները կարող են ականագերծվել միայն պայթեցման միջոցով:

Հակատանկային ականները գործում են հետևյալ սկզբունքով. տանկի թրթուրը կամ մեքենայի անիվը անցնելով ականի վրայով, ճգնում է նրա կափարիչը, որի հետևանքով հարվածիչը զսպանակի ազդեցությամբ ծակում է բռնկիչը և առաջացնում ականի պայթյուն:

Հակատանկային հակաթրթուրային ականը վնասվում է իր լիցքի ֆուգասային ազդեցությամբ և կուտակային շիթով: Այդպիսի ականների քաշը լինում է 9 - 13 կգ, պայթուցիկ նյութի լիցքը՝ 5,5 - 10 կգ, հակաթրթուրային կուտակիչ ականի քաշը 1,6 - 7 կգ է, պայթուցիկ նյութի լիցքը՝ 1,1 - 5 կգ:

Հակահատակային ականը պայթում է տանկի տակ հատուկ պայթուցիչն աշխատելու դեպքում, երբ մեքենայի իրանը թեքում է ականի ցցածողի անտեման ուղղահայաց դիրքից կամ պայթում է առանց հպման՝ տվիչի աշխատանքի դեպքում և կուտակիչ շիթով ծակում տանկի հատակը, վնասում թրթուրը:



Հակահատակային ական

Այդ ականների քաշը կարող է լինել 2,7 - 10 կգ, լիցքը՝ 1,3 - 6 կգ:



Հակակողային ական

Հակատանկային հակակողային ականը խոցում է մարտական տեխնիկայի (թրթուրավոր կամ անվավոր) զրահապատ կողը: Ականն ունի սեյսմիկ և ինֆրակարմիր տվիչներ: Սեյսմիկ տվիչը տեղադրվում է բնահողում և լարերով միանում ինֆրակարմիր տվիչին: Ականի լիցքի պայթյունի ժամանակ ստեղծված հարվածային (հրահալ) գունդը խոցում է տանկը իր բարձր ջերմությամբ և ճնշումով մինչև 5 - 50 մ հեռավորության վրա՝ առաջացնելով մինչև 80 մ տրամագծով անցք: Ականը տեղադրվում է հակառակորդի տեխնիկայի հավանական շարժման ուղղությունից աջ կամ ձախ, 5 - 50 մ հեռավորության վրա: Ականը տե-


ղադրվում է ոչ կառավարվող /ավտոնոմ/ և կառավարվող տարբերակներով, որի կառավարման վահանակը դրվում է 100 մ հեռավորության վրա:

Հակահետևանքային ականներ: Ականադաշտեր

Հակահետևանքային ականները նախատեսված են հակառակորդի կենդանի ուժը շարքից դուրս բերելու համար: Ըստ գործողության տեսակի դրանք դասակարգվում են՝ **ֆուգասային, բեկորային և գնդակային**:

Հակահետևանքային ֆուգասային ականը պայթում է կափարիչի կամ իրանի քողարկող շերտի վրա անմիջականորեն ճնշում գործելիս: Սովորաբար, վնասվում է զինվորի այն ոտնաթաթը, որով տրորել է ականը, իսկ մյուս ոտքը՝ կախված հեռավորությունից, կարող է և չվնասվել:

Հակահետևանքային բեկորային ականը (ՀԲԱ-2Ս) ունի չուգունե պատյան, պայթուցիկ նյութ, պայթուցիչ և տեղադրման հարմարանք: Ականի համատարած խոցելիության (շրջանաձև խոցելիության) շառավիղը հասնում է 4 մ-ի, իսկ ցատկող ականի համատարած խոցելիության շառավիղը 25մ է: Ականը լիցքավորված է գլանիկաձև բեկորներով (2400 հատ): Ականի պայթյունի բարձրությունը գետնի մակերևույթից 0.6 - 0.9մ է: Ականի կառուցվածքը թույլ է տալիս այն տեղադրել տարբեր պայթուցիչներով և կառավարվող տարբերակով:



Հակահետևանքային բեկորային ական

Հակահետևանքային ականների խոցման ազդեցությունը հաճախ լինում է ուղղորդված՝ խոցման հեռավորությունը 50, 90, 100 կամ 200 մետր է:

Հակահետևանքային ձգման գործողության բեկորային ականը իր բեկորներով վնասում է մի մարդու կամ մի քանիսին միաժամանակ այն պահին, երբ ոտքով ձգելով լարը, դուրս է քաշվում պայթուցիչի մարտական ճուլկին:

Ֆուգասային ականի պայթելը վնասում է մի մարդու, իսկ բեկորայինը՝ մի քանիսին միաժամանակ:

Հակահետևանքային գնդակային ականը վնասում է մարդու ոտնաթաթը, երբ ոտքով նա սեղմում է ականի կափարիչը, և ատրճանակի (SS տեսակի) փամփուշտի (7,62մմ) գնդակը դուրս է գալիս ականի փողից: Քանի որ մարդու ոտնաթաթն ունի բարդ կառուցվածք՝ մանր և նուրբ շատ ոսկրեր, նրա ցանկացած վնասում համարվում է ծանր:

Ականադաշտը տեղանքի հատված է, որտեղ սահմանված կարգով կամ անկանոն տեղադրված են մեկ կամ մի քանի տեսակի ականներ: Ականադաշտը տեղադրվում է տեղանքի սահմանափակ մասերում, ճանապարհների հանգույցներում, ինչպես նաև դիվերսիոն-հետախուզական խմբերի հնարավոր կենտրոնացման հատվածներում կամ նրանց տեղաշարժման հավանական ուղղությամբ:




Հակահետևանքային գնդակային ական

Հակատանկային ականային դաշտը, սովորաբար, ունենում է 300 - 500 մ ճա-

կատ, 60 - 90 մ և ավելի խորություն: Ականները տեղադրվում են 3 - 4 շարքով:

Հակատանկային ականները տեղադրվում են ձեռքով, մեքենայացված միջոցներով (քարշիչ ականապատման արգելափակոցներ, թրթուրավոր ականապատման արգելափակոցներ, փոխադրովի ականապատման համակարգեր) կամ հեռահար միջոցներով՝ ինքնաթիռներից, ուղղաթիռներից, հրետանուց:

Հակահետևակային ականադաշտը ստեղծվում է ֆուգասային և բեկորային ականներով: Ականները տեղադրվում են հակատանկային ոչ պայթուցիկ ականադաշտերից առաջ կամ նրանց հետ համակցված: Ականադաշտը ճակատով մի քա-



Հակահետևակային ականի տեղադրումը.
ա. բնահողում, բ. ձյան մեջ, գ. բնահողի վրա,
դ. խորը ձյան մեջ

նի տասնյակից մինչև հարյուր մետր է, իսկ խորությամբ՝ 10 - 15 մ և ավելի:

Հակատանկային և հակահետևակային ականները տեղադրվում են հակառակորդի տանկերի և հետևակի շարժման ուղղությամբ: Պաշտպանությունում նրանք տեղադրվում են առջևի եզրի առաջ, իսկ հարձակվելիս՝ հակառակորդի հակազդրոհը հետ մղելու բնագծից առաջ:

Հակատանկային և հակահետևակային ականները ձեռքով տեղադրելու համար հարկավոր է ականի համար փոստրակ փորել այն հաշվով,

որ տեղադրելուց հետո ականը մի քիչ բարձր մնա գետնից: Պետք է փոսում տեղադրել ականը, լիցքավորել պայթուցիչով, ապահովիչի պահպանակը քաշելով բերել մարտական դրության և քողարկել: Հակատանկային ականները քողարկվում են հողի 5 - 8սմ շերտով, իսկ հակահետևակայինը՝ 1 - 2սմ շերտով: *Արգելվում է հանել հակահետևակային ականները, դրանք ոչնչացվում են պայթուցիկ նյութի լիցքի պարպումով կամ այլ եղանակներով: Ականներ տեղադրելիս տեղանքի այդ հատվածում արգելվում է կողմնակի մարդկանց գտնվելը:*

Ականադաշտերի ապաքողարկիչ նշաններ են՝ թմբերի առկայությունը տեղադրված ականների վրա, տեղադրումից հետո չհավաքած փաթեթը, հողը, ականի կամ պայթուցիչի մոռացված խցանիչը, ականապատելուց հետո թողած գործիքներն ու հարմարանքները, մարդկանց և մեքենաների հետքերը, ուղեցույցների առկայությունը, ձմռանը՝ տորքված ձյունը:

Ականադաշտը տեղադրելուց հետո կազմվում է *ականադաշտի տեղեկագիր*, որտեղ նշվում են ականների տեղադրման տեղերը, ականների տեսակները և տեղադրման ժամանակը:

Զինվորի անհատական խրամատ

Դիրքերի հմուտ իմեցնելու և սարքավորումն ունի որոշիչ դեր մարտում հաջողության հասնելու համար: Այն բարենպաստ պայմաններ է ստեղծում դիտարկման ու կրակ բացելու համար, պաշտպանում է անձնակազմը և տեխնիկան

հակառակորդի զանգվածային խոցման միջոցներից, ապահովում է թաքուն և արագ տեղաշարժը մարտի ընթացքում: Դիրքերի ինժեներական սարքավորումն իրականացնում է ջոկի անձնակազմը ամրաշինական գործիքների, տեղական նյութերի և այլ միջոցների օգտագործմամբ՝ հաշվի առնելով տեղանքի պաշտպանիչ և քողարկիչ հատկությունները:

Խրամատը դաշտային ամրաշինական կառույց է, որը ծառայում է որպես կրակային դիրք և կենդանի ուժի ու տեխնիկայի համար պարզագույն թաքստոց ժամանակակից բոլոր հարվածային միջոցներից պաշտպանվելու համար (անձնակազմի կորուստը պակասում է 4-6 անգամ): Այն



զգալիորեն թուլացնում է թափանցող ճառագայթումը, նվազեցնում հարվածային ալիքի և լուսային ճառագայթման շառավիղը: Խրամատները լինում են անհատական և ստորաբաժանման համար:

Առաջին հերթին փորում են անհատական խրամատներ ավտոմատավորների, գնդացրորդների,

Անհատական խրամատի սարքավորումը

րի, նշանառուների, նռնականետորդների, ՀՄՄ/ՉՓ/-ի համար և կատարվում է գնդակոծման ու դիտարկման տեսադաշտի մաքրում: Անհատական խրամատները հաղորդակցության ուղիներով միացվում են ՀՄՄ/ՉՓ/-ի խրամատին, վերջում կառուցվում է փակ խրամաճեղք:

Ավտոմատավորի /գնդացրորդի/ համար անհատական խրամատ սարքելիս սկզբում փորվում է պառկած վիճակից կրակելու համար, հետո այն խորացվում է՝ ծնկած, ապա՝ կանգնած կրակելու համար: Խրամատի փորման հաջորդականությունը կախված է պաշտպանության անցնելու պայմաններից:

Պառկած վիճակում կրակելու համար անհատական խրամատ փորվում է այսպես. ընտրված տեղում զինվորը պառկում է և ավտոմատը դնում իրենից աջ՝ ձգված ձեռքի երկարությամբ, ապա շրջվելով ձախ՝ պատյանից հանում է սակրային բաժիր, երկու ձեռքով բռնում կոթն ու դեպի իր կողմը հարվածելով կտրում հողի վերին շերտը կամ ճիւղ, դնում իրենից առաջ, նշում է խրամատի սահմաններն ու սկսում փորել: Հողապատնեշ ստեղծելու համար անհրաժեշտ է հողը շպրտել դեպի առաջ՝ հակառակորդի կողմը: Երբ խրամատի առջևի մասում խորությունը հասնում է 30 սմ-ի, զինվորը հետ քաշվելով շարունակում է փորել պահանջված երկարությունը /170սմ/, որպեսզի ծածկվեն մարմինն ու ոտքերը: Փորելն ավարտելուց հետո հողապատնեշը բահով հարթեցվում է և քողարկվում ճիւղերով կամ տեղանքի տեսքին ու գույնին համապատասխան այլ տեղական նյութերով /խոտ, ճյուղեր/: Հետագայում խրամատը խորացվում է մինչև 60 սմ՝ ծնկած կրակելու և 110 սմ՝ կանգնած կրակելու համար: Խրամատը փորելիս հողը շպրտվում է առաջ և կողքերը՝ առաջացնելով հողապատնեշ, որը կպաշտպանի հրաձիգին ճակատային ու թևային ավ-



Ջուրի խրամատ (փակ ճեղք)

տոմատային, գնդացրային կրակոցներից և բեկորներից: Խրամատի կողային պատի վրա սարքավորվում է որմնախորշ զինամթերքի համար: Խրամատը փորելիս անհրաժեշտ է անընդմեջ կատարել քողարկման աշխատանքներ: Պատկած վիճակում խրամատ փորելը տևում է 25 - 40 րոպե:



Հիշի՛ր

1. Արգելվում է հանել հակահետևակային ականները, դրանք պետք է ոչնչացնել պայթուցիկ լիցքի պարպումով կամ այլ եղանակով:
2. Ականների տեղադրման հատվածում արգելվում է կողմնակի անձանց ներկայությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ նպատակով են տեղադրվում ինժեներական արգելափակոցները:
2. Ինչպե՞ս կարելի է հայտնաբերել էլեկտրական լարային արգելափակոցները:
3. Ինչպե՞ս են դասակարգվում հակատանկային ականները:
4. Բնութագրե՛ք հակատանկային ականի ընդհանուր կառուցվածքը և գործողության սկզբունքը:
5. Ինչպե՞ս են դասակարգվում հակահետևակային ականները:
6. Որո՞նք են հեռահար միջոցներով ականների տեղադրման առանձնահատկությունները:
7. Ինչպե՞ս են տեղադրվում հակատանկային ականները, ուրվագծել այն:
8. Նկարագրե՛ք խրամատի սարքավորումը:

Ականների և պատերազմից մնացած չպայթած զինամթերքի հետ վարվելու կանոնները

Աշխարհում 100-հազարավոր մարդ ամեն տարի զոհվում է ականների և պատերազմից մնացած չպայթած զինամթերքի պայթյունից: Ջոհվածների մոտ 50 տոկոսը կազմում են երեխաները, երեք անգամ ավելի մարդ դառնում են հաշմանդամ:

Նոր սերնդի ականների իրանը ոչ թե մետաղական է, այլ պլաստիկ, կերամիկայից, ապակուց, սինթետիկ հյուսվածքից, որոշ ականներ էլ չունեն պատյան, իսկ նրանցում կիրառվող պայթուցիչն ունի մեխանիկական մեծ ամրություն: Ցանկացած ականորսիչով դրանք դժվար է հայտնաբերել: Միայն ականորսի ծառայության շների միջոցով է հնարավոր ականների հուսալի որոնումը:

Չպայթած զինամթերքի խնդիրը նոր չէ: Այն առկա է համարյա բոլոր ժամանակակից ընդհարումներում: Մի շարք երկրներում այն համարվում է տասնյակ տարիների խնդիր: Չպայթած զինամթերքը երկարաձգում է պատերազմի հետևանքները մույնիսկ այն ժամանակ, երբ ընդհարվող կողմերը խաղաղության դաշինք են կնքել: Ինչպես ասում են ֆրանսիացի սակրավորները՝ թնդանոթը կրպակում է այսօր, իսկ ականները սպասում են իրենց ժամին մշտապես: Միավորված

ազգերի կազմակերպությունը ընդլայնել է ականների օգտագործումը նվազեցնելուն ուղղված պայքարը: Ականների պայթյունից խուսափելու համար երկրագնդում սկսվել է միջազգային հակաականային շարժում: Ականների կիրառման արգելքի մասին Կոնվենցիան ստորագրվել է 1997թ. սեպտեմբերի 18-ին՝ 135 երկրների կողմից: Հիմնական նախաձեռնողներն են եղել Կանադան, Բելգիան, Նորվեգիան, Մեքսիկան: Կոնվենցիային չեն միացել հակահետևակային ականներ արտադրող մի շարք պետություններ (ԱՄՆ-ը, Հնդկաստանը, Պակիստանը, Թուրքիան, Իրանը, Իսրայելը): Կոնվենցիան ստորագրող երկրները պարտավորվել են չօգտագործել հակահետևակային ականներ և սահմանել են ժամանակացույց՝ պայմանագիրը վավերացնելուց հետո չորս տարվա ընթացքում ոչնչացնել ականների բոլոր պաշարները, իսկ 10 տարվա ընթացքում լիովին ականազերծել իրենց տարածքները: Հարավսլավիայում ՆԱՏՕ-ի պատերազմի ընթացքում /մարտ-հունիս 1999թ./ սակրավորները ոչնչացրել են մոտ 750 չպայթած զինամթերք, իսկ պատերազմից հետո Բելգրադում և նրա մոտակա տարածքում հայտնաբերել են խոշոր տրամաչափի 6 ավիացիոն ռումբ, չինական դեսպանատան ավերված շենքից միայն 2004 թ. հունիսին հաջողվեց դուրս բերել 900 կգ քաշով ամերիկյան ավիացիոն ռումբ: Բացի ավիացիոն ռումբերից մեծ վտանգ է ներկայացնում նաև չպայթած ամերիկյան կասետային զինամթերքը:



Ականազերծում

1988 - 94թթ. Արցախյան պատերազմի ժամանակ նախկին Սովետական Միության զինված ուժերի, Ադրբեյջանի ՄՀՕԶ-ի ջոկատների, ինժեներական պատրաստության թերի գիտելիքներով մարդկանց կողմից առանց համապատասխան սխեմայի հայ-ադրբեյջանական սահմանին տեղադրվել են մեծաքանակ հակահետևակային, հակատանկային ականներ, այդ պատճառով էլ շատ դեպքերում ականային դաշտ սահմանելն անհնար է եղել և որից էլ մինչև այժմ տուժում է խաղաղ բնակչությունը: Վերջին ժամանակներս պետական մարմիններն ու հասարակական կազմակերպությունները լրջորեն հետաքրքրվում են ականազերծման հարցերով: Մեր հանրապետության հինգ մարզերում՝ Տավուշում, Սյունիքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում և Արարատում կատարվել են վնասազերծման լայն աշխատանքներ: Սակայն Հայաստանի և Ադրբեյջանի շփման գոտում դեռևս կան չվնասազերծված ականներ: Ականազերծումը լրիվ կերպով կատարելու համար էջմիածնում ստեղծվել է ականազերծման ազգային կենտրոն՝ տեղեկատվության, կինոլոգիայի, բուժանձնակազմի բաժիններով և համալրված հատուկ սարքավորումներով: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի և ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցության շնորհիվ 2003թ. 170 հայ մասնագետներ ստացել են միջազգային սակրավորի հավաստագիր: Հայ մասնագետ զինծառայողները մասնակցում են Կոսովոյում, Իրաքում ականազերծման և այլ մարդասիրական աշխատանքների, արժանանալով բարձր գնահատականի:

Ականազերծման ժամանակ լինում են նաև դժբախտ պատահարներ, որոնցից

խուսափելու համար ականագերծողներն ունեն հատուկ հանդերձանք. պաշտպանական սաղավարտ՝ դեմքը և աչքերը բեկորներից, քարերից, ավազահատիկներից պաշտպանելու համար, զրահաբաճկոն, ականորսիչ: Նկարում ականորդի առաջ դրված է կարմիր գույնով ներկված ձող, վրան փաթաթված 2 կարմիր ժապավեն: Ստուգելով տեղանքը, ականորդը գլորում է այդ ձողը տեղանքում դեպի առաջ, բացվում են ժապավենները, և հստակ երևում է, թե որտեղ է կատարվել ականագերծման աշխատանք: Ականագերծումը նշելու համար երբեմն տեղանքում ամրացվում են ցցեր, իսկ հայտնաբերած ականները նշվում են դրոշներով:

Հայաթած ականների և զինամթերքի հետ վարվելու կանոնները.

- **արգելվում է** մտնել տեղանքի այն հատվածները, որտեղ կան չպայթած զինամթերք (արկեր, ականներ, ռումբեր, պայթուցիչներ, մամանակող միջոցներ և այլ պայթուցավտանգ նյութեր),
- **արգելվում է** մոտենալ պատահականորեն հայտնաբերած զինամթերքին կամ շոշափել այն: Հայտնաբերածի մասին անմիջապես հաղորդել համապատասխան մարմիններ:



Վերջին ժամանակներս հաճախ ենք լսում չպայթած զինամթերքի պայթյունների մասին: 1992թ.-ին Բալախովտի շրջակայքում չպայթած զինամթերք էր հայտնաբերվել: Երեխաները, գտնելով այդ չպայթած զինամթերքը, հետաքրքրության համար ուզեցել են հանել պայթուցիկ նյութը, բայց այն պայթել է, և եղել են զոհեր: Իսկ ահա Երևանում մի աշակերտ, գտնելով խոշոր տրամաչափի փամփուշտ, պարկուճից վառողը հանելու նպատակով մուրճով հարվածել է հրապատիճին, տեղի է ունեցել պայթյուն, որի հետևանքով տղան զրկվել է աջ ձեռքի դաստակից ու մի աչքի տեսողությունից: Մեկ այլ դեպք. անտառում ընտանիքով հավաքված են եղել և առանց տեղանքն ուսումնասիրելու կրակ են վառել բնահողում տե-

ղադրված ականի վրա: Ուրախությունն ավարտվել է դժբախտ պատահարով:

2009թ. նոյեմբերին, հայկական ատոմակայանից 300մ հեռավորության վրա գտնվել է հակատանկային չպայթած ական: Այդ մասին հայտնել են իրավասու մարմիններին, ականը տեղափոխվել է անվտանգ գոտի և վնասագերծվել:

Մի՛ վտանգեք Ձեր կյանքը, ձեռք մի՛ տվեք հայտնաբերած զինամթերքին, անծանոթ առարկաներին:

Ականապատ տարածքների նախազգուշական նշանները: Ականադաշտերը և ականապատված շրջանները մարդկանց տեսանելի, ճանաչելի դարձնելու և զգուշացնելու համար կիրառվում են միջազգային ընդունված նշաններ:

Նշանները պետք է լինեն՝

- եռանկյան կամ քառակուսի ձևի, համապատասխան կողմերով՝ 28, 20սմ

եռանկյան և ոչ պակաս 15սմ քառակուսու համար,

- գույնը՝ կարմիր կամ նարնջագույն, դեղին լուսարձակող եզրագծով,
- պայմանանշանը հեշտությամբ պետք է ճանաչվի,
- նշանի վրա պետք է լինի «Ականներ» բառը այն լեզվով, որը տարածված է այդ շրջանում, կամ Կոմվենցիայի վեց պաշտոնական լեզուներից մեկով (անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն),
- նշանները պետք է դրվեն ականադաշտի կամ ականապատված շրջանի շուրջ այնպիսի հեռավորության վրա, որ մարդիկ մոտենալով այդ շրջանին՝ կարողանան այն տեսնել ցանկացած տեղից:



Հիշի՛ր

1. Չի՛ կարելի ձեռք տալ ականադաշտում հայտնաբերված զինամթերքին և անձանոթ առարկաներին:

2. Արգելվում է մոտենլ տեղանքի այն հատվածները, որտեղ կա չպայթած զինամթերք:

Խնայի՛ր Քո առողջությունը և կյանքը:

3. Եթե հայտնվել եք ականապատ դաշտում, պետք է՝

- իսկույն կանգ առնել, չշարժվել.

- զգուշացնել մոտ գտնվողներին, բղավելով. «ԿԱՆԳՆԵ՛Ք, ԱՅՍՏԵՂ ԱԿԱՆՆԵՐ ԿԱՆ»,

- սպասել օգնության,

- անհարկի ռիսկի չդիմել:

Բոլոր աշակերտները պետք է գիտակցեն, որ չպետք է վերցնել կամ տեղափոխել ականների մասին նախազգուշացնող նշանները՝ դա կվտանգի ուրիշների կյանքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ստորագրվել ականների կիրառման մասին Կոմվենցիան և ի՞նչ նպատակով:

2. Կա՞ն, արդյոք, չվնասագերծված ականներ Հայաստանի, Արցախի և Ադրբեյջանի սահմանամերձ գոտիներում:

3. Չպայթած ականների հետ վարվելու կանոնները:

4. Ինչպիսի՞ միջազգային նախազգուշական նշաններ գիտեք ականադաշտերի և ականապատված շրջանների մասին:

ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

10-րդ դասարանի կրակային պատրաստության թեմաները հասկացություն են տալիս՝

- կրակոցի երևույթի,
- գնդակի սկզբնական արագության,
- հետագծի գոյացման,
- գնդակի թռիչքի հեռավորության,
- գնդակի մահաբեր և թափանցող գործողության,
- ուղիղ կրակոցի,
- պատասպարված, խոցելի ու մեռյալ տարածությունների մասին:


Այս թեմաների ուսուցումը աշակերտներին հնարավորություն կտա սովորել ավտոմատով կրակելու հիմնական ձևերը և կրակելու ընթացքում նշանառության ճիշտ ձևերը:

Ստացած գիտելիքներն ու կարողությունները հնարավորություն կտան զինվորական ծառայության ընթացքում հաջողությամբ կատարել կրակային պատրաստության խնդիրները:

Կրակոցի երևույթը և գնդակի թռիչքը

Կրակոցի երևույթը

Կրակոց է կոչվում գնդակի դուրսնետումը փողանցքից վառողային գազերի ներգործության տակ: Վառողի լիցքի բոցավառումից առաջացած մեծ քանակի և խիստ տաքացած գազերը (մինչև 3000°C) ստեղծում են բարձր ճնշում ($2800 \text{ կգ}/\text{սմ}^2$), որի ազդեցության ներքո գնդակը շարժվում է տեղից, մխրճվում փողանցքի մեջ և հարաճուն արագությամբ շարժվում է փողում ու դուրս նետվում փողանցքից:



Գնդակի հետևից դուրս եկող շիկացած գազերը հանդիպելով օդին, առաջացնում են բոց ու հարվածային ալիք, որը և կրակոցի ձայնի պատճառ է դառնում:


Գնդակի սկզբնական արագություն

Գնդակի շարժման արագությունը արտաքինի կետում, այսինքն՝ փողանցքից դուրս թռչելու արագությունը կոչվում է գնդակի **սկզբնական արագություն**: Այն համարվում է գեների կարևորագույն բնութագրերից մեկը: Սկզբնական արագության աճը մեծացնում է գնդակի թռիչքի հեռավորությունը, ծակող (թափանցող) ուժը և ոչնչացնող կարողությունը, նվազեցնում արտաքին գործոնների ազդեցությունը թռիչքի վրա:

Գնդակի սկզբնական արագության մեծությունը կախված է փողի երկարությունից, գնդակի զանգվածից, փափմուշտի վառողի լիցքի զանգվածից: Որքան երկար է փողը (մինչև որոշակի սահման) և մեծ վառողի լիցքը, այնքան տևական և ուժեղ է գազերի ներգործությունը գնդակի վրա, հետևաբար, մեծ է նրա սկզբնական արագությունը:

Հետագծի գոյացում

Գնդակի թռիչքն օդում սկսվում է ուղիղ գծով, որն իրենից ներկայացնում է փողանցքի առանցքի շարունակությունը գնդակի արձակման պահին: Այդ ուղիղը կոչվում է **արտանետման գիծ**: Օդում գնդակի վրա ազդում են երկու ուժ՝ ծանրության ուժը և օդի դիմադրության ուժը:




Հետագծի գոյացումը

Ծանրության ուժը շեղում է գնդակը նետման գծից, իսկ օդի դիմադրության ուժը դանդաղեցնում է գնդակի թռիչքը օդում, աշխատում է շրջել այն գլխամասով հետ: Այդ երկու ուժերի ազդեցության տակ գնդակը շարունակում է թռիչքը կոր գծով, որը գտնվում է արտանետման գծից ցածր:

Այն կոր գիծը, որն արտագծում է գնդակի ծանրության կենտրոնը օդում թռիչքի ժամանակ, կոչվում է հետագիծ:

Գնդակի թռիչքի հեռավորություն

Գնդակի թռիչքի հեռավորությունը լինում է՝ առավելագույն, նշանոցային և արդ-



Գնդակի թռիչքի հեռավորությունը

յունավետ: Գնդակի առավելագույն հեռավորությունը արտաթիռի կետից միջև զենքի հորիզոնի հետ հետագծի հանդիպման կետը եղած հեռավորությունն է:

Առավելագույն հեռավորությունը ստացվում է, երբ փողի բարձրացման անկյունը մոտ 30° է:

Նշանոցային հեռավորությունը արտաթիռի կետից մինչև նշանառման կետի հետ հետագծի հանդիպման հեռավորությունն է:

Գնդակի թռիչքի հեռավորությունը կախված է սկզբնական արագությունից, օդի դիմադրության ուժի մեծությունից, քամու արագությունից: Որքան մեծ է գնդակի սկզբնական արագությունը, այնքան մեծ է առավելագույն թռիչքի հեռավորությունը: Օդի ջերմաստիճանի բարձրացման ժամանակ օդի խտությունը փոքրանում է, որի հետևանքով իջնում է նրա դիմադրության ուժը, և մեծանում է գնդակի թռիչքի հեռավորությունը: Համընթաց քամու դեպքում գնդակը թռչում է ավելի հեռու, իսկ հանդիպական քամու ժամանակ՝ ավելի մոտ:

Գնդակի թափանցող ու մահաբեր գործողություն

Գնդակի թափանցող (ծակող) ներգործությունը նրա ունակությունն է թափանցելու (ծակելու) որոշակի խտության ու հաստության արգելք:

7.62մմ և 5.45մմ տրամաչափի գնդակների թափանցող գործողության մասին

Արգելքի անվանումը	Գնդակի տեսակը	Հրաձգության հեռավորությունը, մետր	Միջանցիկ անցքերի տոկոսը կամ թափանցման խտությունը
ԿՉԱ ավտոմատ (7.62մմ)			
7մմ հաստության զրահ (հանդիպման անկյունը՝ 90°)	Զրահահար-հրկիզող	300 200	40% 90%
Սաղավարտ	Պողպատե միջուկով զրահահար-հրկիզող	900 1100-ից ավելի	80 - 90% 80 - 90%
Ամուր տոփանած ձյունապատնեշ	Բոլոր տեսակները	500	70 - 80սմ
Հողե արգելք՝ ավազե բնահող	Բոլոր տեսակները	500	25 - 30սմ
Չոր սոճու քառակող գերանի (20x20սմ) դարսակույտ	Պողպատե միջուկով զրահահար - հրկիզող	500 150	25սմ 30 - 40սմ
Աղյուսե շարվածք	Զրահահար-հրկիզող	100	10 - 15սմ


ԿԱ-74 ավտոմատ (5.45մմ)			
5մմ հաստության զրահ	Պողպատե միջուկով	350	50%
Սաղավարտ	Պողպատե միջուկով	800	80%
Ամուր տոփանած ձյունապատնեշ	Պողպատե միջուկով	400	50 - 60%
Հողե արգելք՝ ավազե բնահող	Պողպատե միջուկով	400	20 - 25սմ
Չոր սոճու քառակող գերանի (20 - 20սմ) դարսակույտ	Պողպատե միջուկով	650	50%
Աղյուսե շարվածք	Պողպատե միջուկով	150	10 - 12սմ

տվյալները բերված են աղյուսակում:

Գնդակի մահաբեր (ոչնչացնող) գործողությունը գնդակի այնպիսի ներգործությունն է կենդանի օրգանիզմի վրա, որը նրան շարքից դուրս է բերում: Առանց հատուկ պաշտպանական միջոցների մարդու կենսական օրգանների ոչնչացման համար գնդակի կինետիկ էներգիան պետք է լինի 8 կգ.մ/վ (78.5 Ջուլ-ից ոչ պակաս):

Ուղիղ կրակոց


Ուղիղ կրակոց կոչվում է այն կրակոցը, որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը իր ողջ երկարությամբ չի բարձրանում նշանառման գծից վեր, նշանակետից բարձր: Ուղիղ կրակոցի հեռավորությունը կախված է նշանակետի բարձրությունից և հետագծի գետնամերձությունից: Որքան բարձր է նշանակետը և գետնամերձ



է հետագիծը, այնքան մեծ է ուղիղ կրակոցի հեռավորությունը, հետևապես, այն հեռավորությունը, որի վրա թիրախը կարող է խոցվել առանց նշանոցի բաժանքի փոփոխման: Դա հնարավորություն է տալիս կրճատել թիրախի խոցման ժամանակը՝ պատասխան կրակոցը կատարել հակառակորդից ավելի շուտ, ընդ որում՝ նշանառման կետը վերցվում է նշանակետի ներքևի եզրով:

Պատասպարված, խոցելի և մեռյալ տարածություններ

Թաքստոցի հետևում գտնվող, գնդակից չխոցվող տարածությունը (թաքստոցի գագաթից մինչև հանդիպման կետը) կոչվում է **պատասպարված տարածություն**:



Պատասպարված, խոցելի և մեռյալ տարածություններ

Որքան բարձր է թաքստոցը և գետնամերձ է հետագիծը, այնքան մեծ է պատասպարված տարածությունը: Պատասպարված տարածության այն մասը, որում նշանակետը տվյալ հետագծի դեպքում չի կարող խոցվել, կոչվում է **մեռյալ (գնդակոծությունից զերծ) տարածություն**: Որքան բարձր է թաքստոցը, ցածր է նշանակետի բարձրությունը և գետնամերձ է հետագիծը, այնքան մեծ է մեռյալ տարածությունը: Պատասպարված տարածության այն մասը, որում նշանակետը կարող է խոցվել, կոչվում է **խոցելի տարածություն**: Այդ տարածությունում հետագծի իջնող թևի բարձրությունը չի գերազանցում նշանակետի բարձրությունը:

Ավտոմատով կրակ վարելը

Անվտանգության կանոնները պարապմունքների ժամանակ

Պարապմունքների և հրաձգության ժամանակ անվտանգությունն ապահովվում է սահմանված կանոնների հստակ պահպանմամբ, բոլոր սովորողների կողմից հրաձգարանում, պարապմունքների վայրում սահմանված կարգ ու կանոնի իմացությամբ և ճշգրիտ կատարմամբ, սովորողների բարձր կարգապահությամբ, ինչպես նաև անվտանգության այն կանոնների պահպանմամբ, որոնք նախատեսված են ավտոմատի և փամփուշտների կառուցվածքի ու մասերի ուսումնասիրման ժամանակ:

Պետք է հիշել, խստորեն արգելվում է մարդկանց վրա նշան բռնել ու քաշել ձգանքը:

Հրաձգության ժամանակ **արգելվում է՝**

- լիցքավորել ավտոմատը առանց հրաձգության դեկլարիի հրամանի (թույլտվության),
- կրակել անսարք ավտոմատով և բարձրացրած սպիտակ դրոշի ժամանակ,
- նշան բռնել և ավտոմատն ուղղել (անգամ ոչ լիցքավորված) դեպի թիկունք, աջ ու ձախ,

- լիցքավորված ավտոմատը դուրս տանել կրակագծից,
 - լիցքավորված ավտոմատը թողնել ուր պատահի կամ տալ ուրիշի առանց հրաձգության ղեկավարի հրամանի (թույլտվության),
 - կողմնակի անձանց գտնվել կրակագծում:
- Հրաձգությունը անհապաղ դադարեցվում է, եթե կրակի գոտում հայտնվում են մարդիկ կամ կենդանիներ:



Հիշի՛ր

1. Անվտանգության կանոնների պահպանումը բացառում է դժբախտ պատահարները:
2. **Խստորեն արգելվում է** մարդկանց վրա նշան բռնել և քաշել ձգանը:

Ավտոմատով կրակ վարելու հիմնական դիրքերը

Ավտոմատով հրաձգությունը կարող է կատարվել տարբեր դիրքերից: Տեղից կրակ վարելու ժամանակ ավտոմատավորն ընդունում է կանգնած, ծնկած և պառ-



կած դիրք՝ կախված տեղանքի պայմաններից և հակառակորդի կրակից:

Կրակելուն ճիշտ պատրաստվելը ապահովում է ավտոմատի կայունությունը, որն իր հերթին ազդում է հրաձգության դիպուկության վրա: Կրակողի մարմնի հարմար ու բնականոն դիրքը ստեղծում է մկանների նվազագույն լարում և հրաձգությանը ճիշտ պատրաստվելու հիմնական պայմանն է:

Հրաձգության համար ամենահարմար դիրքը պառկած կրակելն է: Պառկած կրակելիս կրակողի մարմինն ու արմուկները

Ձիմվորի դիրքը պառկած, ծնկած, կանգնած կրակելիս

հաստատուն հենվում են գետնին՝ ապահովելով ավտոմատի կայունությունը: Այն կարելի է մեծացնել՝ օգտվելով հենարանից: Որպես հենարան կարելի է օգտագործել ճմախող, թեփով կամ ավազով տոպրակներ և այլն:

Կրակելուն պատրաստվելը ներառում է կրակելու համար դիրք ընդունելը և ավտոմատի լիցքավորումը: Այն կատարվում է «Պառկած լիցքավորի՛ր» հրամանով:

Ավտոմատի լիցքավորման համար անհրաժեշտ է ձախ ձեռքով բռնել փողակա-

լից՝ աջ ձեռքով հանել պահեստատուփը պայուսակից ու միացնել փողատուփին: Փոխադրիչը դնել ավտոմատ կրակի վրա: Աջ ձեռքով փակադակը մինչև վերջ տանել հետ ու բաց թողնել: Եթե անհապաղ կրակելու անհրաժեշտություն չկա կամ չի եղել «Կրա՛կ» հրաման, ավտոմատը պետք է դնել ապահովիչին, աջ ձեռքով բռնել ատրճանակային բռնակը:


Նշանառության և հրաձգության կատարումը անշարժ թիրախների վրա

Կրակելու գործողությունը **ներառում է՝**

- նշանոցի ու փոխադրիչի դնելը,
- ավտոմատի կոթը ուսին հարմարեցնելը,
- նշան բռնելը,
- ձգանք քաշելը,
- հրաձգության ժամանակ ավտոմատը պահելը:

Նշան բռնել (նշանառում) նշանակում է հավասար նշանահատիկ վերցնել և համատեղել նշանառման կետի հետ:

Նշանառման կետը նշանակետի այն կետն է, որի վրա նշան են բռնում: Նշանոցը և նշանառման կետը ընտրում են այսպես՝ մինչև 300մ հեռավորության վրա կրակում են, որպես կանոն, «3» կամ



«1» նշանոցով՝ նշան բռնելով նշանակետի

ներքևի եզրին կամ, եթե նշանակետը բարձր է (վազող մարդ)՝ մեջտեղին: Եթե հեռավորությունը 300մ-ից ավելի է, ապա նշանոցը դրվում է նշանակետի հեռավորությանը համապատասխան, ընդ որում՝ այն կլորացվում է մինչև 100մ: Որպես կանոն, նշանառման կետ վերցվում է թիրախի մեջտեղը:

Միշտ պետք է հիշել՝

- վերցնել հավասար նշանահատիկ՝ նշանակում է նշանահատիկը ճշգրիտ համատեղել նշանաձողիկի կտրվածքի հետ, նշանահատիկի գագաթը պետք է երևա նշանաձողիկի կտրվածքի կենտրոնում՝ նրա վերևի եզրերի հետ մեկ գծի վրա,
- եթե իրադրությունը թույլ չի տալիս փոխել նշանոցը, ապա ուղիղ կրակոցի հեռավորության սահմաններում կրակն անհրաժեշտ է վարել «1» նշանոցով՝ նշան բռնելով նշանակետի ներքևի եզրին,
- նշանառման ժամանակ հետևել, որպեսզի նշանաձողիկի գագաթը լինի հորիզոնական դիրքում, ավտոմատը թեք պահելու դեպքում (աջ կամ ձախ) գնդակները համապատասխանաբար կգնան աջ կամ ձախ,
- խորհուրդ չի տրվում երկար նշան բռնել, քանի որ դա ազդում է կրակի դիպուկության վրա,

- եթե որևէ պատճառով կրակ չի բացվում, ավելի լավ է դադարեցնել նշանառությունը, աչքերին 5 - 10 վայրկյան հանգիստ տալ,
- հրաձգությունը կրակահերթով վարելիս անհրաժեշտ է կոթը սեղմել ուսին ու պահել՝ չփոխելով արմունկների դիրքը, պահպանելով հավասար նշանահատիկը նշանառման կետի վրա,
- յուրաքանչյուր կրակահերթից հետո արագ վերականգնել նշանառության ճշգրտությունը և շարունակել կրակը,
- պառկած դիրքով կրակելիս թույլատրվում է պահեստատուփը հենել գետնին:

Հրաձգության դադարեցումը

Հրաձգության դադարեցումը լինում է ժամանակավոր կամ լրիվ: Հրաձգության ժամանակավոր դադարեցման համար տրվում են «Կանգնի՛ր» կամ «Դադարեցնե՛լ կրակը» հրամանները: Այս հրամանների դեպքում կրակողը դադարեցնում է սեղմել ձգանը և ավտոմատը դնում է ապահովիչին: Հրաձգությունը լրիվ դադարեցնելու համար լրացուցիչ տրվում է «Լիցքաթափե՛լ» հրամանը:

Ավտոմատի լիցքաթափման համար **անհրաժեշտ է՝**

- դանդաղ հետ տանել փակադակի շրջանակը,
- հանել փամփուշտը փամփշտանոցից,
- բաց թողնել փակադակի շրջանակը,
- սեղմել ձգանը,
- ավտոմատը դնել ապահովիչին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է կրակոցը:
2. Ինչի՞ց է կախված գնդակի սկզբնական արագությունը:
3. Ի՞նչ է հետագիծը:
4. Ո՞րն է կոչվում ուղիղ կրակոց:
5. Ի՞նչ են պատասպարված, խոցելի և մեռյալ տարածությունները: Բնութագրե՛ք դրանք:
6. Ի՞նչ է արգելվում հրաձգության ժամանակ:
7. Հերթով փորձարկե՛ք ավտոմատով կրակ վարելու հիմնական դիրքերը:

ՀՀ ՁՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ **Ձինվորական պատասխանատվության տեսակները**

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը ստեղծվեցին հարկադիր ինքնապաշտպանության պայմաններում, երբ Արցախի ամբողջ բնակչությունը՝ կին, թե տղամարդ, տակավին պատանի, թե արդեն պատկառելի տարիքի մարդ, ոտքի ելան աղբյուրանական ջարդարարների դեմ՝ պաշտպանելու իրենց անկախությունը, պատիվն ու արժանապատվությունը: Նորաստեղծ բանակը, ծնունդ առնելով պատերազմական իրադրության պայմաններում, աստիճանաբար ամրապնդվեց ու առնականացավ: Դրան մեծապես նպաստեցին նաև կարգապահական նորմերի պահպանումը, ընկերական փոխօգնությունն ու փոխհարաբերությունները: Բանակը համալրող յուրաքանչյուր քաղաքացի, գտնվելով զինվորական ծառայության մեջ, որպես հայրենիքի պաշտպան համարվում է պետական իշխանության ներկայացուցիչ:

Նախնական զինվորական պատրաստության (ՆՁՊ) նախորդ տարիների դասընթացների ժամանակ մենք համառոտակիորենն ուսումնասիրել ենք զինծառայողների իրավունքները և ընդհանուր պարտականությունները. գիտենք, որ դրանք սահմանված են զինվորական կանոնադրություններով, օրենսդրական ակտերով և ամենայն խստությամբ պահպանվում են Սահմանադրությամբ: Միաժամանակ հայտնի է նաև, որ հանրապետության զինված ուժերի զինծառայողները, բացի իրավունքներից ու պարտականություններից, ունեն նաև որոշակի պատասխանատվություն: Գիտենք նաև, որ բոլոր զինծառայողները, անկախ պաշտոնից ու զինվորական կոչումից, հավասար են օրենքի առջև:

Ձորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարները (պետերը) զինծառայողներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնում նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները: Չանցանքների քննարկումը կատարվում է. զինվորներին՝ զինվորների ժողովներում, սերժանտներին՝ սերժանտների ժողովներում, սպաներին՝ սպայական ժողովներում, ինչպես նաև սպայական պատվի դատարաններում:

Վերհիշենք զինծառայողների **պատասխանատվության տեսակները՝**

- կարգապահական պատասխանատվություն,
- վարչական պատասխանատվություն,
- քաղաքացիաիրավական պատասխանատվություն,
- նյութական պատասխանատվություն,
- քրեական պատասխանատվություն:

ՀՀ ՁՈՒ կարգապահական կանոնադրությունը սովորեցնում է, որ զինծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս **հաշվի են առնվում՝**

- զանցանքի տեսակը,
- զանցանքի կատարման հանգամանքները,
- զանցանքի խորությունը,
- ծառայության ընթացքում զինծառայողի անձնական հատկանիշները,
- զինծառայողի առաջադիմության ցուցանիշները,

- հատուկ պարտականությունների կատարման գործում նրա ներգրավված լինելը և այլն:

Սակայն զինծառայողների պատասխանատվության տեսակների մեջ իրենց բնույթով առանձնանում, տարբերվում են զինվորական հանցագործությունները:

Ձինվորական հանցագործություններ

Անցած ուսումնական տարում մենք ուսումնասիրել ենք կարգապահական տույժերի տեսակները, մեզ արդեն հայտնի են, թե ինչ զանցանքի համար ինչ պատասխանատվության է ենթարկվում զինծառայողը, ինչպիսի տույժեր են սահմանված ՀՀ ՁՈՒ կարգապահական կանոնադրությամբ: Սակայն, այդ ամենից բացի, զինվորական ծառայության մեջ գործում են նաև հանցանքի համար նախատեսված պատժամիջոցներ: ՀՀ քրեական օրենսգրքով, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, սահմանված են պատժամիջոցներ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար: Նախնական զինվորական պատրաստություն անցած յուրաքանչյուր դպրոցական, հատկապես ավագ դպրոցի աշակերտները պետք է լավ իմանան ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնք վերաբերում են զինվորական ծառայությանը:

Ի՞նչ է հանցագործությունը: Հանցագործություն է կոչվում «Օրինականության և իրավակարգի այնպիսի խախտում, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն» (Հայկական սովետական հանրագիտարան, N6, էջ 229):

Ծանոթանա՞նք ՀՀ քրեական օրենսգրքի՝ զինծառայությանը վերաբերող մի քանի հոդվածի:

Հոդված 356. Հրամանը չկատարելը:

Հոդվածի 1-ին կետում նշվում է. «Պետի օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի կողմից չկատարելը, որն էական վնաս է պատճառել ծառայության շահերին՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով կամ կարգապահական գումարտակում պահելով, առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Սույն հոդվածով նախատեսված են նաև ավելի խիստ պատժամիջոցներ, եթե նույն արարքը կատարվել է՝

- ա) մի խումբ անձանց կողմից կամ առաջացրել է ծանր հետևանքներ,
- բ) ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում:

Հոդված 357. Պետին դիմադրելը կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները խախտելուն հարկադրելը:

Հոդվածի 1-ին կետում նշվում է. «Պետին, ինչպես նաև զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող այլ անձին դիմադրելը կամ նրան այդ պարտականությունները խախտելուն հարկադրելը, որը գուցարդվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Սույն հոդվածով նախատեսված են նաև ավելի խիստ պատժամիջոցներ, եթե նույն արարքը կատարվել է՝

- ա) մի խումբ մարդկանց կողմից,
- բ) զենք գործադրելով,
- գ) առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառելով, կամ ծանր հետևանքներ թողնելով,
- դ) ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում:

Հոդված 359. Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում:

Հոդվածի 1-ին կետում նշվում է. «Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրոծանակի ենթարկելով կամ հալածելով, կամ զուգորդվել է բռնություն գործադրելով՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Սույն հոդվածով նախատեսված են նաև ավելի խիստ պատժամիջոցներ, եթե նույն արարքը կատարվել է՝

- ա) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- բ) մի խումբ անձանց կողմից,
- գ) զենք կամ մարմնական վնասվածքներ պատճառելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ գործադրելով,
- դ) անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,
- ե) ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ:

Հոդված 366: Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը:

Հոդվածի 1-ին կետում նշվում է. «Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը սահմանապահ վերակարգի մեջ մտնող կամ սահմանապահ ծառայության այլ պարտականություններ կատարող անձի կողմից, եթե այդ արարքը վնաս է պատճառել կամ կարող էր վնաս պատճառել պետության անվտանգության շահերին՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Սույն արարքի համար հիշյալ հոդվածով նախատեսված են նաև ավելի ծանր պատժամիջոցներ, եթե ծառայությունը կատարվել է՝

- ա) անփույթ կամ անբարեխիղճ, առաջացնելով ծանր հետևանքներ,
- բ) ռազմական կամ պատերազմի իրադրության պայմաններում:

Հոդված 368: Ներքին ծառայության կանոնադրային կանոնները խախտելը:

Հոդվածի 1-ին կետում նշվում է. «Չորամասի օրվա վերակարգի մեջ մտնող անձի կողմից (բացի պահակախմբից և պարեկախմբից) ներքին ծառայության կանոն-

նագրքային կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Սույն արարքի համար հիշյալ հոդվածով նախատեսվում են նաև ավելի ծանր պատժամիջոցներ, եթե ծառայությունը կատարվել է՝

ա) անփույթ կամ անբարեխիղճ՝ առաջացնելով ծանր հետևանքներ,

բ) ռազմական կամ պատերազմի իրադրության պայմաններում:

ՀՀ քրեական օրենսգրքով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների մասին մի քանի հոդված նվիրված է ռազմական գույքը դիտավորյալ ոչնչացնելուն կամ վնասելուն (*հոդված 369*), ռազմական գույքը անգ-գուշությամբ ոչնչացնելուն կամ վնասելուն (*հոդված 370*), ռազմական գույքը վատ-նելուն (*հոդված 371*), ռազմական գույքը կորցնելուն կամ փչացնելուն (*հոդված 372*):

Զինծառայողների համար պատժաչափեր են սահմանված դասալքության (*հոդ-ված 362*), մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելու կամ թողնելու հա-մար (*հոդված 379*), մարտադաշտն ինքնական լքելու կամ զենքով գործելուց հրաժարվելու համար (*հոդված 380*), կամովին գերի հանձնվելու համար (*հոդված 381*), դիակապտության համար (*հոդված 383*) և այլն:



Հիշի՛ր

1. Զինծառայողը բացի իրավունքներից ունի նաև պատասխա-նատվություն:
2. Բոլոր զինծառայողները, անկախ պաշտոնից ու կոչումից, հա-վասար են օրենքի առջև:
3. Բանակը համալրող յուրաքանչյուր քաղաքացի համարվում է պետական իշխանության ներկայացուցիչ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Զինվորական պատասխանատվության ի՞նչ տեսակներ գիտեք:
2. Զինվորական պատասխանատվության ենթարկելիս ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվում:
3. Որտե՞ղ են քննարկվում զինվորների և սերժանտների զանցանքները:
4. Ի՞նչ է զինվորական հանցագործությունը:

Ձորամասի շուրջօրյա վերակարգ: Վաշտի շուրջօրյա վերակարգը, կազմը և սպարտականությունները

Ձորամասերում ներքին կարգուկանոնի պահպանման, սպառազինության, ռազմական տեխնիկայի, զինամթերքի, ունեցվածքի պահպանման, ինչպես նաև ներքին ծառայության այլ աշխատանքներ կատարելու համար յուրաքանչյուր ստորաբաժանումում նշանակվում է **շուրջօրյա վերակարգ**:

Շուրջօրյա վերակարգը նշանակվում և վերակարգի կազմը հայտնվում է զորամասի հրամանատարի հրամանով:

Վաշտի շուրջօրյա վերակարգում նշանակվում են *հերթապահ* և *օրապահներ*:



Վաշտի հերթապահը հրահանգավորում է օրապահներին

Նրանց քանակը որոշում է զորամասի հրամանատարը: Վաշտի հերթապահը և հերթական օրապահը զինվում են ավտոմատի սվին-դանակով: Հերթապահը ենթարկվում է զորամասի հերթապահին և նրա օգնականին, իսկ ներքին ծառայության կարգով՝ վաշտի հրամանատարին և ավագին: Վաշտի հերթապահին ենթարկվում են վաշտի օրապահները: Շուրջօրյա վերակարգում նշանակված անձանց ծառայության նախապատրաստման, ստուգման, հանգստի կազմակերպման համար

հատկացվում է առնվազն 3 ժամ: Վաշտի հերթապահը կրծքին կրում է հատուկ կրծքանշան՝ «Վաշտի հերթապահ» մակագրությամբ: Նախկին հերթապահը կրծքանշանը նոր հերթապահին է փոխանցում հերթապահության հանձնման և ընդունման գեկույցից հետո:

Վաշտի հերթապահը **սպարտավոր է՝**

- հետևել վաշտում օրվա կարգացուցակի հստակ կատարմանը, զինծառայողների կանոնադրական փոխհարաբերություններին, պատահարների կամ խախտումների դեպքում գեկուցել վերադասին,
- գիտենալ վաշտում մարդկանց առկայությունը, վաշտի գտնվելու վայրը,
- տազնապի ազդարարման ժամանակ իրականացնել անձնակազմի վերկացը,
- զենքը (բացի ատրճանակներից) բաց բողնել վաշտի հրամանատարի կամ ավագի հրամանով՝ այդ մասին նշելով զենքի և զինամթերքի բացթողման մատյանում,
- զենքի ընդունման ժամանակ ստուգել լրակազմը և համարները, մշտապես իր մոտ պահել զենքի պահասենյակի բանալիները,
- հետևել զենքի պահասենյակների ազդանշանման համակարգի, կրակմարիչների առկայությանը և սարքին վիճակին, հրդեհի բռնկման դեպքում կանչել հրշեջ խումբ,

- նշանակված ժամերին փոխել օրապահներին, հետևել աշխատանքային խմբերի աշխատանքին, բուժկետ ուղարկել հիվանդներին և բուժքննության ենթակա անձանց,
- անվանականից հետո տեղեկություն ստանալ բացակայողների մասին, նրանց ազգանունները հայտնել (գեկուցել) գորամասի հերթապահին,

Հիշի՛ր գեկույցի տեքստը. «Պարո՛ն կապիտան, N վաշտում անվանականից ավարտվել է, բոլորը ներկա են, բացի վերակարգում գտնվող երկու զինծառայողից: Վաշտի հերթապահ՝ սերժանտ Մանուկյան»:

- վերակարգից հետո գորամասի հերթապահին գեկուցել վաշտի անձնակազմի ներկայության, վաշտում կատարված փոփոխությունների մասին,
- վաշտի հրամանատարի և ավելի բարձր պետերի, գորամասի հերթապահի, տեսչական ստուգման եկած անձանց ժամանելու դեպքում տալ «Զգա՛ստ» հրամանը, գեկուցել ժամանողներին և նրանց ուղեկցել վաշտի տարածքում:

Հիշի՛ր գեկույցի տեքստը. «Պարո՛ն մայոր, իմ հերթապահության ընթացքում պատահարներ չեն եղել, վաշտում բացականեր չկան, բոլորը մասնակցում են «Ռ-ազմական տեղագրություն» առարկայի սարապմունքին: Վաշտի հերթապահ՝ ենթասպա Մամյան»:

Վաշտի մյուս սպաներին, վաշտի ավագին հերթապահը չի գեկուցում, միայն ներկայանում է: Ուրիշ վաշտերի սպաներին ներկայանում է և նրանց ուղեկցում է վաշտի հրամանատարի մոտ,

- եթե վաշտը տեղակայվում է բնակավայրերում, հերթապահը հետևում է կարգուկանոնին, խախտումներ թույլ տվածներին ուղարկում է վաշտի ավագի մոտ:

Վաշտի օրապահի պարտականությունները և տեղի կահավորումը

Վաշտի օրապահը, սովորաբար, նշանակվում է զինվորներից: Նա պատասխանատու է գեների պահարանների, զինամթերքի արկղերի, վաշտի ունեցվածքի ու գույքի, անձնակազմի անձնական իրերի պահպանման համար:

Վաշտի հերթական օրապահը **պարտավոր է՝**

- չբացակայել վաշտի գորանոցից առանց հերթապահի թույլտվության,
- մշտապես հետևել գեների պահպանման սենյակին,
- ուղղակի պետերի և գորամասի հերթապահի ժամանման դեպքում տալ «Զգա՛ստ» հրամանը,
- վաշտի մյուս սպաների, ինչպես նաև ավագի և այլ ստորաբաժանումների զինծառայողների ժամանման դեպքում կանչել վաշտի հերթապահին՝ «Վաշտի հերթապահ, մուտքի մոտ» կանչով,
- հետևել գորանոցի մաքրությանը, կարգուկանոնի պահպանմանը և նույնը պահանջել բոլոր զինծառայողներից,
- պահպանել հերթապահ լուսավորության կանոնները,
- ցուրտ եղանակին, հատկապես գիշերային ժամերին, արգելել զինծառայողներին չհագնված դուրս գալ գորանոցից,
- հետևել, որ զինծառայողները ծխեն, կոշիկներն ու հագուստը մաքրեն դրա հա-

մար նախատեսված տեղերում,

- անձնակազմն արթնացնել առավոտյան վերկացի, գիշերը՝ տազնապի ազդանշանի ժամանակ,
- առանց վաշտի հերթապահի թույլտվության արգելել կողմնակի անձանց մուտքը զորանոց կամ զենքի և ունեցվածքի դուրսբերումը,
- վաշտում տեղի ունեցած բոլոր պատահարների, նկատված խախտումների ու անսարքությունների մասին անմիջապես զեկուցել վաշտի հերթապահին:

Օրապահին արգելվում է ծառայության կատարման ընթացքում նստել, հանդերձանքը հանել կամ համազգեստի կոճակներն արձակել:

Ազատ հերթի օրապահը **պարտավոր է՝**


- մաքրություն ու կարգուկանոն պահպանել զորանոցի բոլոր սենյակներում,
- չբացակայել առանց հերթապահի թույլտվության,
- անհրաժեշտության դեպքում փոխարինել հերթապահին և կատարել նրա պարտականությունները:

Վերակարգում զինվորներին նշանակելիս հաշվի են առնվում նրանց առողջական վիճակը, կապը ընտանիքի անդամների և հայրենակիցների հետ, ինչպես նաև գիտելիքները, անձնական հատկանիշները՝ կազմակերպչական ընդունակությունները, զգոնությունը, կարգապահությունը, սկզբունքայնությունը և ծառայողական պարտականության լիարժեք կատարմանը նպաստող այլ հատկանիշներ:

Վաշտի հերթապահի **ծառայողական փաստաթղթերն են՝**

- հերթապահի և օրապահի հրահանգները,
- տազնապի, հավաքի և հակահրդեհային անվտանգության միջոցառումների հրահանգները,
- վաշտի մարտական պատրաստության պարամունքների դասացուցակը,
- վաշտից դուրս բնակվող զինծառայողների ցուցակը՝ հասցեներով և հեռախոսահամարներով,
- կանչի ազդանշանները,
- մաքրելու համար վաշտին ամրակցված տարածքի գծապատկերը,
- առավոտյան մարմնամարզության համար սահմանված հագուստի նմուշը,
- հերթապահության ընդունման-հանձման մատյանը,
- զենքի ու զինամթերքի հանձնումը գրանցելու մատյանը,
- հիվանդների, տարածքից արձակվածների գրանցման մատյանը,
- հրշեջ խմբի և զորամասի հերթապահի հեռախոսահամարները:

Շուրջօրյա վերակարգի պարտականությունների աշալուրջ և հստակ կատարումը կարգուկանոնի ապահովման հետ միաժամանակ նպաստում են անձնա-



կազմի ընդհանուր կարգապահության ամրապնդմանը և ստորաբաժանումների մարտական պատրաստականության բարձրացմանը:



Հիշի՛ր

1. **Պարտադիր է՝** զենքի ընդունման ժամանակ ստուգել լրակազմը և համարները:
2. Վաշտի հերթապահը **պարտավոր է** մշտապես իր մոտ պահել զենքի պահպանման սենյակի և պահարանների բանալիները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ համար է նշանակվում շուրջօրյա վերակարգը:
2. Ո՞ւմ հրամանով է նշանակվում շուրջօրյա վերակարգը:
3. Ովքե՞ր են նշանակվում շուրջօրյա վերակարգում:
4. Ինչի՞ համար է պատասխանատու վաշտի օրապահը:

ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Շարային վարժաճևերն ու շարժումը զենքով

Շարային կեցվածքը զենքով: Շարային կեցվածքը զենքով ընդունվում է զենքը «Փոկին-Ա՛Ռ» դրությամբ՝ «Զգա՛ստ» կամ «Շարվի՛ր» հրամաններով: Այդ հրամաններով զինծառայողը կանգնում է առանց լարվելու, ուղիղ, ոտնաթաթերը բացելով



Շարային կեցվածքը զենքով

և հավասարեցնելով ճակատային գծի հետ: Ծնկները պետք է լինեն ուղիղ, գլուխը՝ բարձր պահած, կուրծքը և մարմինը՝ մի փոքր առաջ տրված: Փայտյա կոթով զենքը պահվում է փողաբերանը դեպի վեր, աջ ձեռքի դաստակը հենելով գոտու վերին եզրին, իսկ ծալովի կոթով ավտոմատը՝ փողաբերանը դեպի ցած:

Ձեռքի գնդացիքը բռնել ոտքի մոտ՝ ազատորեն ցած իջած ձեռքով այնպես, որ կոթը դրվի գետնին՝ քավելով աջ ոտնաթաթին:

Պետին մոտենալը և նրանից հեռանալը: Զինծառայողը զենքը ձեռքին շարքից դուրս գալիս գործում է այնպես, ինչպես առանց զենքի շարքից դուրս գալիս, այդ դեպքում զենքի դիրքը չի փոխվում: Շարք վերադառնալուց հետո զինծառայողը զենքը պահում է այնպես, ինչպես շարքում գտնվող զինծառայողները:

Շարքից դուրս պետին մոտենալիս,

նրանից 5 - 6 քայլ հեռու զինծառայողն անցնում է շարային քայլի, 2 - 3 քայլ հեռու կանգնում է պետի առջև, ոտքերը իրար միացնելու հետ միաժամանակ աջ ձեռքը մոտեցնում է գլխարկին, եթե զենքը գտնվում է «Մեջքին-Ա՛Ռ» դրությամբ. մնացած դեպքերում ձեռքը գլխարկին չի մոտեցնում, միայն զեկուցում է իր մոտենալու մասին:

Օրինակ՝ «Պարո՛ն մայոր, շարքային Պետրոսյանը ներկայացել է Ձեր հրամանով»: Պետին զենքով մոտենալիս և նրանից հեռանալիս զենքի դիրքը չի փոխվում (բացառությամբ կարաբինի):

Զինվորական ողջույնի կատարումը տեղում և շարժման ընթացքում: Շարքից դուրս զինվորական ողջույնը զենքով կատարվում է այնպես, ինչպես առանց զենքի: Ողջույնը կատարելիս զինծառայողը ընդունում է շարային կեցվածք զենքով, չփոխելով զենքի դիրքը, ձեռքը գլխարկին չի մոտեցվում, բացառությամբ զենքը

«Մեջքին-Ա՛Ռ» դրությունից: Ջենքը «Մեջքին-Ա՛Ռ» դրությունից զինվորական ողջույնի կատարման ժամանակ աջ ձեռքը մոտեցնել գլխարկին:

Եթե պետք անցնում է զինծառայողի մոտից, վերջինս գլուխն ուղղում է և իջեցնում ձեռքը:

Շարքից դուրս գենքով շարժման ժամանակ զինվորական ողջույնի կատարման համար, երբ գենքը գտնվում է «Փոկին-Ա՛Ռ» կամ «Կրծքին-Ա՛Ռ» դրությունում, պետից 3 - 4 քայլ հեռավորության վրա ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը շրջել նրա կողմը, դադարեցնել ազատ ձեռքի շարժումը, իսկ «Մեջքին-Ա՛Ռ» դրության դեպքում, բացի դրանից, աջ ձեռքը մոտեցնել գլխարկին:

Պետի մոտով անցնելուն պես ձախ ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը պահել ուղիղ, աջ ձեռքը իջեցնել ցած:



Զինվորական ողջույնի կատարումը տեղում և շարժման ժամանակ

Շարային վարժածները գենքով

Շարքում, ստորաբաժանման կազմում, ինչպես նաև մարտում, ներդաշնակ գործողությունների հստակ կատարման համար շատ կարևոր է գենքով վարժածների ուսուցումը: Անվտանգության ապահովման նպատակով վարժածների ուսուցման անցնելուց առաջ ջոկի հրամանատարը ստուգում է գենքի առկայությունը: Այն դրվում է ապահովիչին, փոկը հարմարեցվում է: Փոկը հարմարեցնելու համար տրվում է «*Փոկը թուլացնե՛լ*» կամ «*Փոկը ձգե՛լ*» հրամանը:

«*Փոկը*» նախնական հրամանով ավտոմատը բռնել ձեռքը, կարաբինը և ձեռքի գնդացիքը՝ ոտքի մոտ, ծալել ծալովի կոթով ավտոմատի կոթը:

«*Թուլացնե՛լ*» («*ձգե՛լ*») կատարողական հրամանով կատարել կես աջդարձ, միաժամանակ ձախ ոտքը գցել մի քայլ ձախ և, առաջ թեքվելով, գենքի կոթը հենել ձախ ոտնաթաթին, իսկ փողը դնել աջ արմունկի ծալքին: Ծնկները չծալել, աջ ձեռքով բռնելով փոկի ճարմանդը՝ ձախով ձգել (թուլացնել) փոկը և ընդունել շարային կեցվածք:

Ավտոմատը «Փոկին-Ա՛Ռ» դրությունից կրծքին է վերցվում «Ջենքը կրծքին-Ա՛Ռ» հրամանով, երեք գործողությամբ:

Առաջին գործողություն. աջ ձեռքը փոկի վրայով բարձրացնելով մի փոքր վերև՝ ավտոմատը հանել ուսից և ձախ ձեռքով բռնելով փողակալից ու փողի պահպանակից, ուղղահայաց դիրքով պահել իր առջև՝ պահեստատուփը դեպի ձախ, փողաբերանը՝ ծնոտի բարձրությամբ:

Երկրորդ գործողություն. աջ ձեռքով փոկը տանել աջ և ավիով տակից բռնել այնպես, որ մատները կիսախուփ վիճակում ուղղված լինեն դեպի իրեն, միաժամանակ աջ արմունկը անցկացնել փոկի տակով:



«Փոկին-Ա՛Ռ» դրությունից «Կրծքին-Ա՛Ռ» դրության վարժածնի կատարումը ավտոմատով

Երրորդ գործողություն. փոկը գլխի վրայով անցկացնել և գցել ձախ ուսին, աջ ձեռքով բռնել կոթի վզիկը, իսկ ձախ ձեռքն արագորեն ցած իջեցնել:

Ծալովի կոթով ավտոմատը «Փոկին-Ա՛Ռ» դրությունից կրծքին է բերվում նույն հրամանով, սակայն երկու գործողությամբ:

Առաջին գործողություն. աջ ձեռքով ավտոմատը հանել ուսից, աջ արմունկը, չհանելով փոկի տակից և ձախ ձեռքով բռնելով ավտոմատի փողակալից ու փողի պահպանակի ներքևից, պահել իր առջև՝ պահեստատուփը ցած, փողաբերանը՝ դեպի ձախ:

Երկրորդ գործողություն. աջ ձեռքով փոկը գլխի վրայով անցկացնել ու գցել ձախ ուսին, նույն ձեռքով բռնել փողատուփը հենց փոկի մոտ, իսկ ձախ ձեռքն արագորեն իջեցնել ցած:

Ավտոմատը «Կրծքին-Ա՛Ռ» դրությունից «Փոկին-Ա՛Ռ» դրության է բերվում «Ձենքը փոկին-Ա՛Ռ» հրամանով՝ երեք գործողությամբ:

Առաջին գործողություն. ձախ ձեռքով բռնել ավտոմատի փողակալից և փողի պահպանակի ներքևից՝ միաժամանակ այն հրելով փոքր-ինչ առաջ և վեր, աջ ձեռքը հանել փոկի տակից, բռնել կոթի վզիկը:

Երկրորդ գործողություն. ավտոմատը բարձրացնելով վեր՝ փոկը անցկացնել գլխի վրայով և ավտոմատը բռնել իր առջև ուղղահայաց դիրքով՝ պահեստատուփը դեպի ձախ, փողաբերանը՝ ծնոտի բարձրությամբ:

Երրորդ գործողություն. աջ ձեռքով բռնել փոկի վերևի մասը և ավտոմատը գցել աջ ուսի հետևը՝ «Փոկին-Ա՛Ռ» դրությամբ, իսկ ձախ ձեռքը արագորեն իջեցնել ցած:

Ծալովի կոթով ավտոմատը «Կրծքին-Ա՛Ռ» դրությունից «Փոկին-Ա՛Ռ» դրության է բերվում նույն հրամանով, երեք գործողությամբ:

Առաջին գործողություն. ձախ ձեռքով բռնել ավտոմատի փողի վերևի մասից ու գազախողովակից և, թեթևակիորեն բարձրացնելով վեր, աջ արմունկը հանել փոկի տակից, աջ ձեռքի ամիսով ներքևից բռնել փոկը՝ փողատուփի մոտ:

Երկրորդ գործողություն. ավտոմատը շրջելով փողատուփը դեպի վեր, փոկը անցկացնել գլխի վրայով և ավտոմատը բռնել՝ պահեստատուփը դեպի աջ:

Երրորդ գործողություն. ավտոմատը գցել աջ ուսի հետևը՝ «Փոկին-Ա՛Ռ» դրությամբ, իսկ ձախ ձեռքն արագորեն իջեցնել:



«Կրծքին-Ա՛Ռ»
դրությունից «Փո-
կին-Ա՛Ռ» վար-
ժաձևի կատարումը

Ձեռքը «Փոկին-Ա՛Ռ» դրությունից մեջքին է բերվում «Ձեռքը մեջքին-Ա՛Ռ» հրամանով, երկու գործողությամբ:

Առաջին գործողություն. ձախ ձեռքով փոկը բռնել աջ ուսից մի փոքր ներքև, իսկ աջ ձեռքով միաժամանակ բռնել զենքի կոթը (ծալովի կոթով ավտոմատի և ձեռքի նռնականետի փողից՝ ներքին փոկակալի մոտ):

Երկրորդ գործողություն. աջ ձեռքով զենքը թեթևակիորեն բարձրացնել վեր, իսկ ձախով փոկը գլխի վրայով գցել ձախ ուսին, զենքը և ձեռքերը արագորեն իջեցնել ցած:

Ավտոմատը «Մեջքին-Ա՛Ռ» դրության է վերցվում առանց սվին-դանակի:

Ձեռքը «Մեջքին-Ա՛Ռ» դրությունից փոկին է վերցվում «Ձեռքը փոկին-Ա՛Ռ» հրամանով, երկու գործողությամբ՝

Առաջին գործողություն. ձախ ձեռքով փոկը բռնել ձախ ուսից մի փոքր ցած, իսկ աջով միաժամանակ բռնել խզակոթը (փողի լայն մասից):

Երկրորդ գործողություն. աջ ձեռքով թեթևակիորեն բարձրացնելով զենքը՝ ձախով փոկը գլխի վրայով անցկացնել և գցել ուսին. փոկը վերցնել աջ ձեռքը, ձախ ձեռքը արագորեն ցած իջեցնել:

Ավտոմատը «Կրծքին-Ա՛Ռ» դրությունից «Մեջքին-Ա՛Ռ» դրության փոխադրելու և «Մեջքին-Ա՛Ռ» դրությունից «Կրծքին-Ա՛Ռ» դրության փոխադրելու համար նախապես զենքը վերցվում է «Փոկին-Ա՛Ռ» դրության:

Ծալովի կոթով ավտոմատը «Կրծքին-Ա՛Ռ» դրությունից «Մեջքին-Ա՛Ռ» դրության բերելու համար աջ ձեռքով բռնել փողաբերանից և ավտոմատը փոխադրել մեջքին:


«Մեջքին-Ա՛Ռ» դրությունից «Կրծքին-Ա՛Ռ» դրության բերելու համար աջ ձեռքով բռնել ավտոմատի փողաբերանից և այն ձգելով դեպի ձախ ուսը՝ փոխադրել «Կրծքին-Ա՛Ռ» դրության:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս դուրս գալ շարքից և մոտենալ հրամանատարին:
2. Հերթով հանդես եկե՞ք որպես պետեր և ենթականեր, տվե՛ք հրամաններ և կատարե՛ք վարժություններ:
3. Ավտոմատը «Փոկին-Ա՛Ռ» դրությունից ինչպե՞ս է վերցվում կրծքին:
4. Վարժությունների կատարման հրամանները սովորե՛ք արտասանել հստակորեն և կտրուկ:
5. Վարժությունները կատարե՛ք տանը՝ հայելու մոտ, ստուգելով ձեր կենցվածքը:


ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հեռավորության որոշման եղանակները

Նշանակետերի, կողմնորոշիչների և տեղանքի առարկաների հեռավորությունը՝ կախված իրադրությունից և լուծվող խնդիրների բնույթից, որոշվում են աչքաչափով, մեքենայի վազքաչափով, նշանակետերի (կողմնորոշիչների) անկյունային և գծային չափսերով, քայլերով, լույսի և ձայնի արագությունների հարաբերակցությամբ, լսողությամբ, տեղաշարժման արագությամբ և ժամանակով, տեղանքում երկրաչափական կառուցումներով:



Հեռավորության որոշումը առարկաների անկյունային և գծային չափսերով: Հեռավորության որոշման այս եղանակը հիմնված է անկյունային և գծային մեծությունների միջև գոյություն ունեցող փոխադարձ կախվածության վրա: Առարկաների անկյունային մեծությունը չափում են հազարերորդականներով՝ կողմնացույցի, հեռադիտակի և այլ դիտողական օպտիկական սարքերի օգնությամբ: Երբ հայտնի են նշանակետի չափսերը (բարձրությունը, լայնությունը կամ երկարությունը), նրա հեռավորությունը կարելի է որոշել անկյունային մեծությունների միջոցով, օգտվելով հետևյալ բանաձևից (*հազարերորդականի բանաձև*).

$$\xi = \frac{B \times 1000}{U}$$



Առարկաների անկյունային մեծությունը

Հ-ն՝ նշանակետի հեռավորությունն է (մետրերով),

Բ-ն՝ բարձրությունը (լայնությունը կամ երկարությունը) մետրերով,

Ա-ն՝ անկյունային մեծությունը հազարերորդականով:

Հազարերորդականը անկյունային մեծություն է, որը հավասար է հազարերորդական ռադիանին կամ այն կենտրոնական անկյանը, որը հենվում է շրջանագծի 1/6000 մասը կազմող աղեղի վրա: Օրինակ՝ նկարում հեռադիտակով դիտվող 12մ բարձրությամբ առանձին ծառի անկյունային

մեծությունը հավասար է հեռադիտակի ցանցի երեք փոքր բաժանքների (0-15):
Հետևաբար՝ մինչև առանձին ծառը (կողմնորոշիչը) հեռավորությունը կլինի

$$\zeta = \frac{12 \times 1000}{15} = 800 \text{ մ}$$

Նշանակետի անկյունային մեծությունները կարելի է որոշել նաև ձեռքի տակ գտնվող առարկաների՝ քանոնի, մատիտի, լուցկու տուփի, ձեռքի մատների օգնությամբ:

Պետք է հիշել, որ քանոնի 1 մմ-ը համապատասխանում է 0-02, կլոր մատիտը՝ 0-12, լուցկու տուփի երկարությունը՝ 0-90, լայնությունը՝ 0-60, բարձրությունը՝ 0-30, ձեռքի մատները՝ բութը՝ 0-40, ցուցամատը՝ 0-30, ճկույթը՝ 0-20 հազարերորդականի:

Օրինակ, եթե նշանակետի անկյունային մեծությունը քանոնով չափելիս (լայնությունը, երկարությունը կամ բարձրությունը) եղել է 6 մմ, ապա նշանակետի անկյունային մեծությունը կլինի՝ $0.02 \times 6 = 0-12$ հազարերորդական:

Հեռավորության որոշումը առարկայի գծային չափսերով, քայլերով, աչքաչափով, լսողությամբ

Գծային չափսերով առարկայի հեռավորությունը որոշելու համար աչքից 50 սմ հեռավորության վրա պահած քանոնի օգնությամբ չափել առարկայի բարձրությունը մմ-ով: Հետո առարկայի իրական բարձրությունը (լայնությունը) սանտիմետրերով բաժանել մմ-ով չափած բարձրության վրա և արդյունքը բազմապատկել 5 հաստատուն քվով: Կատարվի առարկայի հեռավորությունը՝

$$\zeta = \frac{P_r(\text{սմ})}{P_n(\text{մմ})} \times 5,$$

որտեղ P_r -ն առարկայի իրական բարձրությունն է սմ-ով, P_n -ն՝ հարաբերական բարձրությունը մմ-ով:

Օրինակ՝ 8 մ բարձրությամբ հեռագրասյան բարձրությունը մմ-ով ստացվել է 10: Հետևաբար, հեռավորությունը կլինի՝

$$\zeta = \frac{800}{10} \times 5 = 400 \text{ մ}$$



Հեռավորության որոշումը առարկայի գծային չափսերով

Հազարերորդականի բանաձևով և այս եղանակով օգտվելու համար պետք է իմանալ հիմնական մարտական տեխնիկայի և տեղական առարկաների գծային չափսերը: Այդ չափսերը տրված են աղյուսակում:

h/h	Առարկա	Չափաքան մետրերով		
		բարձրությունը	երկարությունը	լայնությունը
1.	Տանկ	2-2.5	6-7	3-3.5
2.	Զրահամեքենա	2	5-6	2-2.4
3.	Բեռնատար ավտոմեքենա	2-2.5	5-6	2-3.5
4.	Մարդատար ավտոմեքենա	1.6	4	1.5
5.	Մարդատար վագոն	4	20	3
6.	Երկաթուղային ցիստեռն	3	9	2.8
7.	Հեռագրասյուն	6-8	-	-
8.	Միջին հասակի մարդ	1.7		

Հեռավորության չափումը քայլերով: Այս եղանակի մասին մենք արդեն գիտենք ազիմուտով շարժվելու թեմայի ուսումնասիրման ժամանակ. այն կիրառվում է նաև տեղանքի սխեմաներ կազմելու, քարտեզի վրա կողմնորոշիչները անցկացնելու և մի շարք այլ դեպքերում: Քայլերի հաշվարկը կատարվում է գույգ քայլերով: Հեշտության համար յուրաքանչյուր 100 գույգ քայլից հետո կատարվում է նշում, և հաշվարկը սկսվում է զրոյից: Քայլերի քանակով որոշված հեռավորությունը մետրերով հաշվարկելու համար պետք է գույգ քայլերի քանակը բազմապատկել մեկ գույգ քայլի երկարության՝ 1.6մ վրա: Օրինակ, մինչև նշանակետ կատարվել է 350 գույգ քայլ, ուստի անցած ճանապարհը կկազմի՝ $350 \times 1.6 = 560$ մ: Սովորաբար միջառասակ մարդու քայլի երկարությունը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\Gamma = \frac{\Sigma}{4} + 0.37$$

Որտեղ Γ -ն՝ մեկ քայլի երկարությունն է մետրերով, Σ -ն՝ մարդու հասակը մետրերով: Օրինակ, եթե մարդու հասակը 1.72մ է, ապա նրա քայլի երկարությունը կլինի՝

$$\Gamma = \frac{1.72}{4} + 0.37 = 0.8\text{մ}$$

Հեռավորությունները քայլերով չափելու միջին սխալը կախված է շարժման պայմաններից և կազմում է անցած ճանապարհի մոտ 2 - 5%: Քայլերի հաշվարկը կարելի է կատարել նաև քայլաչափի օգնությամբ:

Հեռավորության որոշումը լույսի և ձայնի արագությունների միջոցով: Գործնականում լույսը տարածվում է ակնթաթոթեն (300 000 կմ/ժամ արագությամբ), իսկ ձայնը 330 մ/վրկ արագությամբ, այսինքն՝ մոտավորապես 1կմ 3 վայրկյանում: Տեղի ունեցած կրակոցի (պայթյունի) բռնկման վայրի հեռավորությունը որոշելու համար անհրաժեշտ է բռնկման պահից մինչև կրակոցի (պայթյունի) ձայնը լսելու պահն անցած վայրկյանների քանակը բաժանել երեքի: Օրինակ. դիտորդը պայթյունը լսել է բռնկումից 11 վայրկյան հետո: Հեռավորությունը մինչև բռնկման տեղը հավասար կլինի՝

$$\Sigma = \frac{11}{3} = 3.7\text{կմ}$$

Հեռավորության որոշումը լսողությամբ: Վարժված լսողությունը գիշեր ժամանակ հեռավորություններ որոշելու լավ միջոց է: Կարևոր նախապայման է լսելու տեղի ճիշտ ընտրությունը: Այն ընտրվում է այնպես, որ քամին անմիջապես չփչի

ականջի վրա: Բացի այդ, պետք է շրջակայքը մաքրել (մի քանի մետր շառավղով) աղմուկի աղբյուրներից՝ չոր խոտ, թուփ, թփուտ, ճյուղ և այլն: Հանգիստ, առանց քամի գիշերը նորմալ լսողության դեպքում աղմուկի տարբեր աղբյուրները կարող են լավել աղյուսակում նշված հեռավորությունների վրա:

Չայնային աղմուկի աղբյուրները	Հեռավորությունը մետրերով
Մարդու ոտնաձայն	40
Կոտրված ճյուղի ճարճատյուն	80
Ցածր խոսակցություն, զենքի լիցքավորում	100
Անտառահատում, կացնի հարվածներ	300
Խճուղով անցնող ավտոմեքենա	800
Տանկի շարժիչի աղմուկ	1000-1500
Ընկնող ծառի աղմուկ	600
Բահի, քլունգի հարվածներ քարին	մինչև 1000
Ավտոմատի (հրացանի) առանձին կրակոցի ձայն	2000-3000
Տանկերի, զրահամեքենաների շարժում	2000-4000

Հեռավորության որոշումը աչքաչափով: Աչքաչափը հիանալի ընդունակություն է տեսողության միջոցով առարկաների հեռավորության արագ որոշման համար՝ առանց լրացուցիչ սարքերի օգտագործման: Մարտական իրավիճակներում (որտեղ ժամանակը որոշիչ դեր է կատարում) դա հանդիսանում է հեռավորության որոշման հիմնական ձևը:

Ճիշտ աչքաչափը ձեռք է բերվում մշտական մարզումների արդյունքում, դրա համար անհրաժեշտ է վստահորեն տարբերակել մի քանի հեռավորություններ, օրինակ՝ 100, 500, 1000մ, որոնք առավել հարմար են ընդունել որպես չափանմուշներ: Մարզելով աչքաչափը, անհրաժեշտ է դրանք ամրապնդել հիշողության մեջ և դրանց հետ համեմատելով, գնահատել մյուս հեռավորությունները:

Փորձառու դիտորդը մինչև 1000մ հեռավորությունները կարող է որոշել 10 - 15% սխալով: 1000մ ավելի հեռավորությունների որոշման ժամանակ սխալները կարող են հասնել մինչև 30%, իսկ քիչ փորձվածության դեպքում՝ մինչև 50%:



Հիշի՛ր

Նշանակետի հեռավորության ճիշտ որոշումը հնարավորություն կտա կատարել անսխալ նշանառություն և նշանակետը խոցել առաջին կրակոցով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տան պատշգամբից՝ ձեռքի տակ եղած առարկաներով (քանոն, մատիտ, լուցկու տուփ), որոշիր հեռվում երևացող առարկայի հեռավորությունը, որի չափսերը քեզ հայտնի են:
2. Ինչպե՞ս են որոշում հեռավորությունը զույգ քայլերով:
3. Որտեղի ժամանակ որոշի՛ր կայծակի փայլատակման հեռավորությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ռազմագերիների և քաղաքացիական բնակչության պաշտպանությունը

Ռազմագերիների կարգավիճակը: Միջազգային իրավունքով ովքե՞ր են կոչվում ռազմագերիներ: Հայկական սովետական հանրագիտարանում ռազմագերի հասկացությունը բնութագրվում է հետևյալ կերպ. «Պատերազմի ժամանակ թշնամու ձեռքն ընկած զինված ուժերի մեջ մտնող անձինք, այդ թվում՝ պարտիզաններ, դիմադրության շարժման մասնակիցներ և այլ կոմբատանտներ» (ՀՍՀ, հատ. 9, էջ 578): Ուրեմն՝ ռազմագերիներ են համարվում միայն անմիջական ռազմական գործողություններին մասնակցած օրինական մարտիկները, կոմբատանտները (կոմբատանտ՝ ֆրանսերեն զինվոր, մարտիկ):

Համաձայն Ժնևի 1949թ. օգոստոսի 12-ի Կոնվենցիայի *ռազմագերիներ են համարվում՝*

- զինված ուժերի մարտիկները,
- կամավորական և աշխարհագրային ջոկատների մարտիկները, որոնք ունեն համազգեստ, տարբերանշաններ և զենքը կրում են բացեիքաց,
- մարտական գործողություններին աջակցող անձնակազմը (թիկունքային գործառնների զինծառայողները, աշխատողները, թղթակիցները, հոգևորականները և այլն),
- պետության կողմից չճանաչված ապստամբ կառավարության (իշխանության) զինված ուժերի մարտիկները,
- առևտրական նավատորմի և քաղաքացիական ավիացիայի անձնակազմերի անդամները,
- քաղաքացիական բնակչությունը, որը թշնամու մոտենալուն պես տարերայնորեն զենք է վերցնում իր օջախը (հայրենիքը) պաշտպանելու համար, պահպանում է պատերազմի օրենքները և զենքը կրում է բացեիքաց:

Ռազմագերիները հանցագործներ չեն համարվում: Նրանց մեկուսացումը պայմանավորված է բացառապես ռազմական անհրաժեշտությամբ:

Ռազմագերիներ չեն կարող համարվել՝

- վարձկանները, որոնք մարտական գործողություններին մասնակցում են բացառապես անձնական շահի նպատակով՝ մեծ վարձատրություն ստանալու համար,
- լրտեսները, այսինքն նրանք, ովքեր գործում են խաբեությամբ, գաղտնի եղանակով հավաքում են ռազմական տեղեկություններ,
- այն հիվանդները, վիրավորները, քաղաքացիական անձինք, որոնք օգտվելով Ժնևի Կոնվենցիայով իրենց տրամադրված պաշտպանությունից, անմիջական մասնակցություն են ունեցել մարտական գործողություններին:

Այս կատեգորիայի (խմբի) մարդիկ գերեվարվելու դեպքում ռազմագերու կարգավիճակ չեն ստանում:

Վարձկաններից և լրտեսներից պետք է տարբերել կամավորներին և ռազմա-

կան հետախույզներին, ինչպես նաև զինվորական հրահանգիչներին: Սրանք, ի տարբերություն վարձկանների, համարվում են անմիջական ռազմական գործողությունների օրինական մասնակիցներ և գերվելուն պես ստանում են ռազմագերու կարգավիճակ: Իսկ ռազմական հետախույզները հավաքում կամ փորձում են հավաքել ռազմական նշանակություն ունեցող տեղեկատվություն, կրելով իրենց զինված ուժերի համազգեստը:

Ռազմագերիների իրավունքները, նրանց հետ վարվելակերպը

Գերեվարվելուն պես յուրաքանչյուր ռազմագերի **պարտավոր է հայտնել՝**

- իր ազգանունը, անունը, կոչումը,
- ծննդյան տարեթիվը,
- անձնական համարը:

Հարցաքննությունը պետք է տարվի ռազմագերիների համար հասկանալի լեզվով:

Ռազմագերիները գերության ողջ ընթացքում պահպանում են իրենց զինվորական կոչումը և ստանում դրան համապատասխան իրավունքներ և արտոնություններ:



Ռազմագերիների նկատմամբ չեն կարող կիրառվել որևէ ֆիզիկական կամ բարոյական բռնություն, կամ հարկադրանքի այլ միջոցներ՝ նրանցից որևէ տեղեկություն ստանալու նպատակով:

Գերեվարվելուց հետո ռազմագերիները հնարավորինս արագ պետք է տեղափոխվեն ռազմագերիների համար հատուկ նախատեսված ճամբարներ, որոնք պետք է տեղակայված լինեն ռազմական գործողությունների գոտուց բավականին հեռու՝ վերջիններիս անվտանգությունն ապահովելու համար: Վտանգավոր գոտում կարելի է պահել միայն

այն ռազմագերիներին, որոնք իրենց վերքերի կամ հիվանդության հետևանքով տարհանման ժամանակ կենթարկվեն ավելի մեծ վտանգի, քան տեղում թողնելիս: Տարհանման ժամանակ գերեվարող պետությունը ռազմագերիներին պետք է ապահովի բավարար քանակությամբ խմելու ջրով և սննդով, ինչպես նաև նրանց տրամադրի անհրաժեշտ հագուստ և բուժօգնություն: Սովորաբար ռազմագերիները ենթարկվում են ներկայման ռազմագերիների ճամբարներում, և նրանց տեղաշարժման իրավունքը կարող է սահմանափակվել: Ռազմագերիները կարող են ներկայվել միայն ցամաքում գտնվող և հիգիենայի ու առողջության պահպանման առումով լիակատար երաշխիք տվող շենքերում: Բացառությամբ հատուկ դեպքերի, որոնք արդարացվում են հենց իրենց՝ գերիների շահերով, նրանց չի կարելի տեղավորել բանտային շենքերում:

Գերության մեջ պահող պետությունը պետք է ճամբարներում կամ ճամբարների հատվածներում, կամ այլ վայրերում ռազմագերիներին տեղաբաշխելուց հաշվի առնի նրանց ազգությունը, լեզուն և սովորույթները:

Ռազմագերիների համար նախատեսված ճամբարներում պետք է ստեղծվեն

բավարար կենցաղային պայմաններ, տրամադրվի անհրաժեշտ հագուստ, բուժօգնություն, սնունդ: Նրանց օրական հիմնական սննդի բաժինը իր որակով, քանակով և բազմազանությամբ պետք է լինի բավարար և ապահովի նրանց առողջության բարվոք վիճակը: Բոլոր ռազմագերիներին պետք է տալ բավարար քանակությամբ ջուր: Աշխատող ռազմագերիներին պետք է տրամադրվի լրացուցիչ սնունդ:

Ռազմագերիներին պետք է տրվի նաև ֆիզիկական վարժություններով զբաղվելու իրավունք և հնարավորություն, ներառյալ՝ սպորտով և սպորտային խաղերով:

Ռազմագերի կանանց պետք է տրամադրվեն առանձին ննջասենյակներ, նրանց նկատմամբ պետք է լինի առանձնահատուկ վերաբերմունք:



Խստիվ արգելվում է՝

- ռազմագերիների նկատմամբ կոլեկտիվ պատժամիջոցների կիրառումը,
- սննդին առնչվող ամեն տեսակի կարգապահական տույժերը,
- ռազմագերիներին օգտագործել վտանգավոր աշխատանքներում,
- միևնույն զանցանքի համար պատժել կրկնակի:

Ոչ մի ռազմագերի չի կարող օգտագործվել իր առողջությանը սպառնացող կամ վտանգավոր աշխատանքներում, *եթե նա դրան չի համաձայնում կամովին:*

Ռազմագերիներն ունեն նաև հստակ սահմանված պարտականություններ:

Նրանք *պարտավոր են՝* ենթարկվել գերության մեջ պահող պետության զինված ուժերում գործող օրենքներին, կանոնադրություններին, հրամաններին և այլ պարտադիր հրահանգներին:

Գերության մեջ պահող պետությունը իրավունք ունի դատական կամ կարգապահական միջոցներ ձեռնարկել ցանկացած ռազմագերու նկատմամբ, ով խախտում է նշված օրենքները, կանոնադրությունները և այլ իրավական ակտեր:

Քաղաքացիական բնակչության պաշտպանությունը

Միջազգային մարդասիրական իրավունքի կարևորագույն նորմերից է քաղաքացիական բնակչության անվտանգության ապահովումը պատերազմական գործողությունների ժամանակ: Քաղաքացիական բնակչության պաշտպանությանն են ուղղված «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 1949թ. Ժնևի Կոնվենցիայի և 1977թ. Առաջին լրացուցիչ արձանագրության դրույթները: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում «քաղաքացիական բնակչություն» հասկացությունը.

Քաղաքացիական բնակչության թվին են պատկանում բոլոր այն անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին: Եվ քանի որ նրանք չեն մասնակցում ռազմական գործողություններին, ապա Միջազգային մարդասիրական իրավունքը ենթադրում է, որ *պատերազմող կողմերը՝*

- քաղաքացիական բնակչությանը կամ առանձին քաղաքացիական անձանց,

ինչպես նաև քաղաքացիական օբյեկտները չպետք է ենթարկեն ռազմական հարձակումների,

- չպետք է խտրականություն ցուցաբերեն քաղաքացիական բնակչության տարբեր հատվածների հանդեպ՝ ելնելով նրանց կրոնական, քաղաքական համոզմունքներից կամ ռասայական պատկանելիությունից:

Արգելվում է՝

- քաղաքացիական անձանց սպանությունը,
- խոշտանգումները,
- մարմնական պատիժներն ու խեղումները,
- նրանց բուժման անհրաժեշտությունից չբխող բժշկական ու գիտական փորձերը:

Քաղաքացիական բնակչությունը չպետք է ոչ մի դեպքում օգտագործվի որպես «կենդանի վահան»՝ ռազմական օբյեկտները և թիրախները պաշտպանելու նպատակով:

Արգելվում է քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտների՝ սննդամթերքի պաշարների, սննդամթերք արտադրողների, ցանքսերի, անասունների, խմելու ջրի մատակարարման կառույցների և դրա պաշարների վրա հարձակվելը, դրանք ոչնչացնելը, փչացնելը, դուրս կրելը, *եթե դրանք չեն օգտագործվում զորքերի ապահովման համար:*

Գրավյալ տարածքներում կանանց ու երեխաների հանդեպ պետք է լինի հատուկ հարգանք, նրանց պետք է պաշտպանել բռնաբարությունից, մարմնավաճառության հարկադրելուց և ցանկացած այլ անվայել ոտնձգություններից:

Ռազմական ընդհարման ընթացքում բռնազավթված տարածքի բնակչությունը պարտավոր է ենթարկվել բռնազավթված տարածքներում հաստատված ռազմական վարչակազմերի բոլոր օրինական պահանջներին և կատարել ժամանակավոր վարչակազմերի կողմից ընդունված իրավական ակտերի պահանջները, որոնք ապահովում են քաղաքացիական բնակչության կենսագործունեությունը:



Բռնազավթող պետությունը պարտավոր է ՄԻ-ի նորմերին համապատասխան ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հնարավորինս վերականգնվի և պահպանվի հասարակական կարգը, ապահովվի բնակչության կենսագործունեությունը, հարգվեն տվյալ երկրում գոյություն ունեցող օրենքները, ինչպես նաև առանձին անձանց կյանքը, նրանց պատիվը, ընտանեկան իրավունքները և կրոնական համոզմունքները:



Հիշի՛ր

1. Պատերազմական գերությունը չի դիտվում որպես պատիժ ռազմական գործողություններին մասնակցելու համար:
2. Ոչ մի ռազմագերի չի կարող օգտագործվել իր առողջությանը սպառնացող կամ վտանգավոր աշխատանքներում, *եթե նա կամովին չի համաձայնում դրան:*
3. *Խստիվ արգելվում է* ռազմագերիների նկատմամբ կոլեկտիվ պատժամիջոցների կիրառումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր են կոչվում ռազմագերիներ: Տվե՛ք նրանց հանրագիտարանային սահմանումը:
2. Ի՞նչ է կոմբատանտը:
3. Ժնևի 1949թ. օգոստոսի 12-ի Կոնվենցիայով ովքե՞ր են համարվում ռազմագերիներ:
4. Ովքե՞ր չեն կարող համարվել ռազմագերիներ:
5. Գերության մեջ պահող պետության կողմից ի՞նչ է արգելվում ռազմագերիների նկատմամբ:
6. Ի՞նչ պարտավորություններ ունեն ռազմագերիները գերեվարող պետության հանդեպ:

ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Մարդկությունն իր ողջ պատմության ընթացքում մշտապես ենթարկվել է աղետների: Դրանք հանգեցնում են հազարավոր մարդկային զոհերի, հսկայական նյութական կորուստների, մի ակնթարթում կարող են ավերել այն ամենը, ինչը ստեղծվել է տարիների, տասնամյակների և նույնիսկ դարերի ընթացքում: Սակայն մարդը երբեմն հաշտվում է վտանգների հետ, որոնք մշտապես ուղեկցում են իրեն յուրաքանչյուր քայլում: Հաճախ նույնիսկ անտեսում է նախազգուշական միջոցառումները:

Քաղաքակրթության հետագա զարգացման անհրաժեշտ պայման է անվտանգությունը: Նման պայմաններում առանձնապես կարևորվում է բնակչության ուսուցումը՝ անվտանգ վարքի կանոնների հիմունքներին տիրապետելու համար: Մարդն իր պահելաձևով չպետք է նպաստի պատահարների, աղետների առաջացմանը, իսկ դրանց ծագման դեպքում իր ճիշտ գործողություններով առավելագույնս խուսափի հնարավոր հետևանքներից, ունակ լինի փոխօգնության, ինքնօգնության:

Վերհիշենք 8-րդ և 9-րդ դասարաններում մեր քննարկած թեմաները:

Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանությունն իրականացնում է պետական լիազոր մարմինը, որն այդ նպատակով համակարգում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը:

Արդեն ուսումնասիրել ենք մեր հանրապետության տարածքում առավել տարածված աղետներին նվիրված թեմաները:

Երկրաշարժերը երկրակեղևում տեղի ունեցող բնական երևույթների հետևանք են: Երկրակեղևի ուժգին ցնցումները հանգեցնում են շենքերի և կառուցվածքների ավերման, մարդկային զոհերի: Երկրաշարժի էներգետիկ գնահատականը կատարվում է *մագնիտոդներով*: Երկրաշարժի ազդեցության չափը տվյալ տարածքում որոշվում է *բալերով*: Երկրաշարժերից պաշտպանության հիմնական հուսալի ուղին շենքերի և կառուցվածքների անհրաժեշտ սեյսմակայունության ապահովումն է: Կարևոր է նաև բնակչության համապատասխան պահելաձևը:

Սողանքները մեր երկրում տարածված երկրաբանական վտանգավոր երևույթ են: Անբարենպաստ երկրաբանական պայմաններով լանջերի վրա լեռնային ապարների սահքին նպաստում է խոնավության թափանցումը լանջի խորքը: Նման լանջերի վրա պետք է խուսափել լանջի բնական մակերևույթի ձևափոխումից և արհեստական խոնավացումից:

Մելավները հետևանք են փոխի, ոչ ամուր մակերևույթով լանջի վրա ջրի հոսանքների, որոնք առաջացնում են հողմնահարված մասնիկներ պարունակող սրընթաց հոսանքներ:

Հանրապետության տարածքում վտանգ են ներկայացնում նաև ջրհեղեղները, բնական հրդեհները, ստորերկրյա ջրերի բարձր և ցածր մակարդակները, օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական երևույթներից՝ կարկուտը, ցրտահարությունը, ուժեղ քամիները, երաշտը, մերկասառույցը, տեղատարափ անձրևները և այլն:

Տեխնաձին բնության աղետներից են հրդեհները և պայթյունները: Այդուհանդերձ դա-
դարեցնելու համար այրման գոտին սառեցնում են ջրով կամ լուծույթներով, մեկու-
սացնում փրփուրով կամ այլ նյութերով, այրմանը մասնակցող նյութերը
ջրիկացնում են: Խիստ կարևորվում է հրդեհի դեպքում բնակչության ճիշտ պահե-
լաճնը:

Աշխարհում հայտնի են 6 *մլն-ից* ավելի քիմիական նյութեր, որոնց մեծ մասը
թունավոր է: Ուժեղ ներգործող թունավոր նյութերի (ՌԻՆԹՆ) արտանետումը շրջա-
կա միջավայր առաջացնում է կենդանական աշխարհի, օդի, ջրի թունավորում:
Դրանք թողնում են ընդհանուր և հեղձուցիչ ազդեցություն: ՌԻՆԹՆ-ի ամպը կարող
է տարածվել մեծ հեռավորությունների վրա: ՌԻՆԹՆ-ից մեզ մոտ տարածված են
բլորը և ամոնիակը:

Հայտնի են քիմիական տարրեր, որոնց ատոմի միջուկը տրոհվում է՝ արձակե-
լով անտեսանելի ճառագայթներ և նեյտրոններ: Դրանք բնորոշվում են իոնացնող
և քափանցող հատկություններով: Իոնացնող ճառագայթները քափանցելով կեն-
դանի օրգանիզմ, խախտում են նյութափոխանակության գործընթացները, հան-
գեցնում ծանր հիվանդությունների: Ճառագայթային խոցման աստիճանը
կախված է ճառագայթահարման բաժնեչափից և տևողությունից: Ճառագայթա-
հարումից պաշտպանվելու համար խիստ կարևոր է բնակչության կողմից վարվե-
լաճնի կանոնների պահպանումը:

Հարձակման ժամանակակից միջոցներ

Մարդկության ստեղծած հարձակման միջոցներից ամենասարսափելին զանգ-
վածային կորուստներ և ավերածություններ պատճառող, խոցման մեծ հնարավո-
րություններով օժտված **զանգվածային խոցման զենքն է:**

Զանգվածային խոցման զենքի վնասարար գործոնները կարող են որոշակի ժա-
մանակամիջոցում կորուստներ պատճառել հակառակորդին և նրա վրա թողնել ու-
ժեղ բարոյաև հոգեբանական ազդեցություն:

Գոյություն ունեցող հիմնական զանգվածային խոցման զենքերից են՝ միջուկա-
յին, քիմիական և կենսաբանական զենքերը:

Միջուկային զենք

Միջուկային զենքը պայթյունային գործողության զանգվածային ոչնչացման
զենք է, որը հիմնված է շոթայական միջուկային ռեակցիաների ժամանակ անջատ-
վող ներմիջուկային էներգիայի օգտագործման վրա:

Միջուկային պայթյունի հետևանքով անջատվում է հսկայական էներգիա: Մի-
ջուկային պայթյունի խոցող գործոններն են՝ հարվածային ալիքը, լուսային ճա-
ռագայթումը, ներթափանցող ճառագայթումը, ռադիոակտիվ վարակումը,
էլեկտրամագնիսական իմպուլսը:

Հարվածային ալիքը օդի խիստ սեղմված գոտի է, որը տարածվում է բոլոր ուղ-
ղություններով գերձայնային (330 մ/վրկ և ավելի) արագությամբ: Վերջինիս ազդե-
ցությամբ առաջանում են շենքերի և կառուցվածքների զանգվածային
ավերածություններ, մարդկային զոհեր և վիրավորներ:

Հարվածային ալիքից պաշտպանվելու համար կարող են օգտագործվել տեղանքի ծալքերը, ապաստարանները, նկուղները և այլ ամուր կառուցվածքներ:

Լուսային ճառագայթումը ճառագայթային էներգիայի հոսանք է, որն ընդգրկում է ուլտրամանուշակագույն, ինֆրակարմիր և այլ ճառագայթներ: Այն արդյունք է միջուկային պայթյունից առաջացած շիկացած նյութերի և շիկացած օդի (10000°C): Տարածվում է ակնթարթորեն և տևում տասնյակ վայրկյաններ:

Լուսային ճառագայթումը առաջացնում է մաշկի այրվածքներ, տեսողության կորուստ, համատարած հրդեհներ:

Լուսային ճառագայթման ամփօշական ազդեցությունից կարելի է պաշտպանվել ստվեր առաջացնող ցանկացած արգելքի միջոցով: Այդ ազդեցությունը նվազեցնում է պակաս քափանցիկ օդը /փոշոտ, ծխոտված, մառախուղ, անձրև, ձնատեղում/:

Ներթափանցող ճառագայթումը միջուկային պայթյունի ժամանակ արձակվող գամմա ճառագայթների և նեյտրոնների հոսք է: Վերջինս իոնացնում է կենդանի օրգանիզմների կազմի մեջ մտնող ատոմները և մոլեկուլները: Արդյունքում՝ խախտվում են կենդանի օրգանիզմների կենսական ֆունկցիաները, հնարավոր են ոսկրաուղեղի խոցում, ճառագայթային հիվանդություն:

Ներթափանցող ճառագայթումից մարդը կարող է լիովին պաշտպանվել ապաստարաններում և հակաճառագայթային թաքստոցներում: Իսկ բաց և հատկապես ծածկված ճեղքերը զգալիորեն նվազեցնում են այդ ազդեցությունը:

Միջուկային պայթյունի ամպից տեղացող ռադիոակտիվ նյութերով տեղի է ունենում մթնոլորտի մերձերկրյա շերտի, օդային տարածության և **տեղանքի ռադիոակտիվ վարակում**: Մարդկանց խոցման վտանգը ռադիոակտիվ վարակման շրջանում կարող է տևել շաբաթներ, ամիսներ: Տեղանքի վարակման մասշտաբները և աստիճանը կախված են պայթյունի քանակից, հզորությունից և տեսակից, օդերևութաբանական պայմաններից: Պայթյունից առաջանում է հսկա ամպ՝ կազմված ռադիոակտիվ մասնիկներից: Ամպը տեղաշարժվում է քամու ուղղությամբ: Ամպից անջատված ռադիոակտիվ մասնիկները, ընկնելով գետնին, առաջացնում են ռադիոակտիվ վարակման գոտի:

Բնակչության պաշտպանության համար կարևոր է սկզբնական շրջանում, հատկապես առաջին օրերին, պատասպարվել ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում կամ նկուղներում:

Էլեկտրամագնիսական իմպուլսը տևում է վայրկյաններ: Այն տարածվում է էլեկտրալարերով:

Հնարավոր են կապի և էլեկտրական սարքավորումների խաթարումներ:



Միջուկային պայթյուն

Քիմիական զենք

Քիմիական զենքը զանգվածային խոցման զենք է՝ հիմնված քիմիական նյութերի թունավոր հատկությունների վրա: Ջենքի հիմնական բաղադրամասերն են մարտական թունավոր նյութերը /ԹՆ/, դրանց տեղափոխման և կիրառման սարքերը, կառավարման սարքերը:

Տարածքը, որի սահմաններում ԹՆ-ի ազդեցության տակ տեղի են ունեցել մարդկանց և գյուղատնտեսական կենդանիների զանգվածային ախտահարումներ, կոչվում է *քիմիական վարակման օջախ* /ԶՎՕ/: ԶՎՕ-ն և այն տարածքը, որի վրա նստել է ախտահարող խտությամբ վարակված օդի ամպը, կոչվում է *քիմիական վարակման գոտի*:

Ըստ մարդու օրգանիզմի վրա ազդեցության *ԹՆ-ն լինում են*.

Նյարդակաթվածային ազդեցության ԹՆ /VX, գարին, գոման/: Դրանք լինում են գոլորշու, կաթիլահեղուկային վիճակում, մարդու օրգանիզմ են թափանցում շնչառական, աղեստամոքսային ուղիներով: Ախտահարում են նյարդային համա-

կարգը: Կայուն են: Ախտահարման նշաններն են՝ թքարտադրություն, շնչառության դժվարություն, բիբերի նեղացում, սրտխառնություն, կաթվածահարություն: Դրանք ամենավտանգավոր ԹՆ-ն են: Դրանց շատ փոքր քանակը բավարար է մարդու ախտահարման համար:

Պաշտպանական միջոց են հակազգալ և պաշտպանիչ հագուստը, իսկ ախտահարվածին ներարկվում է հակաթույն:



Քիմիական զենք

Մաշկաթարախային ներգործության ԹՆ /իպրիտ, լյուիզիտ/: Կաթիլահեղուկային և գոլորշանման վիճակում ախտահարում են մաշկը և աչքերը: Գոլորշին ներշնչելիս ախտահարվում են շնչուղիները և թոքերը, վարակված սնունդ և ջուր ընդունելիս՝ մարսողական օրգանները: Առաջանում է օրգանիզմի թունավորում:

Այս ԹՆ-ի կիրառման պայմաններում անհրաժեշտ է պաշտպանվել հակազգա-գով և պաշտպանիչ հագուստով:

Հեղճուցիչ ազդեցության ԹՆ-ը /ֆոսգեն, դիֆոսգեն/ օրգանիզմի վրա ազդում են շնչառական օրգանների միջոցով: Ախտահարման նշաններն են՝ քաղցրանման տիպի համ բերանում, գլխապտույտ, հազ, թուլություն: Վարակման օջախից դուրս բերելուց հետո այդ զգացողությունները գրեթե վերանում են: Բայց դա խաբուսիկ է, ընդամենը գաղտնի շրջան, որին հաջորդում են լուրջ խանգարումներ: Տուժածին հազցնում են հակազգա, դուրս բերում վարակման շրջանից, տաք ծածկում են և ապահովում հանգիստը:

Ընդհանուր ազդեցության թունավոր ԹՆ-ը /կապտաթթու, քլորցիան/ շատ թունավոր են՝ մահացու ազդեցության, ախտահարում են և՛ մաշկով, և՛ շնչառական, մարսողական ուղիներով: Տուժածին ներարկում են հակաթույն, երբեմն կատարում արհեստական շնչառություն և շտապ տեղափոխում բուժկետ:

Գրգռիչ ազդեցության ԹՆ-ը /սի-էս, ադամսիտ/ առաջացնում են սուր այրոց և ցավ բերանում, կոկորդում ու աչքերում, արցունքազատում, շնչառության դժվարություն:

Հոգեքիմիական ազդեցության ԹՆ-ը /բի-զեթ/ ազդում են կենտրոնական նյարդային համակարգի վրա և առաջ բերում հոգեկան և ֆիզիկական խանգարումներ /խլություն, կուրություն/: Այս ԹՆ-ով ախտահարվածի մարմնի վարակված մասերը պետք է մշակել օճառաջրով, աչքերը և քիթերանը մաքրել ջրով:

Կենսաբանական զենք

Կենսաբանական զենքը կենսաբանական միջոցներով հանդերձավորված հատուկ զինամթերքներն են ու մարտական սարքերը: Մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի խոցումը կատարվում է հիվանդաբեր միկրոօրգանիզմների և վերջիններիս մի մասի արտադրած թույներով: Բնորոշվում է վարակիչ հիվանդությունների առաջացմամբ, արագ տարածմամբ, երկարատևությամբ, գաղտնի շրջանով: Որոշվում է լաբորատոր հետազոտությունների միջոցով: Արտաքին միջավայրում մանրէներն ու թույները /տոքսինները/ դժվար են հայտնաբերվում: Կարող են օդի հետ քափանցել չհերմետիկացված շինություններ:

Միկրոօրգանիզմներից են.

Մանրէները` հիվանդաբեր բուսական ծագման միաբջիջ միկրոօրգանիզմներ են, կայուն են ցածր ջերմաստիճաններում, նույնիսկ բացասականներում: Որոշ տեսակները /սիբիրյան խոց, փայտացում առաջացնող/ արտաքին միջավայրում ստեղծում են պաշտպանիչ թաղանթներ, ինչը դժվարացնում է դրանց վարակազերծումը: Մանրէները առաջացնում են նաև ժանտախտ, խոլերա, բրուցելոզ և այլն:

Վիրուսները մանրագույն միկրոօրգանիզմներ են: Ի տարբերություն մանրէների, աճում և բազմանում են միայն կենդանի հյուսվածքներում: Առաջացնում են սև ծաղիկ, դեղին տենդ:

Ռիկետսիաները ձևով և չափերով մոտ են մանրէներին, բազմանում են պարզ բաժանումով: Ապրում են միայն իրենց խոցած օրգանի հյուսվածքներում: Առաջացնում են բժավոր տիֆ, տենդ:

Սունկները միաբջիջ և բազմաբջիջ օրգանիզմներ են: Լավ են տանում չորացումը, արևի լույսի և վարակազերծող նյութերի ազդեցությունը: Առաջացնում են կարդիոզ:



Կենսաբանական զենք

Տոքսինները /թույները/ որոշ մանրէների կենսագործունեության արդյունք են: Չորացրած վիճակում իրենց թունավորությունը պահպանում են մինչև մի քանի ամիս: Առանձնապես թունավոր է բոտուլիզմի տոքսինը, որը մարդու օրգանիզմում առաջացնում է ծանր խանգարումներ:

Կենսաբանական զենքից մարդկանց և կենդանիների հիվանդացումը առաջ է գալիս վարակված օդը շնչելու, լորձաթաղանթի և վնասված մաշկի վրա մանրէներ ընկնելու, վարակված սննդի և ջրի օգտագործման, վարակված միջատների և տզերի խայթոցների, վարակված իրերին դիպչելու, վարակված մարդկանց հետ շփվելու հետևանքով և այլն:

Կենսաբանական զենքի **կիրառման նշաններն են՝**

- արկերի և ռումբերի պայթման խուլ ձայնը, ի տարբերություն սովորական զինամթերքի,
- պայթման տեղում զինամթերքի խոշոր բեկորների առկայությունը,
- հեղուկի կաթիլների և փոշենման նյութերի առկայությունը տեղանքում,
- զինամթերքի պայթման և բեռնարկղերի անկման վայրում միջատների և տզերի անսովոր կուտակումը,
- մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացումը:

Կենսաբանական զենքի կիրառումը վկայող նշանների դեպքում պետք է անմիջապես հազմել անհատական պաշտպանության միջոցներ՝ հակազագ, շնչադիմակ, դիմակ, մաշկի պաշտպանության միջոցներ: Բժշկական պաշտպանության միջոցներն են՝ վակցինաշիճուկային պատրաստուկները, հակաբիոտիկները և այլ դեղանյութեր, որոնք կիրառվում են վարակիչ հիվանդությունների հատուկ և ծայրահեղ կանխարգելման համար:

Կենսաբանական խոցումն իրականացվում է աերոզոլներով օդի վարակմամբ, միջատների, կրծողների միջոցով վարակի տարածմամբ, տարբեր զինամթերքներով, փոշիներով, ջրի և սննդի թունավորմամբ:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար կիրառվում են մի շարք դեղամիջոցներ, իսկ մանրէաբանական միջոցների վտանգագերծման համար՝ հատուկ քիմիական նյութեր:

Հարձակման ժամանակակից սովորական զենքեր

Հարձակման սովորական միջոցները հիմնված են պայթուցիկ նյութերի և հրկիզվող խառնուրդների էներգիայի վրա /ավիացիոն ռումբեր, ականներ, տորպեդներ, հրթիռներ/:

Գերճշգրիտ զենքը /Գ-Ջ/ ունի նշանակետին հասնելու բարձր ճշգրտություն (օրինակ՝ թևավոր հրթիռները): Թևավոր հրթիռները զինված են համակցված կառավարման բարդ համակարգով, որը ուղղորդում է հրթիռի թռիչքը համաձայն նախօրոք կազմված քարտեզի: Թռիչքի նախապատրաստման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը՝ տեղադրված հրթիռակողի համակարգչի հիշողության վրա, կազմված է երկրի հետախուզական արհեստական արբանյակների տրվյալներով: Հաշվի է առնվում նաև տեղանքի ռելիեֆը: Կառավարման համակարգի օգնությամբ թռիչքն իրականացվում է ցածր բարձրությունների վրա, որը դժվարացնում է հրթիռի հայտնաբերումը:



155մմ կառավարվող արկ

Գերճշգրիտ զենքի թվին են պատկանում նաև կառավարվող բալիստիկ հրթիռները, ավիացիոն ռումբերը և պարկուճները, հրետանային արկերը, տորպեդ-

ները, հետախուզահարվածային, զենիթային և հակատանկային հրթիռային համալիրները:

Ջանգվածային խոցման զենքի արդյունավետություն ունեն ծավալային պայթյունի զինամթերքը և գնդիկավոր ավիառումբերը, որոնք մինչև ֆուտբոլի գնդակի մեծություն ունեն, պարունակում են մինչև 5 - 6 մմ-ոց 300-ից ավելի մետաղյա կամ պլաստմասսայե գնդիկներ: Նետվում են հատուկ փաթեթներով՝ խոցելով մինչև 250 հազ մ²:

Ծավալային պայթյունի զինամթերքներում /կամ վակուումային ռումբերում/ որպես մարտական լիցք օգտագործվում են հեղուկ ածխաջրածնային վառելիքներ: Վերջիններով լցված բեռնարկը օդում բացվում է, խառնուրդը դուրս է հոսում:



Վակուումային ռումբ

Առաջանում է գազային ամպ, որը պայթեցվում է հատուկ պայթուցիչով և բռնկվում: Ծագած գերձայնային արագությամբ տարածվող հարվածային հզոր ալիքը ավերում, ամայացնում է ավելի քան 1 հա տարածություն: Ջերմաստիճանը հասնում է մինչև 3000 °C: Իր ավերիչ ուժով համեմատելի է մարտավարական միջուկային զինամթերքների հետ: Պայթյունը կարող է հանգեցնել մարդկանց մահացու

տարբեր վնասվածքների:

Պաշտպանության միջոցառումները գրեթե անարդյունավետ են, որը, թերևս, հիմք է հանդիսացել ՄԱԿ-ի կողմից զենքի այս տեսակի արգելման պահանջի:

Հրկիզող զենքերը հրկիզող նյութերն ու խառնուրդներն են, որոնց այրումը առաջացնում է բարձր ջերմաստիճան: Դրանց թվում են՝

նապալմը բենզինի և թանձրացնող փոշու խառնուրդ է՝ բոցավառման բարձր աստիճանով, այրման օջախի ջերմությունը հասնում է 1200°C: Կաշուն է, այրվում է նույնիսկ ջրային մակերևույթի վրա,

հրահելը կազմված է նավթամթերքներից, վրան ավելացրած փոշենման մագնեզիում, հեղուկ ասֆալտ և ծանր յուղեր: Այրման ջերմաստիճանը բարձր է՝ 2800°C,

թերմիտային կազմերը խառնուրդներ են երկաթից, ալյումինից, որոնց ավելացված են բարիումի սելիտրա, ծծումբ և կապակցողներ: Այրվում են առանց օդի մուտքի: Ջերմաստիճանը 3000°C է, որից ճաքճքում են նույնիսկ բետոնը և աղյուսը, այրվում է երկաթը,

սպիտակ ֆոսֆորը կիսաթափանց պինդ, թունավոր մոմանման նյութ է: Ինքնայրվող է, ջերմաստիճանը՝ 900 - 1200°C: Օգտագործվում է նապալմի և հրահե-



Վակուումային ռումբի պայթյունը

լի կազմում որպես ինքնաբոցավառվող բաղադրիչ:

Հրկիզող զենքը օգտագործվում է որպես ավիառումբ, պարկուճ, հրետանային զինամթերք, հրանետ, նռնակ: Դրանք առաջացնում են ծանր այրվածքներ, այրուտներ: Շիկացած օդը մարդու վերին շնչառական ուղիներում առաջացնում է այրվածքներ:


Եթե հրկիզող նյութերը ընկնում են հագուստի վրա, այն պետք է արագ դուրս նետել կամ ծածկել թևքով, շորի եզրով: Իսկ հրախառնուրդի դեպքում պետք է ծածկել բրեզենտով, բաճկոնով, ընկղմվել ջրի մեջ կամ գլորվել հողի վրա:

Խոցման ոչ ավանդական զենքեր

Գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ստեղծվում են նոր ֆիզիկական սկզբունքների վրա հիմնված նոր զենքեր՝ ճառագայթային, երկրաֆիզիկական, բիոտիկական, տեղեկատվական, ինֆրաձայնային, էթնիկական և այլն: Ժամանակակից զենքերի սկզբունքորեն նոր համակարգերի ստեղծումը հանգեցնում է նույնիսկ «Աստղային պատերազմներ» վարելու մեթոդների մշակման:

Ներկայացնենք բնակչության խոցման այդ նոր զենքերից մի քանիսը:

Լազերային զենք. ճառագայթային զենքի տեսակ է, լույսի արագությամբ էլեկտրամագնիսական էներգիայի ճառագայթման օպտիկական զենքատոր: Այն կարող է նեղ ուղղորդված փնջով բարձր էներգիա ճառագայթել: Լազերի խոցող գործողությունն արտահայտվում է ճառագայթահարվող մակերեսի ջերմաստիճանի ակնթաթային բարձրացումով, որի հետևանքով տեղի է ունենում խոցման օբյեկտի հալում, այրում, գոլորշիացում, մարդկանց կուրացում և թերմիկ այրվածքների առաջացում: Լազերային զենքերը կարող են արդյունավետ խոցել տիեզերական սարքերը, օդային նշանակետերը, հրթիռների ինքնաշահման գլխիկները և այլն:



Լազերային զենք

Բիոտիկական զենքեր. կառուցված

են այնպիսի միջոցների օգտագործման սկզբունքով, որոնք մարդկանց վերածում են ինքնուրույն մտածողությունից զուրկ և կույր կամակատարների: Կարող են կիրառվել հոգեբանագրգռիչ մարտական զենքատորներ, որոնք կարող են նեղ ուղղորդված ազդեցությամբ խոցել մարդկանց կենսական կարևոր ֆունկցիաները, շնչառությունը, սիրտ-անոթային համակարգը և այլն: Կարող են կիրառվել հոգեբանական ազդեցության համակարգչային տեխնոլոգիաներ, որոնք անցնելով մարդու գիտակցության մեջ՝ հնարավորություն են տալիս ճշգրիտ կանխորոշել և կարգավորել նրա հոգեբանական ու ֆիզիկական վիճակը:

Երկրաֆիզիկական զենքեր. ընդգրկում են ռազմական նպատակներով երկրի քարտրտում, ջրոտրտում և մթնոլորտում տեղի ունեցող գործընթացների վրա ազդելու միջոցները: Դրանք այն միջոցներն են, որոնք առաջացնում են երկրաշարժեր,

փլուզումներ, սողանքներ, սելավներ, երաշտ, երկարատև անձրևներ և այլ բնական վտանգավոր երևույթներ, օգոնային շերտի արհեստական խախտում: Դրանք հանգեցնում են ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության հետևանքով մարդկանց, կենդանիների և բույսերի ախտահարման:

Տեղեկատվական զենք. բնակչության և զինված ուժերի անձնակազմի վրա ազդելու համար կարող են կիրառվել տիեզերական հեռարձակիչներ և իրականացնել պարբերական համակարգված հաղորդումներ, որոնք պետք է ազդեն ոչ թե մարդկանց գիտակցության, այլ էմոցիաների վրա: Խեղաթյուրող, բայց ճշմարտաման տեղեկատվության խելացի հեռարձակումները, պայթյունավտանգ իրավիճակների հնարավոր մոնիթինգը կարող են վերածվել հարձակման հզոր միջոցի՝ հանգեցնելով իրավիճակի անկայունության:

Արդեն շրջանառության մեջ է դրված այսպես կոչված «Տեղեկատվական պատերազմ» արտահայտությունը, որի հիմնական նպատակն է մարդկային զանգվածների վարքագծի փոփոխությունը:

Խոցման ոչ ավանդական ցուցանիշներ ունեցող զենքերի ստեղծումը հրատապ է դարձնում դրանցից բնակչության պաշտպանության միջոցների և եղանակների մշակումն ու իրականացումը:



Հիշի՛ր

1. Նախորդ դասարաններում անցած՝ հանրապետության տարածքում առավել տարածված վտանգավոր աղետները և դրանցից պաշտպանվելու միջոցառումները:
2. Քեզ շրջապատող մարդկանց և քո գիտելիքներից ու իրազեկությունից է կախված զանգվածային խոցման միջոցների և հարձակման ժամանակակից զենքերի աղետալի հետևանքների նվազեցման ու հաղթահարման արդյունավետությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրի՛ր միջուկային պայթյունի խոցող գործոնները:
2. Ի՞նչ է քիմիական ախտահարման օջախը:
3. Դասակարգի՛ր թունավոր նյութերն ըստ մարդու օրգանիզմի վրա ունեցած ազդեցության:
4. Ներկայացրո՛ւ կենսաբանական զենքի բնութագիրը:
5. Թվարկի՛ր կենսաբանական զենքի կիրառման հայտանիշները:
6. Ի՞նչ են իրենցից ներկայացնում հարձակման սովորական միջոցները:
7. Թվարկի՛ր խոցման ոչ ավանդական զենքերը:

Ազդարարման միասնական համակարգ

Արտակարգ իրավիճակներում /ԱԻ/ և ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանության համար անհրաժեշտ է կատարել միջոցառումներ, որոնք *իրականացվում են՝*


1. վաղօրոք և
2. արտակարգ իրավիճակների անմիջական սպառնալիքի կամ ծագման դեպքում:

Առաջին խմբի *միջոցառումներից են՝*

- հնարավոր ԱԻ-ի կանխումը և հետևանքների նվազեցումը,
- արտակարգ իրավիճակներում բնակչության վարքի կանոնների ուսուցումը:

Երկրորդ խմբի միջոցառումների թվում է՝ կառավարման համապատասխան մարմինների, վթարափրկարարական կազմավորումների և բնակչության ազդարարումը ԱԻ-ի սպառնալիքի կամ ծագման մասին:

Բնակչությանը ազդարարում են հակառակորդի կողմից խոցման ժամանակա-



Արդյունաբերական շշակներ

կից միջոցների մոտակա կիրառման դեպքում, որին պետք է հետևի բնակչության պատասպարումը կամ պաշտպանական այլ գործողությունների կատարումը: Բնակչությանը ազդարարում են նաև բնական աղետի սպառնալիքի կամ ծագման, արտադրական աղետի /քիմիական, ճառագայթային և այլն/ մասին: Դրան բնակչությունը պետք է անմիջա-

պես արձագանքի համապատասխան պաշտպանական գործողություններով: Իսկ այդ գործողությունների բնույթին, կատարմանը բնակչությունը իրազեկված է արդեն նախօրոք: Ազդարարման ժամանակ հաղորդվում են նաև ԱԻ-ի մասին որոշ անհրաժեշտ մանրամասներ:

Ազդարարման համար օգտագործվում են համապետական, մարզային, տեղական, ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների ռադիոհեռարձակման և հեռուստատեսային ցանցերը: Լուրջ վտանգների դեպքում օգտագործվում են նաև *ձեռնարկությունների և ավտոտրանսպորտի* հզոր շշակները, որոնք արձակում են ընդհատվող սուլոց: Այն ազդանշան է՝ *«Ուշադրություն՝ բոլորին»*: Սա նշանակում է, որ բոլորը պետք է անմիջապես միացնեն հեռուստացույցները, ռադիոընդունիչները և լսեն տեղական իշխանությունների հաղորդագրությունները:

Տեղեկատվական կենտրոնները ԱԻ-ի ողջ ընթացքում պետք է աշխատեն շուրջօրյա ռեժիմով, իսկ բնակչությունը չպետք է անջատի հեռուստացույցները և ռադիոընդունիչները:

ԱԻ-ի յուրաքանչյուր դեպքի համար տեղական իշխանությունները Հայաստանի փրկարար ծառայության /ՀՓԾ/ մարմինների հետ համատեղ նախօրոք պատրաստում են տեքստային հաղորդագրությունների տարբերակներ:

Օրինակ, **վթար է տեղի ունեցել քիմիական օբյեկտում: Ինչպիսի՞ տեղեկատվություն է պետք բնակչությանը:**

Հնարավոր է այսպիսի տարբերակ.

«Ուշադրություն՝ն, խոսում է Հայաստանի փրկարար ծառայության N քաղաքի բաժինը: Քաղաքացիներ՝, քիմիական գործարանում տեղի է ունեցել վթար քլորի արտանետումով: Սա ուժեղ ներգործող թունավոր նյութ է: Վարակված օդի ամպը տարածվում է դեպի արևելք: Քիմիական վարակման գոտում են Ս. և Մ. համայնքները: Տվյալ համայնքների բնակիչներին՝ դուրս չգալ շինություններից, փակել դռները և լուսամուտները, հերմետիկացնել բնակարանները: Նկուղներում, ստորին հարկերում չմնալ, քանի որ քլորը 2,5 անգամ ծանր է օդից և իջնում է ցածրադիր տեղեր: NN փողոցների բնակիչները լքեն իրենց տները, շինությունները և շարժվեն դեպի S թաղամաս: Մինչ դուրս գալը ծածկվել սողալաջրի 2%-ոց լուծույթով կամ մաքուր ջրով քրջած բամբակե-մաշկյալե ծածկույթով: ԱԻ-ի մասին հաղորդել հարևաններին: Հետագայում գործել համաձայն մեր ցուցումների»:

Այս հաղորդումը 5 րոպե ընդմիջումով կրկնվում է մի քանի անգամ:

Այլ օրինակ: **Ծագել է ջրհեղեղի սպառնալիք:**

Հաղորդումը կարող է լինել այսպիսին.

«Ուշադրություն՝ն, խոսում է ՀՓԾ Կ. մարզի վարչությունը: Տեղատարափ անձրևների և Մ. գետի ջրի մակարդակի կտրուկ բարձրացման հետևանքով սպասվում է Տ. թաղամասի տների հեղեղում: Տեղի բնակիչներին՝ անհրաժեշտ է իրերը, պարենը, հագուստը, թունավոր և վտանգավոր իրերը բարձրացնել վերին հարկեր կամ ձեղնահարկ: Առաջին հարկերի ջրածածկման սպառնալիքի դեպքում լրացուցիչ կհաղորդենք: Բոլորին՝ պատրաստ լինել լքելու տները և ուղղվելու դեպի Կ. խճուղին: Մինչ այդ անջատել էլեկտրականությունը, գազը, ջուրը, հանգցնել վառարանում կրակը: Վերցնել փաստաթղթերը և փողը: ԱԻ-ի մասին զգուշացնել հարևաններին: Օգնել երեխաներին, ծերերին և հիվանդներին»:

Օդային, քիմիական կամ ճառագայթային վտանգի դեպքում սկզբում չչակները արձակում են ընդհատվող սուլոց՝ **«Ուշադրություն՝ն բոլորին»**, որին արդեն հետևում է անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ճիշտ կազմակերպված ազդարարման շնորհիվ մեծանում է օպերատիվությունը, որը շատ կարևոր է ժամանակի անտեղի կորստի խմաստով:

Տեղեկատվության բացակայությունը հանգեցնում է ասեկոսեների և նույնիսկ տագնապի տրամադրությունների:

Վտանգավոր օբյեկտներում /ՀԱԷԿ, քիմիական վտանգավոր ձեռնարկություններ, հիդրոհանգույցներ և այլն/ վթարները օպերատիվ ազդարարելու համար ստեղծվում են ազդարարման տեղային /լոկալ/ համակարգեր, որոնք հանդիսանում են կենտրոնացված ազդարարման տարածքային համակարգի մասը: Սրանց առավելությունն առաջին հերթին օպերատիվությունն է: Կրիտիկական իրավիճակում հերթապահ դիսպետչերն ինքն է ընդունում որոշում և անմիջապես արձակում շչակ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք ժամանակին բնակչության ազդարարման էությունը:

2. Ներկայացրե՛ք ԱԻ-ի մասին տեքստային տեղեկատվությունները:
3. Ի՞նչ է ազդարարման տեղային համակարգը:


Պաշտպանական կառույցներ

Հակառակորդի հարձակման միջոցներից, ինչպես նաև տարբեր արտակարգ իրավիճակներում պաշտպանության հուսալի միջոցներից են պաշտպանական կառույցները /ՊԿ/:

Վերջիններիս թվում են՝

- ստորգետնյա հատուկ շինությունները՝ ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ, պարզագույն կառույցներ՝ նկուղներ, կիսանկուղներ և խորացված տարածքներ, հանքախորշեր, ստորգետնյա անցումներ, մետրոպոլիտեն,
 - բնակելի ֆոնդի տարածքները /առաջին հարկի տարածքներ՝ հարմարեցված որպես հակաճառագայթային թաքստոցներ, նկուղներ, կիսանկուղներ/:
- Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝*
- պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը,
 - պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստի վիճակում,
 - պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը,
 - արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի դեպքում:

Խաղաղ ժամանակ պաշտպանական կառույցները կարող են օգտագործվել այլ նպատակներով՝ տնտեսական, մշակութային, սպորտային և այլն: ՊԿ-ի այդ օգտագործումը /բացառությամբ մետրոպոլիտենի/ թույլատրելի է ՊԿ-ի ծավալի 40 տոկոսի չափով և ազատման ժամկետը պետք է լինի ոչ ավելի, քան մեկ ժամ:



Ներկառուցված ապաստարան

Պաշտպանական կառույցները տարբերվում են *կառուցման ժամկետներով՝*

- խաղաղ ժամանակ կառուցվող ապաստարաններ և հակաճառագայթային թաքստոցներ,
- արագ կառուցվող ապաստարաններ,
- արագ կառուցվող թաքստոցներ:

Պաշտպանական կառույցների տեղաբաշխումը կատարվում է համաձայն բնակավայրերի հեռավորության և բնակչության խտության:

Ապաստարաններն ըստ տեղադրման վայրի *լինում են՝*

- ներկառուցված (գտնվում են շենքերի նկուղային հարկերում),
- առանձին (կառուցվում են շենքերից դուրս):

Ապաստարանները տեղադրվում են առավել խիտ բնակեցված տարածքներին մոտ, որպեսզի անհրաժեշտության դեպքում բնակիչները շուտ հասնեն ապաստարան:

Ապաստարանները ներառում են հիմնական /հատվածամաս և նախամուտք-անցախուցեր/ և օժանդակ /գտիչ-օդափոխիչ խուցեր, սանիտարական հանգույցներ, դիզելային էլեկտրակայաններ, պաշտպանված մուտքեր և ելքեր/ շինություններ: Ունեն լուսավորման համակարգ, կապի և ազդարարման սարքավորումներ: Կապի պահուստային միջոց է ռադիոկայանը:

Բոլոր ապաստարանների ելքերից մեկը սարքավորված է որպես վթարային: Այն ստորերկրյա անցք է՝ մոտակա շենքերից հեռու, որը վերջանում է ամուր ելքով: Ջրամատակարարումը իրականացվում է արտաքին ջրատար ցանցից: Սակայն անհրաժեշտ է նաև խմելու ջրի վթարային պաշար համապատասխան տարողություններում:

Արտաքին օդով շինությունը ապահովվում է երկու ռեժիմով՝

- մաքուր օդափոխման, երբ օդը մաքրվում է ռադիոակտիվ փոշուց,
- գտիչ-օդափոխման, երբ օդը մաքրվում է թունանյութերից և կենսաբանական նյութերից:

Բնակչության պատսպարումը ապաստարաններում կատարվում է համապատասխան ազդարարումով, իսկ տեղավորումը՝ ապաստարանի պարետի ցուցումով: Ազդարարման շշակի արձակումից որոշ ժամանակ անց մուտքը ապաստարան դադարեցվում է, դռները փակվում են:

Ապաստարանում գործում են սահմանված ռեժիմ և կարգ: Ապաստարանից դուրս գալ կարելի է միայն պարետի կամ հերթապահի թույլտվությամբ՝ դրսում իրադրությունը պարզելուց հետո:



Բնակչության պատսպարումը ապաստարանում

Են ինքնուրույն չարժվողներին, ապա՝ երեխաներին: Այնուհետև տարահանվում են մնացածները:

Հակաճառագայթային թաքստոցները պաշտպանում են մարդկանց շնչառա-

Ապաստարանի փլուզման կամ վնասման դեպքում, չսպասելով դրսից օգնության, պարետը կազմակերպում է պատսպարվածների տարահանումը ապաստարանից: Ապաստարանից տարահանումը կատարվում է այսպիսի հերթականությամբ. նախ դուրս են գալիս մի քանի հոգի, որոնք սկզբում օգնում

կան օրգանները, մաշկը և հագուստը ռադիոակտիվ նյութերից, լուսային ճառագայթումից, թափանցող ճառագայթումից և հարվածային ալիքից:

Որպես հակաճառագայթային թաքստոց կարելի է հարմարեցնել շենքերի նկուղները, ներքնատները, մառանները, բանջարեղևատանային պահեստները, բնակելի և արտադրական շենքերի ցոկոլային և առաջին հարկերում շինությունները և լեռնային փորվածքները:

Թաքստոցում սարքավորում են շինություններ՝

- մարդկանց նստելու և քնելու համար,
- սանիտարական հանգույցի, օդափոխման կայանքի, աղտոտված վերնազգեստի պահպանման համար:

Թաքստոցը պետք է ունենա նվազագույնը երկու մուտք:

Ջրամատակարարումը իրականացվում է արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցերից: Վերջինների բացակայության դեպքում տեղադրում են ջրի բաքեր:

Էլեկտրամատակարարումը կատարվում է արտաքին ցանցից: Նախատեսվում են նաև լուսավորման վթարային աղբյուրներ՝ կուտակիչներ, գեներատորներ, դիզելային վառելիքով փոքր էլեկտրակայաններ:

Տեղադրվում են բարձրախոսներ, հնարավորության դեպքում՝ նաև հեռախոս և ռադիոմիջոցներ:

Մարդկանց մուտքը թաքստոց կատարվում է արագ, կազմակերպված:

Ռադիոակտիվ տեղումների կամ վտանգի դեպքում պետք է խստորեն հետևել անվտանգության *կանոններին, այն է՝*

- օդաքաշ տուփերի սողնակները չբացել,
- թաքստոցները օդափոխել յուրաքանչյուր 5 - 6 ժամը մեկ՝ օդաքաշ տուփերի սողնակները բացելով 15 - 20 րոպեով,
- օդափոխման ժամանակ հագնել շնչառական օրգանների պաշտպանիչ միջոցները,
- դռները կիպ փակել, բացառելով միջանցիկ քամիները,
- սնունդ և ջուր ընդունելու ժամանակ դռները չբացել,
- վարակված տարածք դուրս գալիս հագնել անհատական պաշտպանության միջոցները,
- սնունդը և ջուրը պահել հերմետիկ փաթեթներում:

Պարզագույն տիպի հակաճառագայթային թաքստոցների կարելի է հարմարեցնել տարբեր փակ շինություններ և բաց ճեղքեր: Այդ նպատակով անհրաժեշտ է առաջին հերթին բարելավել դրանց պաշտպանիչ հատկությունները, հերմետիկացնել դրանք, ապահովել պարզագույն օդափոխություն: Պետք է ամրացնել տան նկուղի ծածկը, դռների և լուսամուտների ոչ պիտանի բացվածքները լցափակել ավազով լի պարկերով, աղյուսով կամ ուղղակի հողով: Ծածկերի վրա փռել խառամի, ավազի 60 - 70սմ-ոց շերտ, արտաքին պատերի շուրջը հող լցնել: Մուտքի սկզբնամասում հերմետիկ դռնով նախամուտք սարքավորել, ապահովել բնական օդափոխություն:

Նույն ձևով են հարմարեցվում շենքերի ներքնատները, մառանները, տների առաջին հարկերը:

Ոչ վատ պաշտպանություն կարող են ապահովել պարզագույն թաքստոցները՝

ճեղքերը: Բաց տեղանքի համեմատությամբ այդ ճեղքերը 1,5 - 2 անգամ նվազեցնում են հարվածային ալիքի, լուսային ճառագայթման ազդեցությունը: Իսկ ճեղքը փակելու դեպքում այդ նվազեցումը դառնում է արդեն 2,5 - 3 անգամ:

Բաց ճեղքը գետնի մեջ փորված խրամատ է 1,8 - 2մ խորությամբ և 1,1 - 1,2մ լայնությամբ:

Ծածկված ճեղքեր ստանալու համար բաց ճեղքերը ծածկվում են գերաններով, երկաթբետոնյա սալերով, մետաղյա գլանվածքով:



Հիշի՛ր

1. Ուղիղաձև տեղումների դեպքում անվտանգության կանոնները:
2. Պարտադիր է սնունդն ու ջուրը պահել հերմետիկ փաթեթներում:
3. Թաքստոցի օդափոխման դեպքում հազնել շնչառական օրգանների պաշտպանիչ միջոցները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տվե՛ք ներկառուցված և առանձին կառուցված ապաստարանների բնութագիրը:
2. Ներկայացրե՛ք ապաստարաններում վարքի կանոնները:
3. Ինչո՞վ են տարբերվում հակաճառագայթային թաքստոցները ապաստարաններից:
4. Ներկայացրե՛ք պարզագույն թաքստոցների պաշտպանական հատկությունները:

ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Վիրակապական նյութեր Վիրակապեր

Վիրակապ դնելը առաջին բուժօգնության կարևոր և հաճախակի կատարվող գործողություններից է: Վիրակապերը լինում են փափուկ և կոշտ: **Կոշտ** վիրակապերը գիպսային կապերն են, որոնք առաջին օգնության ժամանակ չեն օգտագործվում: **Փափուկ** վիրակապերը բինտային կամ այլ փափուկ գործվածքներով դրվող վիրակապերն են: Վիրակապերը դրվում են բուժման և կանխարգելիչ նպատակներով: Բուժման նպատակով դրվող վիրակապերը դրվում են քսուքի կամ հեղուկի տեսքով՝ դեղորայքի հետ: Կանխարգելիչ վիրակապերի հիմնական նպատակն է՝ դադարեցնել արյունահոսությունը, պաշտպանել վերքը տարբեր վարակներից, ինչպես նաև ամրացնել վիրակապական նյութերը և բեկակալները, կանխել այտուցը:

Վիրակապելիս պետք է պահպանել հետևյալ **սկզբունքները**՝

- վիրակապումից առաջ և հետո պետք է լվանալ ձեռքերը,
- վիրակապման ընթացքում տուժածի մկանները պետք է լինեն առավելագույն չափով թուլացած,
- վերջույթը վիրակապել այն դիրքում, որում այն պետք է գտնվի վիրակապումից հետո,
- վիրակապման ժամանակ պետք է կանգնել տուժածի դիմաց՝ նրա վիճակը վերահսկելու նպատակով,
- վերքը ծածկել վարակագերծ անձեռոցիկով՝ մոտ 2 սմ ծավալվելով վերքի շուրջ,
- վերջույթների վրա վիրակապ դնելիս վիրակապումը պետք է սկսել նեղ մասից,
- վիրակապը դնելուց հետո պարբերաբար պետք է ստուգել արյան շրջանառությունը վիրակապից ներքև՝ այն համեմատելով առողջ կողմի հետ (դա կատարվում է պարբերաբար՝ 10 րոպեյն մեկ):

Վիրակապական նյութերը լինում են տարբեր տեսակի և չափսերի: Առավել հաճախ օգտագործվում են անձեռոցիկներ, կաշուն ժապավեններ, կաշուն սպեղանիներ, փաթոթային վիրակապեր (բինտեր), անհատական վիրակապական փաթեթ, առաձգական (էլաստիկ) վիրակապ, եռանկյունաձև վիրակապ, պարսատիկներ, խողովակաձև վիրակապ և այլն:


Բոլոր վիրակապերը լինում են վարակագերծ (ստերիլ) և ոչ վարակագերծ:

Վիրակապի լայնության ընտրությունը կախված է վերքի տեղակայումից: Մատները վիրակապում են 2,5 սմ լայնության բինտով, ափը կամ ոտնաթաթը՝ 5 սմ, բազուկը՝ 5 կամ 6 սմ, ազդրը՝ 7,5 կամ 9 սմ, իսկ իրանը՝ 10 կամ 15 սմ լայնության բինտով:

Եթե անհրաժեշտ է լինում կանխել այտուցը, ապա ճնշում գործադրելու համար կիրառվում են **առաձգական (էլաստիկ) վիրակապեր**:

Վիրակապումը բինտային վիրակապով: Անհատական վիրակապական փաթեթը (առաջին օգնության զինվորական փաթեթը) պարունակում է երկու անձեռո-

ցիկ: Անձեռոցիկներից մեկն ամրացված է բինտին, իսկ մյուսը շարժվում է բինտի երկարությամբ: Անշարժ անձեռոցիկը դրվում է վերքի վրա: Վիրակապի մեկ փաթույթից հետո, վերքի վրայով անցնելիս, առաջին անձեռոցիկը ծածկում են երկրորդով: Այս դաշտային վիրակապն օգտագործվում է նաև մուտքի ու ելքի անցքով թափանցող հրազենային վերքերի դեպքում: Անշարժ անձեռոցիկը դնում են վերքերից մեկի, շարժականը՝ մյուսի վրա և վիրակապում:



Անհատական վիրակապական փաթեթ

Բինտերով վիրակապելիս գլանակը պետք է պահել այնպես, որ փաթույթի ներքին մակերեսը դառնա վիրակապի արտաքին երես: Իսկ վիրակապի ամեն մի նոր պարույրը պետք է ծածկի նախորդի մոտավորապես 2/3 մասը:

Ամենատարածված բինտային վիրակապերից են՝ *պարուրաձև վիրակապը*, *ուրթաձև վիրակապը*, *դաստակի կամ ոտնաթաթի վրա դրվող վիրակապը*, *հասկաձև վիրակապը*, *աչքի վրա դրվող վիրակապը*, *գլխի թասակաձև վիրակապը* և այլն:




Մառչային վիրակապ

Պարուրաձև վիրակապ



Ուրթաձև և հասկաձև վիրակապեր

Պատերազմական իրավիճակներում մեծ կիրառություն ունեն նաև *եռանկյունաձև վիրակապը* և *պարսատիկները*: Եռանկյունաձև վիրակապն իրենից ներկայացնում է գլխաշորի չափ եռանկյունաձև կտոր, որը հիմնականում օգտագործվում է վնասված մասի անշարժացման կամ բեկակալների ամրացման համար: Այն ունի հիմք, գագաթ և երկու ծայր: Եռանկյունաձև վիրակապով կարելի է իրականացնել ինչպես ուսահողի, կոնքի շրջանի, այնպես էլ իրանի ցանկացած մասի վիրակապումը: Նույն հնարավորություններն ունեն նաև երկու և երեք կապերով պարսատիկները:



Եռանկյունաձև վիրակապ

Առաջին բուժօգնության դեղարկղիկ: Անհատական դեղարկղիկը պարունակում է զինձառաջողների նախապահպանության և զանգվածային խոցման զենքի ազդեցության հետևանքների բուժման, ճառագայթահարման սկզբնական ռեակցիան նվազեցնող դեղամիջոցներ, ինչպես նաև ցավազրկող դեղամիջոցներ: Դեղարկղիկի պարունակությունը դրված է բնիկների բաժանված պլաստմասսայե տուփի մեջ:

Դեղարկղիկում կա սրսկիչ պարկուճ (կարմիր կափարիչով), որը պարունակում է հակաթույն (անտիդոտ):

Սրսկիչ պարկուճի օգտագործման համար անհրաժեշտ է այն հանել դեղարկղիկից, ձախ ձեռքով բռնել փողրակի եզրավոր օղակից, աջով՝ իրանից. իրանը պտտել մինչև վերջ, հանել կափարիչը և սրսկիչ պարկուճը փողրակից բռնելով, ասեղը մինչև փողրակը մտցնել մարմնի փափուկ մասի մեջ, դրա համար հարմար և մատչելի տեղում: Պարկուճի իրանը սեղմել մատներով, դուրս մղել պարունակությունը և սեղմած մատերը չբացելով հանել ասեղը: Շտապ դեպքերում կարելի է դեղը ներարկել հագուստի վրայից:



Հիշի՛ր

1. Վիրակապումից առաջ և հետո պետք է լվանալ ձեռքերը:
2. Վնասված վերջույթը վիրակապել այն դիրքում, որում այն պետք է գտնվի վիրակապումից հետո:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վիրակապերի ի՞նչ տեսակներ գիտեք:
2. Մարմնի տարբեր մասերին ի՞նչ չափսի վիրակապեր են դրվում:
3. Որո՞նք են վիրակապման հիմնական սկզբունքները:
4. Ինչպիսի՞ քինտային վիրակապեր կան:
5. Վիրակապման հմտություն ձեռք բերելու նպատակով պարբերաբար կատարե՛ք վիրակապման փորձեր:

Վարակիչ հիվանդություններ Հասկացություն վարակիչ հիվանդությունների մասին

Վարակիչ հիվանդություններն առաջանում են որոշակի կենդանի հարուցիչներից և վարակված օրգանիզմից փոխանցվում առողջին, ինչպես նաև հակում ունեն գանգվածային (համաճարակային) տարածման: Այդպիսի հարուցիչներն անգեն աչքով տեսանելի չեն:

Հարուցիչները կենդանի բջջից դուրս կյանք չունեն: Վարակիչ հիվանդություններն առաջանում են օրգանիզմի մեջ բավարար քանակությամբ հիվանդահարույց միկրոօրգանիզմների ներթափանցման պատճառով:

Բոլոր վարակիչ հիվանդությունների դեպքում վարակման պահից մինչև հիվանդության առաջին տեսանելի ախտանշանների դրսևորումն անցնում է որոշակի ժամանակ, որը կոչվում է գաղտնի (ինկուբացիոն) շրջան: Այդ ընթացքում մարդը արտաքինապես առողջ է զգում: Գաղտնի շրջանի տևողությունը տարբեր վարակների դեպքում տարբեր է՝ մի քանի ժամից մինչև մի քանի ամիս:

Բոլոր վարակիչ հիվանդությունները բաժանվում են չորս հիմնական խմբի՝ շնչառական ուղիների վարակներ, աղիքային վարակներ, արյան վարակներ և արտաքին ծածկույթների վարակներ:

Շնչառական ուղիների վարակները բնակչության մեջ ամենատարածված հիվանդություններն են: Դրանք բնութագրվում են վերին շնչառական ուղիներում հարուցիչների տեղակայումով և վարակի փոխանցման օդակաթիլային մեխանիզմով: Այդ հիվանդություններն են՝ *գրիպը, դիֆտերիան, կարմրուկը, կապույտ հազը, բնական ծաղիկը* և այլն:

Մի խումբ **աղիքային հիվանդություններ** ընթանում են մարսողական ուղու ախտահարումով, հարուցիչի հիմնական տեղակայման օբյեկտն աղիքն է: Աղիքային վարակումը տեղի է ունենում մարսողական ճանապարհով, այսինքն՝ բերանով, իսկ փոխանցման գործոններն են՝ սնունդը, ջուրը, հողը, կեղտոտ ձեռքերը, ճանճը, կենցաղային իրերը: Հարուցիչները դուրս են բերվում հիվանդի մարմնից՝ կղանքի հետ: Այդ խմբին են պատկանում *որովայնային տիֆը, դիզենտերիան, խոլերան, սննդային թունավորումները* և այլն: Սրանք հատկապես հաճախ են հանդիպում ամռան և աշնան ամիսներին:

Արյան վարակումների հարուցիչները փոխանցվում են արյունածուծ փոխանցիչների՝ տզերի, մոծակների, լվերի, մժեղների և միջատների խայթելու ճանապարհով: Այդ խմբի վարակներից են *ժանտախտը, տուլարեմիան, մալարիան, տզային էնցեֆալիտը, բժավոր և հետադարձ տիֆերը* և այլն:

Արտաքին ծածկույթների վարակների խմբին են պատկանում սիբիրյան խոցը, բոսը, վեներական հիվանդությունները, կատաղությունը և այլն:

Առավել վարակունակ և արտաքին միջավայրում կայուն հարուցիչները կարող են օգտագործվել որպես կենսաքանակային զենք՝ մարդկանց, կենդանիներին և գյուղատնտեսական բույսերը ախտահարելու համար: Դրանք ամենից առաջ մարդկանց վարակիչ հիվանդությունների հարուցիչներն են, որոնք մտնում են, այսպես կոչված, հատուկ վտանգավոր վարակների (ՀՎՎ) խմբի մեջ: Դրանք են՝ *բնական*

ծաղիկը, ժանտախտը և խղերան: Դրանց կանխամտածված, դիտավորյալ տարածման հետևանքով առաջանում է առանձնապես վտանգավոր վարակների օջախ, որն անվանում են *կենսաբանական վարակման օջախ*:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելումը: Առողջապահության հիմնական ուղղությունը եղել և մնում է **կանխարգելումը**: Ընդ որում, վարակիչ հիվանդությունների նկատմամբ ողջ մախազգուշական միջոցներն ուղղված են համաճարակային գործընթացի բոլոր երեք օղակների՝ վարակի աղբյուրի, նրա փոխանցման ուղիների և օրգանիզմի վարակընկալունակության կանխարգելմանը:

Վարակի աղբյուրի նկատմամբ անցկացվող միջոցառումները ներառում են՝ հիվանդների վաղ, ակտիվ և լրիվ բացահայտումը, ժամանակին նրանց մեկուսացումը, հոսպիտալացումը և բուժումը, օջախում ախտահարման միջոցառումների անցկացումը:

Չափազանց կարևոր է համաճարակային պրոցեսի երկրորդ օղակի՝ *հարուցիչի փոխանցման ուղիների* վերացումը: Պետք է միշտ հիշել, որ հարուցիչի փոխանցման հիմնական գործոնը կեղտոտ ձեռքերն են, կենցաղային իրերը, օդը, ճանճերը և այլն, ուստի վարակիչ հիվանդությունների կանխարգելման մեջ հսկայական նշանակություն է տրվում անձնական հիգիենայի կանոնների պահպանմանը:

Համաճարակային շղթայի երրորդ օղակին՝ *վարակընկալունակ օրգանիզմին* ուղղված կանխարգելիչ միջոցների նպատակն է վարակիչ հիվանդությունների նկատմամբ արհեստական իմունիտետի՝ հիվանդածին հարուցիչի ազդեցության նկատմամբ անընկալունակության ստեղծումը: Իմունիտետը լինում է՝ բնածին (բնական) և ձեռքբերովի (արհեստական):

Բնածին իմունիտետի շարքին են դասվում որոշակի վարակների (հավի խղերա, եղջերավոր անասունների խղերա և այլն) նկատմամբ մարդու անընկալունակությունը:

Ձեռքբերովի իմունիտետն առաջանում է տարած հիվանդությունից հետո (կարմրուկ, բնական ծաղիկ և այլն) կամ ստեղծվում է արհեստական պատվաստման (վակցինացման) հետևանքով:

Հակառակորդի կողմից կենսաբանական զենքի կիրառման փաստ հայտնաբերելիս նշանակվում է կարանտին:

Կարանտինը վարչական, սանիտարական և հակահամաճարակային համալիր միջոցառումների ռեժիմ է՝ նախատեսված օջախի զինված պաշտպանության համար: **Արգելվում է** կարանտինի գոտուց մարդկանց տեղաշարժն առանց նախնական ժամանակավոր մեկուսացման և բժշկական հսկողության, այդ գոտուց գույքի դուրսբերման՝ առանց նախնական վարակագրերի, ինչպես նաև փոխադրամիջոցների և մարդկանց մուտքը դեպի վարակված օջախ: Կարանտինը նախատեսում է բնակչության մեկուսացում և շփումների սահմանափակում:



Հիշի՛ր

1. Վարակի փոխանցման հիմնական գործոնը կեղտոտ ձեռքերն են, կենցաղային իրերը, օդը, ճանճերը:

2. **Արգելվում է** կարանտինի գոտուց մարդկանց տեղաշարժն առանց ժամանակավոր մեկուսացման և բժշկական հսկողության:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ են բնորոշ վարակիչ հիվանդությունները:
2. Վարակի փոխանցման ի՞նչ ճանապարհներ գիտեք:
3. Ըստ հարուցիչի տեղակայման՝ հիմնականում քանի՞ խմբի են բաժանվում վարակիչ հիվանդությունները:
4. Ինչպիսի՞ք են հատուկ վտանգավոր վարակների ընթացքի առանձնահատկությունները:
5. Ի՞նչ նշանակություն ունի անձնական հիգիենան վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործում:

Ախտահանում, միջատազերծում և կրծողների ոչնչացում

Վարակիչ հիվանդությունների դեմ պլանաչափ և համալիր միջոցառումների անցկացման գործում կարևոր տեղ է գրավում ախտահանումը:

Ախտահանում ասելով նկատի ունենք՝

- վարակազերծում, վարակասկզբի ոչնչացում (դեզինֆեկցիա),
- միջատների ոչնչացում (դեզինսեկցիա),
- կրծողների ոչնչացում (դեռատիզացիա):

Տարբերում ենք 3 բնույթի դեզինֆեկցիա (վարակազերծում, ախտահանում)՝ ընթացիկ, եզրափակիչ, կանխարգելիչ:

Ընթացիկ ախտահանումը կատարվում է օջախում՝ հիվանդի մոտ: Հիվանդի բոլոր արտազատուկների և այդտեղ գտնվող իրերի ախտահանումը ողջ հիվանդության ընթացքում տվյալ միջոցառման գլխավոր խնդիրն է:

Եզրափակիչ ախտահանումը վարակի օջախում կատարվող մշակումն է հիվանդի հոսպիտալացումից հետո, տնային կամ ստացիոնար պայմաններում գտնվող հիվանդի առողջացումից (մահանալուց) հետո:

Կանխարգելիչ ախտահանումը կիրառվում է վարակիչ հիվանդությունների ծագման հնարավորությունը կանխելու համար: Այդ նպատակին են ծառայում կաթի եռացումը, խմելու ջրի քլորացումը և եռացումը, ճանճերի դեմ պայքարը:

Ախտահանման եղանակները: Նայած կիրառվող ազդակին՝ տարբերում ենք ախտահանման *կենսաբանական*, *ֆիզիկական* և *քիմիական* եղանակներ:

Կենսաբանական եղանակի մեջ մտնում են՝

- կրծողների մեջ ինֆեկցիաների արհեստական տարածումը՝ նրանց ոչնչացնելու համար,
- գամբուզիա ձկան օգտագործումը մալարիայի տարածողներին՝ մոծակներին ոչնչացնելու նպատակով,
- կոյոտու համակարգի մեջ շներ արձակելը՝ առնետներին ոչնչացնելու համար,
- կենցաղում կատուներ պահելը՝ կրծողներին ոչնչացնելու նպատակով,
- խմելու ջրի և կեղտաջրի պրոֆիլակտիկ մաքրման կիրառումը (անգլիական ֆիլտր, կենսաբանական մաքրման կայաններ):

Ֆիզիկական եղանակներից է ախտահանումը էլեկտրականությամբ, ճառագայթային էներգիայով, ջերմությամբ և մեխանիկական միջոցներով:

Ֆիզիկական ազդակներից լավ արդյունք է տալիս ջերմությունը, և դա հասկանալի է, եթե հաշվի առնենք ախտածին մանրէների վրա բարձր ջերմաստիճանի քայքայիչ ազդեցությունը: Իբրև ջերմային ազդակներ կիրառվում են չոր տաք օդը, խոնավ տաք օդը, ջրագոլորշին, ջուրը և կրակը:

Կրակը ախտահանման ամենահուսալի միջոցն է: Այն կիրառվում է հետևյալ ձևով. վարակված առարկաները, խաղալիքները, կերակրի մնացուկները, լաթերը և այլ իրեր այրում են: Այրում են նաև սիբիրախտից մահացած կենդանիների դիակները:

Ջուրը տաքացնելիս սկզբում կասեցվում է մանրէների աճը, իսկ ջերմաստիճանի հետագա բարձրացումը սպանում է դրանք: Մանրէների առանձին տեսակներ մահանում են արդեն 60°C-ում, իսկ 100°C-ում ոչնչանում են բոլոր վեգետատիվ ձևերը: Եռացնել կարելի է միայն այն առարկաները, որոնք չեն փչանում այս եղանակից: Իսկ ինչ վերաբերում է մարէների սպորներին (բոտուլիզմի, սիբիրախտի ցուպիկների սպորներին), ապա եռացումը դրանց վրա ազդում է 6 ժամ հետո միայն:

Չոր տաք օդի կիրառումը արդյունավետ է ստացվում, սովորաբար, 140°C-ից ոչ պակաս ջերմության տակ:

Ջրագոլորշին օգտագործվում է հատուկ շոգեխցերում: Այս կարգի կամերաներն ունեն ջերմաչափեր և մանոմետրեր:

Մեխանիկական միջոցներով ախտահանումն ստացել է ավելի լայն տարածում և կիրառվում է սանիտարական մշակման, մազերի խուզման, բաղնիքների օգտագործման, սպիտակեղենի մեխանիկական լվացման, փոշու հեռացման, շենքի օդափոխման, ալկալա-օճառային ջրով պատերի ու հատակի խնամքով լվացման ձևերով և այլն:

Քիմիական եղանակ: Ախտահանման գործում լայնորեն կիրառվում է քիմիական եղանակը: Քիմիական նյութերը, սովորաբար, գործածվում են հեղուկ վիճակում, որոշակի խտությամբ, ներգործման որոշակի տևողությամբ:

Վարակագործման (դեզինֆեկցիայի), միջատների ոչնչացման (դեզինսեկցիայի) և կրծողների ոչնչացման (դեռատիզացիայի) նպատակներով կիրառվում են քիմիական շատ նյութեր՝

- *վարակագործման համար*՝ սոդա, սուլեմա, ֆորմալին, քլորակիր, թթուներ, կալցիումի հիպոքլորիդ,
- *միջատների ոչնչացման համար*՝ ծծմբային անհիդրիդ, Դ-Դ-S (դիքլորդիֆենիլտրիքլորեթան), փարիզյան կանաչ, բորաքս, բորաթթու, քլորոֆոս, կարբոֆոս և այլն,
- *կրծողների ոչնչացման համար* կիրառում են կոխիդ, ածխաթթվական բարիում, ցինկի ֆոսֆիդ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ենք հասկանում դեզինֆեկցիա ասելով:
2. Ի՞նչ բնույթի դեզինֆեկցիաներ գիտենք:
3. Ի՞նչպիսի՞ ախտահանման եղանակներ գիտենք:

4. Ինչպիսի՞ նյութեր են օգտագործվում ախտահանման քիմիական եղանակի ժամանակ:

Վնասվածքներ և վերքեր **Հասկացություն վնասվածքների և վերքերի մասին**

Վնասվածքներ: Վնասվածքներն առաջանում են տարբեր պատճառներով՝ հանգեցնելով օրգանիզմի ընդհանուր կամ տեղային փոփոխությունների:

Վնասվածքները լինում են երկու տեսակի՝ բաց և փակ:


Բաց վնասվածքների դեպքում խախտվում է մաշկի և լորձաթաղանթի ամբողջականությունը, կարող է լինել արտաքին արյունահոսություն:

Փակ վնասվածքներն են՝ սալջարդերը, ենթամաշկային պատռվածքները, ցնցումները, ներքին օրգանների սալջարդերը, պատռվածքները:

Վնասվածքի բնույթը պարզելու և առաջին օգնությունը ցույց տալու համար պետք է անմիջապես կանխել վնասվածք առաջացնող ազդակը և հնարավորություն ստեղծել վնասված հատվածները ազատելու հագուստից: Երբ վնասված են ծայրանդամները, հագուստը հանելիս հարկավոր է ազատել առողջ ծայրանդամները, հետո՝ վնասվածները:

Վերքեր: Մաշկի կամ լորձաթաղանթի ամբողջականությունը խախտող վնասվածքները կոչվում են վերքեր: Վերքերը կարող են առաջանալ տարբեր ազդակներից, ըստ որի էլ դասակարգվում են՝ *մեխանիկական, ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, հոգեկան:*

Ելնելով ազդակի բնույթից, առարկայի չափսից, ձևից և վերքի արտաքին տեսքից՝ տարբերում են՝ քերծված, կտրված, ճզմված, պատռված, պատռված-պոկված, ծակված, կծած, անդամահատված, հրազենային վերքեր: Հրազենային վերքերը առաջանում են հրազենի գնդակներից և արկերի բեկորներից: Այս վերքերին բնորոշ է փոքր, կլոր մուտքի անցքի առկայությունը (գնդակի մտնելու տեղը) և մեծ, պատռվածքներով ելքի անցքը՝ մարմնից գնդակի դուրս գալու տեղը: Եթե գնդակը անցնում է մարմնի միջով, և առկա են երկու անցքերը (մուտքի և ելքի), ապա այն կոչվում է *թափանցող հրազենային վերք*, իսկ եթե գնդակը մնում է մարմնի մեջ, ապա կոչվում է *կույր հրազենային վերք*:



Կտրված վերք

Վերք ստանալիս մաշկի կամ լորձաթաղանթի տվյալ հատվածում առաջանում է ցավ, արյունահոսություն, մաշկի լայն բացում. վնասված եզրերը իրարից հեռանում են: Արդյունաբերության մեջ, ավտոճանապարհային վթարների, գյուղատնտեսական աշխատանքների, պատերազմական գործողությունների, բնական աղետների ժամանակ, կենցաղային և այլ իրավիճակներում առաջացած տարբեր բնույթի վերքերը համարվում են ինֆեկցված վերքեր:

Վերքերն ըստ խորության լինում են՝ մակերեսային և խորը: Երբ վնասվում

են մաշկը և լորձաթաղանթը, այդ վերքերը մակերեսային են: Խորը վերքերն ընթանում են ներքին օրգանների, հոդերի, ներվերի, ոսկրերի, ջլերի վնասվածքներով:

Առաջին բուժօգնություն: Առաջին բուժօգնությունը բոլոր տեսակի վերքերի համար արյունահոսության դադարեցումն է և վերքի մշակումը: Չի բացառվում, որ կարող է պահանջվել լրացուցիչ միջամտություն: Վերքերի ճիշտ մշակումը կանխում է բարդությունների առաջացումը և երեք անգամ կրճատում ապաքինման ժամկետը:

Վերքերի մշակումը կատարվում է յոդի 5%-անոց կամ սպիրտի լուծույթներով՝ բամբակի կամ մառյալի միջոցով վերքի շրջակայքին 2 - 3 անգամ յոդը կամ սպիրտը քսելիս շարժումները պետք է լինեն վերքի եզրերից դեպի դուրս, դեպի մաշկի չվնասված մակերեսը: Անմիջապես վերքի վրա յոդ կամ սպիրտ քսել չի կարելի. դա առաջ կրքերի ավելորդ ցավի զգացում: Վերքը ջրով լվանալ չի կարելի: Վերքը մշակելուց հետո անհրաժեշտ է վիրակապել: Վիրակապը դրվում է վարակազերծված կամ հնարավորին չափ մաքուր բինտով, մառյալով՝ աշխատելով մատները չդիպցնել վիրակապի այն մակերեսին, որը պետք է դրվի վերքի վրա: Մեծ չափսի վերքերը մշակելուց և վիրակապելուց հետո անհրաժեշտ է տվյալ ծայրանդամը անշարժացնել: Եթե վերքից դուրս են եկել հյուսվածքներ (ուղեղ, աղիք), խստիվ արգելվում է դրանք ներս հրել. ուղղակի պետք է դրանք ծածկել մաքուր մառյալով կամ կտորով: Առաջին օգնությունը ցույց տալուց հետո հիվանդին պետք է տեղափոխել մոտակա հիվանդանոց կամ կանչել շտապբուժօգնություն:


Փակ վնասվածքներ: Փակ վնասվածքները, սովորաբար, առաջանում են արտաքին մեխանիկական ազդակներից: Փակ վնասվածքների ժամանակ չի խախտվում մաշկի ամբողջականությունը, այդ իսկ պատճառով դժվար է դեպքի վայրում



Գլխի և պարանոցի անշարժացում

որոշել վնասվածքի բնույթը: Հատկապես վտանգավոր են գլխուղեղի, կրծքավանդակի և որովայնի փակ վնասվածքները:

Գլխուղեղի փակ վնասվածքներն են՝ գլխուղեղի սալջարդը, գլխուղեղի ցնցումը, գանգի ոսկրերի փակ կոտրվածքը: Գլխուղեղի սալջարդի և ցնցման ժամանակ կա-



Գլխի վիրակապեր

րող է լինել գիտակցության կարճատև կորուստ՝ 1-2 րոպե: Ըստ ցնցման աստիճանի գիտակցության կորուստ կարող է լինել մինչև մի քանի ժամ: Առավել ծանր է ընթանում, երբ գլխուղեղում գոյանում է արյունակույտ: Այն գոյանում է, երբ ուղեղում առաջանում է արյունազեղում, պատռվում են ուղեղի արյան անոթները:

Կյանքի համար ավելի վտանգավոր են գանգոսկրերի կամ գանգի հիմքի կոտրվածքները: Ոսկրերի բեկորներն ընկնում են գանգի խոռոչ՝ վնասելով ուղեղի թաղանթը, ուղեղանյութը և ուղեղի անոթները: Գանգոսկրերի կոտրվածքների ժամանակ տուժածը կորցնում է գիտակցությունը, առաջանում է փսխում, դանդաղում է պուլսը, մաշկը գունատվում է, ականջներից, քթից և բերանից հոսում է արյուն կամ արյունախառը հեղուկ: Աչքերի շրջակայքում առաջանում են կապտուկներ՝ ակնոցի նման: Լինում են խոսակցության, լսողության, տեսողության և շնչառության խանգարումներ, հիշողության կորուստ:


Առաջին օգնությունը: Տուժածին պառկեցնել մեջքի վրա, գլուխը քիչ բարձր: Գլխին դնել սառեցեալ կամ թրջոցներ՝ սառը ջրով: Կատարել գլխի և պարանոցի անշարժացում: Գլխի անշարժացումը կատարել ավազեալարների կամ հաստ գործվածքների միջոցով: Պարանոցի անշարժացումը կատարել պարանոցային օձիքների, հագուստի կամ հաստ գործվածքների միջոցով: Տուժածին պատգարակով տեղափոխել հիվանդանոց կամ դիմել շտապ բուժօգնությանը:

Կրծքավանդակի փակ վնասվածքներն են՝ կրծքավանդակի սալջարդը, կրծքոսկրի և կողերի փակ կոտրվածքները, թոքի սալջարդը և հյուսվածքի պատռվածքը, սրտի սալջարդը, սրտամկանի պատռվածքը և այլն:

Այս վնասվածքները կարող են առաջանալ կրծքավանդակին բուք գործիքով հարվածելուց կամ կրծքավանդակի ճգմվելուց (ավտովթարների ժամանակ, բարձրությունից ընկնելիս): Կրծքավանդակի վնասվածքների ժամանակ կրծքավանդակում զգացվում է ցավ, անհանգիստ գրգռված վիճակ, շնչառության դժվարացում կամ խանգարում: Դեմքը և տեսանելի լորձաթաղանթները դառնում են գունատ կամ ստանում կապտավուն երանգ:

Առաջին օգնությունը: Տուժածին տալիս են կիսանստած դիրք: Ուտելու կամ խմելու ոչինչ չի կարելի տալ: Փակ վնասվածքների դեպքում տուժածի կրծքավանդակը սավանով կամ այլ գործվածքով կապել չի կարելի: Անհրաժեշտ է տուժածին անմիջապես տեղափոխել հիվանդանոց՝ նստած կամ կիսանստած դիրքով:


Որովայնի փակ վնասվածքներ: Որովայնի և կրծքավանդակի վնասվածքների պատճառները գրեթե նույնն են: Փակ վնասվածքների ժամանակ կարող է լինել



Հիվանդի դիրքը որովայնի փակ վնասվածքի դեպքում

որովայնի օրգանների պատռվածք և ներքին արյունահոսություն, որը վտանգավոր է կյանքի համար: Կարող են պատռվել լյարդը, երիկամները, փայծաղը, աղիները, ստամոքսը, միզապարկը: Ստամոքսի և աղիների պատռվածքները բերում են ծանր հետևանքների, քանի որ ստամոքսի և աղիների պարունակությունը, որը հարուստ է տարբեր մանրէներով, լցվում է որովայնի խոռոչ: Որովայնի, նրա ներքին օրգանների վնասվածքը հաճախ ընթանում է վնասվածքային շոկով: Այս վնասվածքների ժամանակ բնորոշ է տուժածի դիր-

քը: Նա պառկած է լինում կողքի՝ ծնկները որովայնին սեղմած, և ցավից գալարվում է: Որովայնը խիստ լարված է, շոշափելիս սաստիկ ցավոտ: Ներքին արյունահոսության ժամանակ պուլսն արագանում է, դառնում թելանման: Մաշկը գունատվում է, պատվում սառը քրտինքով, լեզուն չորանում է: Տուժածը միշտ ծարավում է, աչքերը մթնում են, առաջանում են գլխապտույտ, սրտխառնոց, փսխումներ:



Առաջին օգնությունը ցույց տալու ժամանակ որովայնի և նրա օրգանների վնասվածքով տուժածին չի կարելի տալ ցավազրկող դեղամիջոցներ, չի կարելի կերակրել և տալ հեղուկներ՝ խմելու ձևով: Պետք է տուժածի որովայնին դնել սառցապարկ և պառկած վիճակում. պատգարակով տեղափոխել մոտակա հիվանդանոց կամ կանչել շտապ բուժօգնություն:

Հիվանդի տեղափոխումը ձեռքի տակ եղած միջոցներով



Հիշի՛ր

1. Վերքը ջրով լվանալ չի կարելի, անմիջապես վերքի վրա յոդ կամ սպիրտ քսել չի կարելի:
2. Եթե վերքից դուրս են եկել հյուսվածքները, ապա *խստիվ արգելվում է* դրանք ներս հրելը:
3. Փակ վնասվածքների դեպքում տուժածի կրծքավանդակը սափանով կամ այլ գործվածքով կապել չի կարելի:
4. Որովայնի և նրա օրգանների վնասվածքով տուժածին չի կարելի տալ ցավազրկող դեղամիջոցներ և հեղուկներ խմեցնել:

Հարցեր և առաջադրանքներ.

1. Ի՞նչ տեսակի վնասվածքներ գիտեք:
2. Ի՞նչ է հրազենային վերքը:
3. Որո՞նք են փակ վնասվածքների առաջացման պատճառները:
4. Ի՞նչ բարդություններ կարող են առաջանալ փակ վնասվածքների ժամանակ:

Հենաշարժային համակարգի վնասվածքներ Կոտրվածքներ: Անշարժացման տեխնիկան


Կոտրվածքը ոսկրի անընդհատության խախտումն է, որն առաջանում է ոսկրի վրա մեխանիկական ուժի ազդեցությունից: Տարբերում են ոսկրի լրիվ և ոչ լրիվ կոտրվածք: Եթե կոտրվածքի գիծն անցնում է ոսկրի լրիվ հաստությամբ՝ լրիվ կոտրվածք է, իսկ եթե կոտրվածքի գիծն ընդգրկում է միայն ոսկրի հաստության մի մասը՝ ոչ լրիվ կոտրվածք է (ճաք): Ըստ առաջացման մեխանիզմի կոտրվածքները առաջանում են ոսկրի ճնշումից, ծռումից, ոլորումից:

Կոտրվածքների ախտորոշումը, սովորաբար, մեծ դժվարություն չի ներկայացնում: Ախտորոշում են՝ հիմնվելով կոտրվածքների յուրահատուկ նշանների վրա՝ ցավ, կոտրված վերջույթի ձևախախտում (դեֆորմացիա), այտուցվածություն, վերջույթի շարժումների սահմանափակում:

Տարբերում են բաց և փակ կոտրվածքներ:

Բաց կոտրվածք: Երբ կոտրված մասում մաշկից դուրս է գցվում կոտրված ոսկրի ծայրը՝ խախտելով մաշկի ամբողջականությունը, կոչվում է բաց կոտրվածք: Բաց կոտրվածքի ժամանակ, բացի նշված ախտանիշներից, վնասված մասում լինում է նաև կտրած կամ պատռած վերք և արյունահոսություն:

Փակ կոտրվածք: Երբ մաշկի ամբողջականությունը կոտրված մասում պահպանված է, կոչվում է փակ կոտրվածք:




Փակ և բաց վնասվածքներ

Առաջին օգնություն: Փակ կոտրվածքների ժամանակ կատարել կոտրված վերջույթի անշարժացում: Անշարժացումը պետք է կատարել հետևյալ ձևով. անշարժացնել կոտրվածքից վերև և ներքև գտնվող երկու հոդերը (բացառությամբ ազդրի և բազկոսկրի կոտրվածքների, երբ անշարժացվում են հարակից երեք հոդերը)՝ հատուկ փայտյա կամ մետաղյա բեկակալներով (շինաներ): Անշարժացումը կարելի է կատարել նաև մետաղյա ձողով, ձեռնափայտով, հաստ կոշտ սովարաթղթով և ձեռքի տակ եղած այլ մանատիպ առարկաներով:

Անշարժացումը կատարելիս կապերը պետք է հանգուցել անշարժացնող առարկայի վրա: Եթե ձեռքի տակ չկան բեկակալներ կամ այլ առարկաներ, ապա առողջ վերջույթը կարող է անշարժացման միջոց հանդիսանալ, օրինակ՝ վնասված ստորին վերջույթը կապում են առողջին:

Բաց կոտրվածքների ժամանակ անհրաժեշտ է նախ դադարեցնել արյունահոսությունը (եթե առկա է), մշակել



Կոտրվածքների անշարժացման ձևերը

վերքը, դնել հնարավորին չափ մաքուր կամ վարակագերծ վիրակապ, հետո կատարել անշարժացում: Երկու դեպքում էլ առաջին օգնությունը ցույց տալուց հետո տուժածին տեղափոխել հիվանդանոց կամ կանչել շտապօգնություն:


Հոդերի կոտրվածքների ժամանակ անշարժացումը կատարել՝ հողը թողնելով նույն դիրքով, ինչպիսին ստացվել է վնասվելուց հետո: Հողը չեն ուղղում և չեն ծա-

լում՝ լրացուցիչ վնասվածքներ չառաջացնելու համար:

Հոդախախտ: Հոդը կազմող ոսկրերի կայուն տեղաշարժը, միմյանցից հեռացումը կոչվում է **հոդախախտ:**

Տարբերում ենք վնասվածքային, սովորութային, ախտաբանական և բնածին հոդախախտներ:

Վնասվածքային հոդախախտը առաջանում է արտաքին ուժի ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով:



Սովորութային հոդախախտը հիմնականում կրկնվում է նույն հոդում հոդաշապիկի թուլացման, հոդը շրջապատող մկանների թերսնուցված, հյուծված վիճակի պատճառով:

Ախտաբանական հոդախախտը առաջանում է հիվանդ հոդում (տուբերկուլյոզ, ուռուցքներ և այլն): Այդ դեպքում հոդը կազմող ոսկրերի ծայրերը քայքայվում են:

Բնածին հոդախախտերն առաջանում են ներարգանդային կյանքում:

Բոլոր հոդախախտերի սուբյեկտիվ նշաններից են ցավը և շարժումների սահմանափակումները: Օբյեկտիվ նշաններից են հոդի ձևախախտումը (դեֆորմացիան) և ծայրանդամի ոչ նորմալ հարկադրական դիրքը, որն ավելի նկատելի է, երբ հիվանդ հոդը համեմատում ենք նույնանման առողջ հոդի հետ:

Առաջին օգնությունը: Բոլոր հոդերի հոդախախտերի ժամանակ մոտեցումը պետք է լինի այնպիսին, ինչպիսին կոտրվածքների ժամանակ: Հոդախախտերի վերջնական բուժումը հոդի ուղղումն է, որը կատարվում է տեղային կամ ընդհանուր անզգայացումով՝ հիվանդանոցային պայմաններում: Ինչպես հոդերի կոտրվածքների, այնպես էլ հոդախախտերի ժամանակ **հոդը ծալել կամ բացել չի կարելի:** Շարժումները կհանգեցնեն լրացուցիչ վնասվածքների: Հոդը պետք է անշարժացնել այն դիրքով, ինչպիսին որ կա:



Հիշի՛ր

Հոդախախտի ժամանակ հոդը ծալել կամ բացել չի կարելի: Այն պետք է անշարժացնել նույն դիրքով, ինչպիսին որ կար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են բաց և փակ կոտրվածքները:
2. Որո՞նք են կոտրվածքների յուրահատուկ նշանները:
3. Ի՞նչ սկզբունքով է կատարվում անշարժացումը կոտրվածքների ժամանակ:
4. Ինչպե՞ս է կատարվում անշարժացումը հոդերի կոտրվածքների ժամանակ:

5. Ինչպիսի՞ հոդախախտեր են լինում:
6. Որո՞նք են հոդախախտի նշանները:
7. Ինչպիսի՞ օգնություն է ցուցաբերվում հոդախախտի դեպքում:

Արյունահոսություն


Արտաքին և ներքին արյունահոսություններ, նշանները, առաջին օգնությունը

Արյունահոսություն: Մարդու օրգանիզմում արյան շրջանառությունը կատարվում է զարկերակներով, երակներով, մազանոթներով: Արյունատար անոթները գտնվում են օրգանիզմի բոլոր օրգաններում և հյուսվածքներում: Երբ մարմնի որևէ մասում առաջանում է վնասվածք, անպայման վնասվում են նաև անոթները: Արյունատար անոթից արյան արտահոսքը կոչվում է **արյունահոսություն:**

Ներքին արյունահոսություն առաջանում է այն դեպքում, երբ վնասվում են ներքին օրգանները, և արյունը հոսում է վնասված անոթից դեպի հյուսվածքները կամ խոռոչները (գանգի, կրծքավանդակի, որովայնի):


Արտաքին արյունահոսություն առաջանում է, երբ վնասվածքից արյունը հոսում է դեպի դուրս, անմիջապես մարմնի արտաքին ծածկույթի՝ մաշկի վրայով: Արտաքին արյունահոսության ուժգնությունը կախված է վնասված անոթի տեսակից:

Թե՛ ներքին, թե՛ արտաքին արյունահոսության վտանգն այն է, որ կարճ ժամանակում պակասում է օրգանիզմում շրջանառվող արյան քանակը, որը հանգեցնում է կենսական կարևոր օրգանների գործունեության խանգարման (սիրտ, թոքեր, երիկամներ, լյարդ, գլխուղեղ): Այդ իսկ պատճառով արյունահոսության ժամանակ



Արտաքին արյունահոսության տեսակները.

1. զարկերակային,
2. երակային,
3. մազանոթային



Լարանի տեղադրում

պետք է արագ կողմնորոշվել և միջոցներ ձեռնարկել այն դադարեցնելու համար: Առաջին օգնությունը կարող է լինել ժամանակավոր կամ նախնական, որից հետո տուժածին տեղափոխում են հիվանդանոց:

Արտաքին արյունահոսության նախնական կամ ժամանակավոր դադարեցման համար կան մի քանի տեխնիկական միջոցներ՝


- վնասված վերջույթը բարձրացնել կրծքավանդակի մակարդակից վեր,
- անոթի վրա, վնասված տեղում դնել ճնշող վիրակապ,

- մատով ճնշում գործադրել անոթի վրա, վերքից վերև,
- կատարել վնասված վերջույթի անշարժացում՝ նախապես հողածալքում դնելով բարձիկ և կիպ ծալելով վերջույթը,
- դնել ռետինե լարան (ժգուտ):

Արյունահոսությունը լինում է՝ զարկերակային, երակային, մազանոթային և քթային:

Ջարկերակային արյունահոսության արյունը լինում է ալ կարմիր գույնի (այն հագեցված է թթվածնով) ի տարբերություն երակայինի կամ մազանոթայինի, որոնք ունեն մուգ կարմիր գույն: Ջարկերակից արյունը հոսում է շիթով, ընդհատվող ցայտքերով (պուլսացիայով):

Ջարկերակային արյունահոսությունը դադարեցնելու արագ և ժամանակավոր միջոցը մատով սեղմելն է զարկերակի վրա՝ վերքից վերև:



Վերջույթների ամրացումը արյունահոսության ժամանակավոր դադարեցման նպատակով

Այս միջոցը հնարավորություն կտա ժամանակ շահել ավելի վստահելի միջոցների դիմելուց առաջ (ճնշող վիրակապ, լարան): Առավել հեշտությամբ դա կարելի է անել այն մասերում, որտեղ զարկերակն անցնում է ոսկրերի վրայով, այսինքն՝ հենարան կլինի, և անոթը կսեղմվի ոսկրի ու մատի արանքում: Առաջին հայացքից մատով սեղմելը թվում է շատ հեշտ: Բայց այն պահանջում է զգալի ջանքեր: Ֆիզիկապես պատրաստված մարդը մատով կարող է արյունատար անոթը սեղմել 20-25 րոպեից ոչ ավելի: Այդ պատճառով անհրաժեշտ է հնարավորին չափ արագ դնել ռետինե լարան կամ լարանը փոխարինել նմանատիպ միջոցով (գոտի, պարան, գործվածք):

Ռետինե լարանը խողովակաձև կամ ժապավենաձև տեսք ունի: Դնելուց առաջ լարանը հարկավոր է ձգել և այդ վիճակում փաթաթել դրվող տեղում: Ջարկերակային արյունահոսության ժամանակ լարանը դրվում է վերքից վերև՝ կենտ ոսկրի վրա: Եթե արյունահոսությունը ստորին ծայրանդամներից է, լարանը դնել ազդրի վրա, իսկ եթե վերին ծայրանդամներից՝ բազկի վրա: Լարանը կամ նրան փոխարինող ժապավենը, գոտին չափից շատ ձգել չի կարելի, որպեսզի վերջույթների նյարդային վերջավորությունները չվնասվեն: Եթե լարանը դնելուց հետո արյունահոսությունը դադարում է, նշանակում է այն ճիշտ է դրված և բավարար չափով ձգված է, իսկ եթե արյունահոսությունը չի դադարում՝ նշանակում է լարանը թույլ է դրված:

Ջարկերակային արյունահոսության ժամանակ չի կարելի լարանը դնել նախաբազկի կամ սրունքի վրա: Այդ դեպքում արյունահոսությունը լրիվ չի դադարի, քանի որ սրունքը և նախաբազուկը կազմված են երկու ոսկրերից, որոնց արանքով անցնում է զարկերակը, և լարանը ձգելիս անոթի վրա լիարժեք ճնշում գործադրել չենք կարող:

Լարանը դնելուց 2-3 րոպե հետո տվյալ վերջույթը գունատվում է (սպիտակում), ապա վերջույթի արյան շրջանառության դադարեցման հետևանքով ստանում է


կապտավուն գույն: Լարանը դնելիս, հատկապես, եթե երկար ճանապարհ եք գնալու, անպայման նշել թղթի վրա ամսաթիվը, ժամը, ում կողմից է դրված և թուղթը դնել լարանի տակ: Լարանը կարելի է կապած պահել 1 - 1,5 ժամ, ձմռանը՝ 0,5 ժամ, որից հետո պետք է հանել, մատով սեղմել արյունահոսող անոթի վրա այնքան ժամանակ, մինչև վերջույթը ստանա իր բնական գույնը: Հետո նորից կապել լարանը, բայց այս անգամ նախկին կապած տեղից քիչ վերև: Լարանի օգտագործումը ցուցված է զարկերակային արյունահոսության ժամանակ:

Երակային արյունահոսություն:


Երակային արյունը, ի տարբերություն զարկերակայինի, մուգ կարմիր, բալի գույն ունի: Մուգ գույնը պայմանավորված է ավելի քիչ թթվածնի և ավելի շատ ածխաթթու գազի առկայությամբ: Այն վնասված անոթից հոսում է դանդաղ, առանց ցայքերի (պուլսացիայի): Երակային արյունահոսությունը դադարեցնելու նպատակով, ի տարբերություն զարկերակային արյունահոսության, լարան կարելի է չօգտագործել: Այս դեպքում արյունահոսությունը կարելի է դադարեցնել արյունահոսող վերքի վրա ճնշող վիրակապ դնելով և վերջույթը կրծքավանդակի մակարդակից վեր բարձրացնելով:

Մազանոթային արյունահոսություն առաջանում է ամենամանր անոթների՝ մազանոթների վնասվելուց: Այս դեպքում արյունը շատ դանդաղ հոսում է ամբողջ վերքի վրայով: Այս տիպի արյունահոսությունը դադարեցնելու համար բավական է վերքին դնել սեղմող վիրակապ: Քանի որ մազանոթները բարակ են, արյունը շուտ է մակարդվում:

Քթային արյունահոսություն կարող է առաջանալ քթի փափուկ հյուսվածքների, միջնապատի վնասվածքների և տարբեր հիվանդությունների ժամանակ: Որպեսզի արյունահոսությունը դադարի, հարկավոր է քթի հիմքին դնել սառը թրջոցներ: Քթանցքներին դնել բամբակի կամ մառլյայի տամպոններ՝ թունդ պատրաստված աղաջրով:



Զարկերակների սեղմման կետերը



Քթային արյունահոսություն



Հիշի՛ր

1. *Չի՛ կարելի* արյունահոսող վերքին լարան դնելիս լարանը կամ նրան փոխարինող ժապավենը, գոտին չափից դուրս ձգել:
2. Ջարկերակային արյունահոսության ժամանակ լարանը նախաբազկին կամ սրունքին դնել չի՛ կարելի: Լարանը պետք է դնել վերքից վերև՝ կենտ ոսկրի վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է վերքը:
2. Ինչպիսի՞ վերքեր գիտեք:
3. Արյունահոսության ի՞նչ տեսակներ կան:
4. Ինչպե՞ս տարբերակել երակային արյունահոսությունը զարկերակայինից:
5. Արյունահոսության ժամանակավոր դադարեցման ինչպիսի՞ մեթոդներ գիտեք:
6. Որտե՞ղ և ինչպե՞ս պետք է դնել լարանը զարկերակային արյունահոսությունների ժամանակ:
7. Յույց տվե՛ք արյունահոսության դադարեցման կետերը միմյանց վրա:
8. Փորձե՛ք դնել ճիշտ վիրակապ կարծեցյալ վերքի վրա:
9. Միմյանց վրա փորձեք դնել լարան կարծեցյալ վերքի դեպքում:

Շոկ, շոկի տեսակները: Առաջին բուժօգնություն

Անկախ այն բանից, թե շոկի որ տեսակն է (վնասվածքային, կարդիոգեն, այրվածքային, ինֆեկցիոն և այլն), **շոկերն** ունեն մեկ ընդհանուր ու վտանգավոր ախտանիշ. դա արյան շրջանառության սուր խանգարումն է, որի հետևանքով որոշ օրգան-համակարգերը զրկվում են անհրաժեշտ քանակության արյան մատակարարումից՝ առաջացնելով նրանց գործունեության սուր խանգարումներ: Դա երբեմն հանգեցնում է այնպիսի ծայրահեղ վիճակի, որ օրգանիզմը չի կարող երկար գոյատևել: Այդ պայմաններում, եթե ձեռք չառնվեն անհրաժեշտ և համապատասխան միջոցներ, ապա հիվանդը կամ տուժածը կարող է մահանալ:

Շոկերը լինում են՝ վնասվածքային, կարդիոգեն, անաֆիլակտիկ և այրվածքային:

Վնասվածքային շոկ: Սա սուր զարգացող և կյանքին վտանգ սպառնացող մի վիճակ է, որն առաջանում է ծանր մեխանիկական վնասվածքի ազդեցությունից: Շոկի առաջացմանը հիմնականում նպաստում են ցավը և արյան կորուստը: Վնասվածքային շոկի սկզբնական շրջանում հիվանդները խիստ անհանգիստ են, շրջապատի հետ հաճախ դժվար են կոնտակտի մեջ մտնում, բղավում են, կատարում անկանոն շարժումներ: Սա գրգռման փուլն է: Ընկճման փուլում, ընդհակառակը, տուժածները կարծես թե անշարժ են, շրջապատի նկատմամբ՝ անտարբեր: Նրանց դեմքը գունատ է, մարմինը պատված սառը քրտինքով, հայացքը հառած մի կետի: Հիվանդն օգնություն չի կանչում, հարցերին չի պատասխանում կամ պատասխանում է հազիվ լսելի շուկով, պուլսը թեւանման է, արյան ճնշումը՝ ընկած, շնչառությունը՝ հազիվ նշմարելի:

Առաջին անհետաձգելի **օգնությունը**՝

- արյունահոսությունը դադարեցնել ժամանակավոր մեթոդներով (ճնշող կապ, լարան, զարկերակի մատնային սեղմում վերքից վերև),
- կոտրվածքների ժամանակ կատարել ծայրանդամների անշարժացում,
- կանչել շտապ բուժօգնություն կամ տուժածին տանել մոտակա հիվանդանոց:

Կարդիոգեն շոկը զարգանում է սրտամկանի և նրա փականային ապարատի հիվանդությունների ժամանակ, որոնք առաջացնում են սրտամկանի կծկողական ֆունկցիայի խիստ անկում, որից և արյան զարկերակային ճնշումն ընկնում է: Օրգան-համակարգերը զրկվում են անհրաժեշտ քանակությամբ արյան մատակարարումից: Այդպիսի հիվանդություններից է առաջին հերթին սրտամկանի սուր ինֆարկտը, զանազան սրտի արատներ, սրտամկանի այլ բնույթի ախտահարումներ (ինֆեկցիաներ, տոքսիկներ): Այդպիսի հիվանդություններով տառապողները չպետք է ծառայեն:

Առաջին օգնությունը: Հիվանդին պառկեցնել, տալ թթվածին: Եթե կարդիոգեն շոկը առաջացել է սրտամկանի ինֆարկտի ֆոնի վրա, որը հաճախ ընթանում է ցավային ախտանիշով, ապա ցավազրկել ձեռքի տակ ունեցած ցավազրկող դեղամիջոցներով՝ հաբերով, սրսկման ձևով՝ նախօրոք ահազանգելով շտապ բուժօգնություն:

Անաֆիլակտիկ շոկ: Դա սուր ընթացող ալերգիկ ռեակցիա է: Վերջինս կարող է առաջանալ որոշ տեսակի սննդամթերքներից, դեղամիջոցներից, ինչպես նաև միջատների թույնից (մեղու, վայրի մեղու): Վերոհիշյալ նյութերը ալերգեններ են տվյալ օրգանիզմի համար, որում զարգացել է անաֆիլակտիկ շոկը: Նման հիվանդները հանկարծակի ունենում են դող, սարսուռ, պատվում են առատ սառը քրտինքով, մաշկը կարմրում, արյան ճնշումը կտրուկ ընկնում է, առաջանում է շնչափնդություն բրոնխների սպազմի կամ կոկորդի սուր ալերգիկ այտուցի հետևանքով: Մաշկի վրա առաջանում է եղնջացան (մոլաքոր):

Առաջին օգնությունը: Հիվանդին տալ հորիզոնական դիրք, թթվածին: Եթե դա սննդի հետ է կապված, ապա կատարել ստամոքսի լվացում, իսկ եթե խայթի հետ՝ ապա խայթը հանել և այդ շրջանում դնել սառը թրջոց: Բոլոր դեպքերում պետք է հրավիրել բժիշկ՝ առաջին հերթին ցույց տալով նախաբժշկական օգնություն:

Այրվածքային շոկն առաջանում է մեծ մակերես ունեցող խոր այրվածքների ժամանակ: Այս շոկի առաջացման գործում մեծ դեր են խաղում ցավը, այրվածքային մակերեսից օրգանիզմի կորցրած հեղուկը (որը հանգեցնում է օրգանիզմի ջրազրկման) և, վերջապես, այդ մակերեսից արյան մեջ ներծծված քայքայման նյութերը:

Առաջին օգնությունը: Ցավազրկել հնարավոր ցավազրկիչ միջոցներով (նովոկաինային թրջոցներ այրվածքի մակերեսին, առաջին աստիճանի այրվածքների ժամանակ՝ սառը թրջոցներ), ցավազրկող դեղամիջոցներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է շոկը:
2. Շոկի ի՞նչ տեսակներ գիտեք:
3. Ինչպիսի՞ օգնություն պետք է ցույց տալ շոկի մեջ գտնվող հիվանդին:

Պայմանական նշաններ

	Գնդի հրամանատար		Ջրկի հրամանատար ՄԳ՝ մեքենայի հրամանատար, ՏԳ՝ ջանկի հրամանատար	
	Գումարակի հրամանատար		ՆՇՕ	Նշանառու օդերևոն
	Վաճառի հրամանատար		ԱՀ	Ավագ հրաձիգ
	Վաճառի հրամանատար		Դ	Դիմումակալ
	Վաճառի հրամանատարի սեղակալ		Գ	Գնդացրորդ
	Վաճառի հրամանատարի սեղակալ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով		Ն	Նոնականետորդ
	ԱՅՏԱԳ		ՆՕ	Նոնականետորդի օգնական
	Վաճառի ավագ սեխնիկ		Հ	Հրաձիգ
	Վաճառի ավագ		Վ	Վարորդ, ՄՎ՝ մեխանիկ-վարորդ
	Վաճառի սանիտար-հրահանգիչ			Ջրահափոխարդիչ
	Դասակի հրամանատար			Հետևակի մարտական մեքենա
				Տանկ
				Ավտոմեքենա



Բնակավայրեր 1:25000
և 1:50000 Մ
փառագների վրա



Բնակելի և ոչ բնակելի
կառույցներ



Գործարանի ծխնեխույզ



Գործարաններ և
ֆաբրիկաներ



Փորվածներ,
հորատանցքեր և
թունելներ



Էլեկտրակայաններ




Ածխահանքի
շինություններ



Չուլարձաններ,
կոթողներ



Եկեղեցիներ



Ռադիո և
հեռուստահաղորդման
կայաններ



Գեոդեզիական կետ



Ջրաղացներ



Օդանավակայաններ







Գերեզմանոց



Առանձին փար



Քարակույտ

	Երկգիծ երկաթուղի և կայան		Ջրագծի ցուցիչ
	Ավտոմայրուղի 8 մ լայնություն, 2-ուղիների հանակը, Ա -ասֆալտ		Սլաքը ցույց է տալիս հոսանքի ուղղությունը
	Խճուղի		Պեշի և ջրանցքի բնութագիրը. 19.2 մ լայնությունը, 1.2 մ խորությունը, 7 հասակի բնույթը
	Սայլուղի		Կամուրջ. շինանյութ բեռոն, երկարություն 370 մ, լայնություն 10 մ բեռնա- սարողություն 60 t
	Դաշտային և անառային ճանապարհներ		Պատվար. Հողե, երկարություն 20.3 մ, լայնություն 8 մ
	Արահեսներ և մեղ կամուրջներ		Խառը անտառ. 20 մ ծառերի միջին բարձրությամբ, 25 սմ ծառաբնի հաստությամբ, 5 մ ծառերի միջև հեռավորությամբ
	Կառի գծեր		
	Էլեկտրահաղորդիչ գծեր		
	Պեշեր և վտակներ		
	Ջրանցքներ և առուներ		Մրգասու այգիներ
	Աղբյուրներ		Խաղողի այգիներ
	Հիմնական հորիզոնականներ		Մարգագետին
	Հորիզոնականի բարձրությունը՝ 200 մ և լանջի թեփության ցուցիչը		
	Բարձրության միջ		Կողմնորոշիչ նշանակություն ունեցող մենավոր ծառ
	Ձադիթափ. բարձրությունը՝ 21 մ		

Ռազմական տերմինների համառոտ բառացանկ

Ա

Ագույց (կցորդիչ) - муфта
 Ականանետ - миномет
 Ականանետային մարտկոց - минометная батарея
 Ականոց - втулка
 Ակոս - нарез
 Ակոսափող - нарезной ствол
 Ամրաշինական կառույց (ամրակառույց) - фортификационное сооружение
 Ամրացված շրջան - укрепленный район
 Անդրադարձիչ - отражатель
 Անընդիսատ կրակ - непрерывный огонь
 Անձնակազմ - 1. личный состав, 2. экипаж
 Անձնախումբ - команда
 Անմիջական պետ - непосредственный начальник
 Անրիկ - хомутик
 Անրիկի մոլակ - защелка хомутика
 Անցարան - пропуск
 Անցագիր - пропуск
 Ապահովիչ - предохранитель
 Ապաժավարում - свертывание
 Ապաժավարում մարտակարգից նախամարտակարգի - свертывание из боевого порядка в предбоевой
 Աջակցող ուժեր - поддерживающие силы
 Առաջանշանառում - упреждение
 Առաջապահ - авангард
 Առաջապահ դիրք - передовая позиция
 Առաջապահ ջոկատ - передовой от-

ряд

Առաջնահերթ խնդիր - ближайшая задача
 Առավոտյան ստուգում - утренний осмотр
 Առջևի եզր (զիծ) - передний край
 Ասպատակում - налет
 Ավերիչ կրակ - разрушающий огонь
 Ավտոմատ - автомат
 Ատրճանակային բռնակ - пистолетная рукоятка
 Արկ - 1. снаряд, 2. выстрел
 Արձակում գործադիր տարածքից - увольнение из расположения части

Բ

Բալիստիկ հրթիռ - балистическая ракета
 Բեկորային նռնակ - осколочная граната
 Բլինդաժ - блиндаж
 Բոցավառիչ - воспламенитель
 Բռնկիչ - запал
 Բույք - штифт

Գ

Գազախողովակ - газовая трубка
 Գազախույց - газовая камера
 Գազամխոց - газовый поршень
 Գաղտնալսում - подслушивание
 Գաղտնապահակ (գաղտնաջոկատ) - секрет
 Գամասեղ - шпилька
 Գետնամերձ հետագիծ - настильная траектория
 Գերաբեկիչ - перелет
 Գերճշգրիտ զենք - высокоточное оружие

Գլխամասային դետր - головной до-
зор
Գլխամասային երթային ուղեկալ
(ԳԵՈՒ) - головная походная зас-
тава (ГПЗ)
Գնդակների ցրում - рассеивание пуль
Գնդացրային ջոկ - пулеметное отде-
ление
Գնդի վարչակազմ - управление пол-
ка
Գնդի կառավարում - управление пол-
ком
Գրոհ - атака
Գրոհային խումբ - штурмовая группа
Գրոհի հետմղում - отражение атаки
Գումարտակ - батальон

Դ

Դաշունային կրակ - кинжальный
огонь
Դասակ - взвод
Դարձյակ - цапфа
Դեսանտավորում - десантирование
Դետր - дозор
Դիվիզիա - дивизия
Դիվիզիոն - дивизион
Դիտակետ - наблюдательный пункт

Ե

Ելակետային տվյալներ - исходные
данные
Ելման բնագիծ - исходный рубеж
Ելման կետ - исходный пункт
Ելման շրջան - исходный район
Ելում - выступ
Եռաշարայուն - колонна по три
Երթադադար - привал
Երթակարգ - походный порядок
Երթային պահպանություն - походное
охранение

Երթային քայլ - походный шаг
Երթաշարք - походный строй
Երեկոյան անվանական - вечерняя
поверка
Երկայնակի փորակ (ակոս) - продоль-
ный паз
Երկտողան շարք - двухшереножный
строй
Երկրակեղև - земная кора

Ջ

Ջարկան - ударник
Ջարկանածայր - боек
Ջարկանածգային մեխանիզմ - удар-
но-спусковой механизм
Ջենրի հետհարված - отдача оружия
Ջինվորական ավան - военный горо-
док
Ջինվորական երդում - военная прися-
га
Ջինվորական հարգանքի մատուցում -
отдание воинской почести
Ջինվորական պարետ - военный ко-
мендант
Ջորակոչ - призыв
Ջորահանդես - военный парад
Ջորահավար - мобилизация
Ջորաշարժ - маневр
Ջորաշարժային պաշտպանություն -
маневренная оборона
Ջորավարժարան - полигон
Ջորատեսակ - род войск
Ջորացրում - увольнение
Ջորացրում պահեստազոր - увольне-
ние в запас

Է

Էշելոն - эшелон
Էպիկենտրոն - эпицентр

Էսկարպ - эскарп

Ը

Ընթացապաշար - запас хода

Թ

Թափհանիչ - выколотка

Թաքստոց - укрытие

Թերաթիչք - недолет

Թերակազմ - некомплект

Թիկունքային երթային ուղեկալ - тыловая походная застава

Թիրախ - мишень

Թռիչքային պատրաստություն - летная подготовка

Թև - фланг

Թևանցում - охват

Թևային զորաշարժ - фланговый маневр

Ժ

Ժամանակավոր կրակային դիրքեր - временные огневые позиции

Ժամապահ - часовой

Ի

Ինժեներական ապահովում - инженерное обеспечение

Ինժեներական արգելափակոցներ - инженерные заграждения

Ինժեներասակրային ստորաբաժանում - инженерно-саперное подразделение

Ինքնագնաց հրետանային կայանք - самоходная артиллерийская установка

Ինքնաթոռ - автоспуск

Ինքնաթոռի ուղք - взвод автоспуска

Ինքնօգնություն - самопомощь

Իրադրության գնահատում - оценка обстановки

Լ

Լարափակոց - проволочное заграждение

Լիցք - заряд

Լողացող փոխադրիչ - плавающий транспортер

Լրակազմ - комплект

Լուսացրող գնդակ - трассирующая пуля

Խ

Խաչաձև կրակ - перекрестный огонь

Խափանիչ կրակ - заградительный огонь

Խզակոթ (կոթ) - приклад

Խիտ շարք - сомкнутый строй

Խծում - пакая

Խոզանակ - ершик

Խոչընդոտ - препятствие

Խրամաբջիչ - ячейка

Խրամախորշ - ниша

Խրամատ - окоп

Խրամուղի - траншея

Խուսանավում (խուսավարում) - маневр

Ծ

Ծածկանեղք - перекрытая щель

Ծավալման բնագիծ - рубеж развертывания

Ծավալում - развертывание

Ծավալում երթակարգից նախամարտակարգի - развертывание из походного порядка в предбоевой

Ծավալում նախամարտակարգից մարտակարգի - развертывание из предбоевого порядка в боевой

Ծավալուն շարք - развернутый строй

Ծխածածկույթ - дымовая завеса

Ծխաքողարկում - дымовая маскировка

Շրովի հանդերձանք - носимое снаряжение

Վ

Վանոնակարգ - положение

Վալազոր - гарнизон

Վապուղի - линия связи

Վատաքողական հրաման - исполнительная команда

Վարձադրություն - 1. приказание, 2. распоряжение

Վարձավորման բնագիծ - рубеж регулирования

Վարձավորման կետ - пункт регулирования

Վեղծ առջևի եզր (գիծ) - ложный передний край

Վեղծ դիրքեր - ложные позиции

Վենտրոնացման շրջան - район сосредоточения

Վենտրոնացված կրակ - сосредоточенный огонь

Վողմնորոշիչ - ориентир

Վորձանիչ կրակ - уничтожающий огонь

Վտրվածք - вырез

Վրակային դարան - огневая засада

Վրակային խոցում - огневое поражение

Վրակային նախապատրաստություն - огневая подготовка атаки (наступ.)

Վրակային պատրաստություն - огневая подготовка

Վրակի կառավարում - управление огнем

Վրակի կենտրոնացում - сосредоточение огня

Վրակոց - выстрел

Հ

Հաղորդակցության ուղի - ход сообщения

Համազարկային կրակ - залповый огонь

Համազորային կանոնադրություններ - общевойсковые уставы

Հանդերձավորում - экипировка

Հանդիպական մարտ - встречный бой

Հանկարծակի հարձակում - налет

Հաշվարկ - расчет

Հավասար նշանահատիկ - ровная мушка

Հավասար (հրաման) - равняйся

Հեռավորություն (շարային պատրաստության) - дистанция

Հեռագա խնդիր - дальнейшая задача

Հետագիծ - траектория

Հետադարձ զիպանակ - возвратная пружина

Հետադարձ մեխանիզմ - возвратный механизм

Հետախուզական դարան - разведывательная засада

Հետախուզական դետր - разведывательный дозор

Հետիոտն գրոհ - атака в пешем порядке

Հետքաշում - отход

Հետևակ - пехота

Հետևակային - пехотинец

Հետևակային դասակ - пехотный взвод

Հետևակացման բնագիծ - рубеж спешивания

Հետևակացում - спешивание

Հետևակի մարտական մեքենա (ՀՄՄ)-

боевая машина пехоты (БМП)
 Հիպոկենտրոն - гипоцентр
 Հրագն - стрелковое оружие
 Հրակնատ - 1. амбразура, 2. бойница
 Հրահան - курок
 Հրահանգ - наставление
 Հրածգարան - стрельбище
 Հրաման - 1. команда, 2. приказ
 Հրամանատարական դիտակետ - ко-
 мандно-наблюдательный пункт
 Հրամանատարական կետ - команд-
 ный пункт
 Հրամանատարություն - 1. командова-
 ние, 2. команда
 Հրապատիճ - капсюль
 Հրապատիճ-ճայրիչ - капсюль-дето-
 натор

Ձ

Ձգարանություն - баллистика
 Ձգան - спусковой крючок (курок)
 Ձգանալժակ - спусковой рычаг
 Ձգանիկ - шептало
 Ձեռքի գնդացիր - ручной пулемет
 Ձեռքի նռնակ - ручная граната

Ճ

Ճակատամարտ - сражение
 Ճառագայթային հիվանդություն - луче-
 вая болезнь
 Ճակատային գրոհ - фронтальная
 атака
 Ճեղքում - прорыв

Մ

Մահաբեր ազդեցություն - убойное
 действие
 Մասնակի մշակում - частичн. обра-
 ботка
 Մարտ - бой

Մարտական ապահովում - боевое
 обеспечение
 Մարտական լրակազմ (ՄԼ) - боевой
 комплект (БК)
 Մարտական հերթապահություն - бое-
 вое дежурство
 Մարտական ներդաշնակում - боевое
 слаживание
 Մարտական ուռք - боевой взвод
 Մարտական պատրաստակամություն -
 боевая готовность
 Մարտական պատրաստություն - бое-
 вая подготовка
 Մարտակարգ - боевой порядок
 Մարտապաշար - боевой запас
 Մարտավարական գործարժություն -
 тактическое учение
 Մարտարշավային ջոկատ - рейдовый
 отряд
 Մարտկոց - батарея
 Մարտով հետախուզություն - разведка
 боем
 Մաքրիչ - протирка
 Մենահատ կրակ - одиночный огонь
 Միաշարայուն - колонна по одному
 Միատողան - одношереножный
 Միացնող կցորդիչ - соединительн.
 муфта
 Մխոց - поршень
 Մղակ - защелка
 Միջին դիպման կետ - средняя точка
 попадания
 Միջուկային զենք - ядерное оружие
 Մոտոհրաձգային վաշտ - мотострел-
 ковая рота

Ն

Նախամարտակարգ - предбоевой по-
 рядок

Նախնական հրաման - предварительная команда	Շրջանցող ջոկատ - обходящий отряд
Նահանջ - 1. отход, 2. отступление	Շրջանցում - обход
Նետիչ - выбрасыватель	Շուրջօրյա (օրվա) վերակարգ - суточный наряд
Ներդրակ - вкладыш	
Ներմղիչ - досылатель	Ո
Նմանակում - имитация	Որոնում - поиск
Նշանաբառ - пароль	Որոնողական ջոկատ - поисковый отряд
Նշանագարկ - бой	Որոշման ընդունում - принятие решения
Նշանագարկի կուտակում - кучость боя	
Նշանակետ - цель	Չ
Նշանահատիկ - мушка	Չկառավարվող հրթիռ - неуправляемая ракета
Նշանահատիկի հիմք - основание мушки	Չկառավարվող ռեակտիվ արկ - неуправляемый реактивный снаряд
Նշանահատիկի պահպանակ - предохранитель мушки	
Նշանաձողիկ - прицельная планка	Պ
Նշանառման անկյուն - угол прицеливания	Պահակարաշխում - развод караулов
Նշանառման գիծ - линия прицеливания	Պահակադիր - разводящий
Նշանառման կետ - точка прицеливания	Պահակախմբերի կարգացուցակ - расписание караулов
Նշանառություն - прицеливание	Պահակախմբերի հերթափոխ - смена караулов
Նշանառու կրակ - прицельный огонь	Պահակային կետ - сторожевой пост
Նշանացուցում - целеуказание	Պահակային պահպանություն - сторожевое охранение
Նշանոց - прицел	Պահակային ջոկատ - сторожевой отряд
Նուր շարք - разомкнутый строй	Պահակատուն - караульное помещение
Շ	Պահակետ - пост
Շարային կեցվածք - строевая стойка	Պահակետերի տեղաբաշխման ուղղագիծ - схема расположения постов
Շարային վարժածն - строевой прием	Պահեստային հրամանատարական կետ - запасный командный пункт
Շարային ստուգատես - строевой смотр	
Շարայուն - колонна	
Շարում պարապմունքի համար - развод на занятие	
Շարք - строй	

Պահեստատուփ - магазин
 Պահեստատուփի մղակ - защелка ма-
 газина
 Պահունակ - обойма
 Պահպանակ - предохранитель
 Պահպանություն - охранение
 Պայթուցիկ լիցք - разрывной заряд
 Պայթուցիկ նյութեր - взрывчатые ве-
 щества
 Պաշար - запас
 Պաշտպանական բնագիծ - оборони-
 тельный рубеж
 Պաշտպանական կառույցներ - оборо-
 нительные сооружения
 Պաշտպանական օպերացիա - оборо-
 нительная операция
 Պաշտպանության անհատական մի-
 ջոցներ - индивидуальные сред-
 ства защиты
 Պաշտպանության կայունություն - ус-
 тойчивость обороны
 Պաշտպանության կոլեկտիվ միջոցներ
 - коллективные средства защи-
 ты
 Պաշտպանության հաղթահարում -
 преодоление обороны
 Պաշտպանություն - 1. оборона, 2. за-
 щита
 Պաշտպանություն զանգվածային խոց-
 ման զենքից - защита от оружия
 массового поражения
 Պաշտպանունակություն - оборонос-
 пособность
 Պատասխան - отзыв
 Պատերազմական գործողությունների
 ռազմաբեմ - театр военных
 действий
 Պատասպարման գոտի - полоса прик-
 рытия

Պարեկ - патрульный (патруль)
 Պարեկային ծառայություն - патруль-
 ная служба
 Պարկուճ - гильза
 Պարուրակ - резьба
 Պնդոդակ - гайка
 Պտուտակ - винт

Ջ

Ջոկ - отделение
 Ջոկատ - отряд
 Ջրային արգելափակոցներ - водные
 заграждения
 Ջրային արգելք - водная преграда

Ռ

Ռադիոկապ - радиосвязь
 Ռադիոհեռախոսություն - радиораз-
 ведка
 Ռադիոտեխնիկական զորքեր - радио-
 технические войска
 Ռադիոքողարկում - радиомаскировка
 Ռազմական դրություն - военное поло-
 жение
 Ռազմական հայեցակարգ - военная
 доктрина
 Ռազմական հզորություն - военная
 мощь
 Ռազմական տեխնիկա - военная тех-
 ника
 Ռազմական տեղագրություն - военная
 топография
 Ռազմաճակատ - фронт

Ս

Սակրային զորքեր - саперные войска
 Սակրային ջոկ - саперное отделение
 Սակրավոր - сапер
 Սահաձող - полозок

Սահմանապահ զորքեր - пограничные войска

Սանդղակի բաժանք - деление шкалы

Սանիտարական մշակում - санитарная обработка

Սպառազինության սովորական տեսակներ - обычные виды вооружения

Սպառազինություն - вооружение

Ստորաբաժանում - подразделение

Վ

Վայրէջք - 1. посадка, 2. приземление

Վաշտ - рота

Վառելիքարտւոյալին նյութեր - горючесмазочные материалы

Վարակազերծում - дезинфекция

Վարակված տեղամաս - зараженный участок

Վարժասարք - тренажер

Վերկաց - подъем

Վերջապահ - 1.арьергард, 2. замыкающий

Վերջնագիր - ультиматум

Վճռական գրոհ - штурм

Տ

Տակնոց - поддон

Տանկավտանգ ուղղություն - танкоопасное направление

Տարածություն (շարային պատրաստության) - интервал

Տարբերիչ նշաններ - опознавательные знаки

Տարհանման կետ - эвакуационный пункт

Տարհանում - эвакуация

Տեխնածին աղետ - техногенное бедствие

Տեղաբաշխում - расположение на месте*

Տեղագնում - рекогносцировка

Տեխնիկական ապահովում - техническое обеспечение

Տեխնիկական ապասարկում - техническое обслуживание

Տեղանքի հետախուզում - разведка местности

Տեղանքի պաշտպանական հատկանիշներ - защитные свойства местности

Տեղափակում - локализация

Տեղեկամատյան - формуляр

Տողան - шеренга

Տրամաչափ - калибр

Տրված ուժեր և միջոցներ - приданные силы и средства

Ց

Ցամաքային զորատեսակներ - рода сухопутных войск

Ցամաքային զորքեր - сухопутн. войска

Ու

Ուժերի վերախմբավորում - перегруппировка сил

Ուժերի կենտրոնացում - сосредоточение сил

Ուժերի հարաբերակցություն - соотношение сил

Ուժերի և միջոցների գերազանցություն - превосходство в силах и средствах

*Այս և բազմաթիվ այլ տերմիններ տրված են ոչ թե բառացի թարգմանությամբ, այլ ստեղծված են, ելնելով դրանց ռազմագիտական իմաստից

Ուղեկալ - застава
 Ուղեկցորդ - выводной
 Ուղիղ նշանառություն - прямая навод-
 ка
 Ուղղակի պետ - прямой начальник
 Ուղղապահ - направляющий
 Ուղղորդում - наведение

Փ

Փակ կրակային դիրքեր - закрытые
 огневые позиции
 Փամփշտահան - извлекатель пуль
 Փամփշտանոց - патронник
 Փոխադրովի հանդերձանք - возимое
 снаряжение
 Փոխադրովի ռադիոկայան - возимая
 радиостанция
 Փոխգործողություն - взаимодействие
 Փոխօգնություն - взаимопомощь
 Փոկակալ - антабка
 Փող - ствол
 Փողակալ - цевье
 Փողանցք - канал ствола
 Փողատուփ - ствольная коробка
 Փողի պահպանակ - ствольная нак-
 ладка
 Փուստ - осечка
 Փուստ կրակ - стрельба холостыми
 патронами

Ք


Քառաշարայուն - колонна по четы-
 ре
 Քիմիական ապահովում - химическое
 обеспечение
 Քիմիական զենք - химическое ору-
 жие
 Քիմիական զորքեր - химические
 войска

Քիմիական հետախուզություն - хими-
 ческая разведка
 Քողարկման միջոցներ - маскировоч-
 ные средства
 Քողարկում - маскировка


Օ

Օդային հետախուզություն - воздуш-
 ная разведка
 Օդային մարտ - воздушный бой
 Օդային տագնապ - воздушная трево-
 га
 Օպերատիվ դադար - оперативная па-
 уза
 Օպերատիվ գործարժություն - опера-
 тивное учение
 Օպերատիվ քիկունք - оперативный
 тыл
 Օպերատիվ խումբ - оперативная
 группа
 Օպերատիվ հետախուզություն - опера-
 тивная разведка
 Օպերատիվ պատրաստություն - опе-
 ративная подготовка
 Օպերատիվ քողարկում - оперативная
 маскировка
 Օրապահ - дневальный
 Օրվա կարգացուցակ - распорядок
 дня
 Օրվա վերակարգ (շուրջօրյա վերա-
 կարգ) - суточный наряд

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍՆԵՐ




Արրահամյան Զիվան



Ազնախոր Շառլ



Այվազյան Վիտյա



Գորգիսյան Մովսես



Դեմիրճյան Կարեն




Կրայեյան Թաթուլ



Համբարձումյան Վիկտոր



Մանուկյան Ալեք



Մելքոնյան Մոնթե



Միքայելյան Գեղազնիկ



Պողոսյան Յուրա



Ռիթկով Նիկոլայ



Սարգսյան Վազգեն



Վազգեն Ա Կաթողիկոս



Քրիստոսյան Քրիստ



ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍՆԵՐ



Քաբայան Մամվել



Բալայան Զորի



Բալասանյան Վիտայի



Գասարյան Ժորա



Գրիգորյան Մամվել



Իվանյան Քրիստափոր



Կարապետյան Մամվել



Հակոբյան Մուկիս



Կարապետյան Արշակ



Լոպյան Աշոտ



Լոմոնոսյան Անտորոս



Մկրտչյան Մուկիս



Պոդոպյան Զորի



Սահակյան Մուկիս



Սահակյան Վահագն



Վահրամյան Վահագն



Տիկարովսկիյ Արշակ



Քոչարյան Անտորոս



Օհանյան Մուկիս



Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	3
ԷԶԵՐ ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	
Ֆիդայական շարժում	5
Կամավորական շարժում	7
1918-1920թթ. Հայաստանի առաջին բանակը, նրա կառուցվածքը և նշանակությունը	10
Բանակի կառուցվածքը	10
Մարտական գործողությունները	11
Լեռնահայաստանի	հերոսամարտը,
«Գայլախմբերի» մարտավարությունը	13
Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի կառավարման, աստիճանաբար շխման և կադրերի պատրաստման համակարգը	17
ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	
Ինժեներական արգելափակոցներ: Հակատանկային ականներ	21
Հակահետևակային ականներ: Ականադաշտեր	24
Զինվորի անհատական խրամատ	25
Ականների և պատերազմից մնացած չպայթած զինամթերքի հետ վարվելու կանոնները	27
ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ	
Կրակոցի երևույթը և գնդակի թռիչքը	31
Կրակոցի երևույթը	31
Գնդակի սկզբնական արագություն	32
Հետագծի գոյացում	32
Գնդակի թռիչքի հեռավորություն	32
Գնդակի թափանցող ու մահաբեր գործողություն	33
Ուղիղ կրակոց	34
Պատասպարված, խոցելի և մեռյալ տարածություններ	35
Ավտոմատով կրակ վարելը	35
Անվտանգության կանոնները պարապմունքների ժամանակ	35
Ավտոմատով կրակ վարելու հիմնական դիրքերը	36
Նշանառության և հրաձգության կատարումը անշարժ թիրախների վրա	37
Հրաձգության դադարեցումը	38
ՀՀ ՁՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Զինվորական պատասխանատվության տեսակները	39
Զինվորական հանցագործություններ	40
Զորամասի շուրջօրյա վերակարգ: Վաշտի շուրջօրյա վերակարգը, կազմը և պարտականությունները	43
Վաշտի օրապահի պարտականությունները և տեղի կահավորումը	44

ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ	
Շարային վարժածներն ու շարժումը զենքով	47
Շարային վարժածները զենքով	48
ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
Հեռավորության որոշման եղանակները	52
Հեռավորության որոշումը առարկայի գծային չափսերով, քայլերով, աչքաչափով, լսողությամբ	53
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Ռազմագերիների և քաղաքացիական բնակչության պաշտպանությունը	56
Ռազմագերիների իրավունքները, նրանց հետ վարվելակերպը	57
Քաղաքացիական բնակչության պաշտպանությունը	58
ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
Հարձակման ժամանակակից միջոցներ	62
Միջուկային զենք	62
Քիմիական զենք	64
Կենսաբանական զենք	65
Հարձակման ժամանակակից սովորական զենքեր	66
Խոցման ոչ ավանդական զենքեր	68
Ազդարարման միասնական համակարգ	70
Պաշտպանական կառույցներ	72
ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	
Վիրակապական նյութեր	76
Վիրակապեր	76
Վարակիչ հիվանդություններ	79
Հասկացություն վարակիչ հիվանդությունների մասին	79
Ախտահանում, միջատազերծում և կրծողների ոչնչացում	81
Վնասվածքներ և վերքեր	83
Հասկացություն վնասվածքների և վերքերի մասին	83
Հենաշարժային համակարգի վնասվածքներ	86
Կոտրվածքներ: Անշարժացման տեխնիկան	86
Արյունահոսություն	89
Արտաքին և ներքին արյունահոսություններ, նշանները, առաջին օգնությունը	89
Շոկ, շոկի տեսակները: Առաջին բուժօգնություն	92
Պայմանական նշաններ	94
Ռազմական տերմինների համառոտ բացատրանկ	97
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՄՆԵՐ	106
ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՄՆԵՐ	107
Բովանդակություն	108